

# ՄԱՐԴՈՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա. Մ. Ս. Ա. Գ. Ի. Բ.

№ 2 1895

ՓԵՏՐԻԿՈՒՐ

1895 № 2

ԽՕԹԵՐՈՌԴ ՏԱՐԻ

կրկան

1 ԳԵՕԹԵՇՑ ԼԵՒՈՆ ՏԻԳՐԱՆԵԱՆ	201 Հերման և Գորոթէա (վեպ, շար.):
2 ԾԱՏՈՒՐԵԱՆ, Ա. Է. ՔՍՍՈՆԴՐ . . .	224 Ճշմարտութեան զաղափար (բան.):
3 ՇՈՆԹ . . . . .	225 երազ օրեր (գլշատակարանից):
4 ՆՈՅՆԸ. . . . .	249 Դուն կ'ազօթէիր (բանաստեղծ.):
5 ՓԱՓԱԶԵԱՆՑ, Վ. . . . .	250 Քար ջարդողներ:
6 ԴԵՄԻՒՐՁԵԱՆ, ԴԵՐԵՆԻԿ . . . . .	258 Թող բամառ վիշտը..., Ահա կաթի- լլը..., Մ. Ա.-ին, Սոնէտ (բանաս.):
7 ՄԵՑԱՆ . . . . .	261 Սասուն (շարունակութիւն):
8 ԱՐՍԵՆ, Խ. . . . .	277 Պատասխան չկաչ (բանաստեղծ.):
9 ՏԵՐ-ՄԻՐԱՔԵԱՆ, ՅՈՎՀԱՆՆԵՍ	278 Քաղաքակրթութեան պատմութիւնը ուսուցման գործում (շարունակ.):
10 Լ. Մ. . . . .	285 «Մոռացւած աշխարհ» Ճուղուրեանի,
11 " "	287 «Բարեգործ. դիմակ տակ» Տէր-Գրի- գորեանի:
12 ԱՐԱՄԵԼԻՆԵԱՆՑ, Ա.Ի.ՏԻԹ. . . . .	292 Նիւթեր հաճկական խնդրի նորա- գոյն զարգացման պատմ. համար:
13 «ՀԱՅՐԵՆԻՔ»-ԻՑ. . . . .	305 Պատր. ընտրութիւն. Մ. Խզմիրլեան:
14 ԱՐԱՄԵԼԻՆԵԱՆՑ, Ա.Ի.ՏԻԹ. . . . .	315 Վեցամսեազ ժողովածուն. առիթով:
15 ՍԵՒԵՆՑ, Հ. . . . .	320 Թատրոնի շուրջը:
16 ՄՈՒՐԱԳԵԱՆՑ, Յ. . . . .	323 Ալսալցիս. մի քանի հաչ գիւղերը.
17 ԶԼԵՅԵԱՆ, Ա. . . . .	332 Նամակ Վ. Ագուլիսից:
18 ՓԱՓԱԶԵԱՆՑ, Վ. . . . .	335 Նամակներ Անզլիալից, Ա.
19 ԽՄԲ. . . . .	343 Զանազան լուրիր:

ՏԵՂԵԿԱՏՈՒ և ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ




ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ Մ. Գ. Ա.ՕՏԻԵԱՆՑԻ

Տիպոգրաֆія М. Д. Ротенштейна, Гол. пр., д. № 41.

1895



# ՄԱԿՐՃ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

ԱՄՍԱՓԲՔ

№ 2 1895

ՓԵՏՐԻԱՐ

1895 № 2

ԵՕՐԵՒՈՐԴ ՏԱՐԻ

Թ. Ի. Ֆ. Ս.

ՏՊՈՒՐՈՒ. Մ. Գ. Ա. Խ. Ա. Խ. Ա. Խ. Ա. Խ.

Տիպոգրաֆիя М. Д. Ротиніанца, Гол. пр. д. № 41.

1895

Дозволено цензурою. Тифлисъ, 21 Февраля, 1895 г.

VII ՏԱՐԻ ՝ՄՈՒՐՃՇ՝ ՏԱՐԻ VII

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՀԱՍՏԱԿԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Բ Ի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐԱԹԻՒՆԻՆ. 1895 ԹԻԱԿ. ՀԱՄԱՐ ԲԱՑԻԱՄ 1

«ՄՈՒՐՃ» ամսագիրը 1895 թւականին կը հրատարակւի նոյն ծրագրով և նոյն դիրքով, որպէս և նախկին վեց տարիներում՝ «ՄՈՒՐՃ»-ը, որպէս անցեալում, նոյնպէս և ապագայում կը լրացնդակի՝

- I. Յօդւածներ մեր կեանքի հիմնական պայմանների մասին:
- II. Վէպեր և պատմածքներ:
- III. Ատանաւոր-բանաստեղծութիւններ:
- IV. Նկարագրական-ճամբորդական:
- V. Գիտական հանրամատելի յօդւածներ:
- VI. Հետազոտութիւններ տնտեսական, սոցիալական, պատմական:
- VII. Գրական քննադատութիւն:
- VIII. Գրախօսութիւն նոր լոյս տեսած զբքերի:
- IX. Ժամանակակից Տեսութիւն մեր կեանքի ընթացիկ խնդիրների և այլ յօդւածներ մեր ժամանակակից ներքին կեանքից:
- X. Գառառական նամակներ:
- XI. Թղթակցութիւններ Առւսաստանից և Արտասահմանից:
- XII. Քաղաքական տեսութիւն:
- XIII. Զանազան լուրեր:
- XIV. Յայտարութիւններ և տեղեկատուներ:

«ՄՈՒՐՃԱ-Ի ԳՐԱԿԱՆ ՄԱՍԸ ապահովւած է բազմաթիւ աշխատակիցներով, որոնց կազմը ուժեղանում է նորերի նպաստներով։  
Անցեալ 1894 թւականին աշխատակցել են «ՄՈՒՐՃԱ-ԻՆ  
Հետեւեալ անձերը՝ որոնց անունները դասաւորում՝ ենք  
ըստ աշխատակցութեան հնութեան»։

- 1 Արասիսանեանց, Ա.
- 2 Մանուէլեանց, Լեոն.
- 3 Վարդանեանց, Գր.
- 4 Ծատուրեան, Ալ.
- 5 Միթթարեան, Արշալուս  
(Նոյնը և Արգահատեան)
- 6 Ղազարեան, Երևանդ
- 7 Արծրունի, բժ. Վահան  
(Նոյնը և Ֆելիքս)
- 8 Խամակնեան, Վ.
- 9 Կաւասարդեան, Մկրտ.
- 10 Փափազեան, Վ.
- 11 Վահցեան, Գր.
- 12 Մնացականեան, Գաբր.
- 13 Բաշինջաղեան, Գէորգ
- 14 Մուրագեան, Յակոբ
- 15 Ղարաջեան, Գէորգ
- 16 Աթանասեան, Աշոտ
- 17 Բալաղեան, Սամուէլ
- 18 Զաքարեան, բժ. Թագէոս
- 19 Աղակեան, Ղազարոս
- 20 Վրում
- Բաժանորդ գրւելու համար պէտք է զիմել՝  
Խմբագրատունը—Տիֆլիս, въ редакцію „МУРЧЪ“  
Արտասահմանից—Tiflis, Rédaction „MOURTCH“:  
Կամ մեր գործադրալութիւններին (տես կազմի վերջին երեսը):  
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՒՆ է 10 ռուբլի տարեկան։  
Աւտոցիները և ուսանողները զնարում են 8 ռուբլի։  
ՎՃԱՐԸ կարելի է հատուցանել նաև մաս-մաս՝ 5 ռ. (կամ  
4 ռ.) սկզբում; մնացածը մինչ առաջին կիսամետի  
լրանալը։
- 21 Դաղբաշնան, Յար.
- 22 Յակոբեան, Յակոբ
- 23 Խանզադեան, Խորեն Քահ.
- 24 Աստածատրեանց, Գէորգ
- 25 Աղէլեան, Ա.
- 26 Բահաթրեան, Սարգիս
- 27 Դլամեան, Արտէն Վարդ.
- 28 Մարգանեան, Ֆրիդոն
- 29 Ցէր-Մարտիրոսեան, Միք.
- 30 Յովհաննիսեան, Միք.
- 31 Միրիմանեան, Յար.
- 32 Մելքոնեան, Մ.
- 33 Դուրբախեան, Յովհ.
- 34 Տէրեան, Ստ.
- 35 Սողոմոնեան, Բ.
- 36 Մէդնիկեան, Յովհ.
- 37 Գնունի, Յովհ.
- 38 Տէր Մկրտչեան, Մ.
- 39 Մինասեան, Երև.
- 40 Դեմիրճեան, Դերենիկ
- 41 Բահաթրեան, Լեոն.
- 42 Աէլան

## ՀԵՐՄԱՆ ԵՒ ԴՈՐՈՅԵԱ

ԻՇԽԱՆ ՎՈԼՅՈՎԱՆԴ ՖՈՆ ԳԵՕԹԵԿԻ

Փարզմանութիւն ԲԺ. Ղետն Տիգրանեանցի

(Ծարուհակութիւն <sup>1)</sup>)

Պ Ա Լ Ի Հ Ի Մ Ն Ի Ա 2)

Ա Շ Խ Ա Բ Հ Ա Ք Ա Գ Ա Ք Ա Ց Ի

Վ Ք ա հ ա ն ա ն , դ ե ղ ա գ ո ր ծ լ և տ ա ն ա է ր լ շ ա ր ու ն ա կ ու մ է ի ն ի լ ե ն ց  
խ օս ա կ ց ու թ ի ւ ն ը : ա տ ւ ա կ ա ն ք ա հ ա ն ա ն յ ա ր դ ու թ ե ա մ բ ա ս ե ց , չ ե մ  
հ ա կ ա ւ ա կ ու մ ձ ե զ , զ ի տ ե մ , ո ր մ ա ր դ մ ի շ ա պ է տ ա ք է ձ դ տ ի գ է պ ի  
լ ա ւ լ , և ի ն չ ո վ տ ե ս ո ւ մ է ն ե ք՝ ն ա ձ գ ո ւ մ է զ է պ ի ա մ ե ն ա կ ա -  
տ ա ր ե ա լ լ և հ ա մ ե մ ա տ ա բ ա ր ս ա կ ա ւ է պ տ ո ւ մ ն ո ր ու թ ի ւ ն : Ս ա -  
կ ա ց ն , շ ա տ հ ե ս ո ւ մ ի գ ն ա ք , լ ն ո ւ թ ի ւ ն ը տ ե լ է մ ե զ ծ ե ր ու թ ե ա ն  
ժ ա մ ա ն ա կ հ ա ն դ ս տ ո ւ թ ե ա ն պ ա հ ա ն չ զ գ ա լ լ և ս ո վ ո ր ու թ ի ւ ն ն ե ր ի  
հ ա մ ա ձ ա յ ն · ա մ լ ր ու ս ո ւ ի ց ա ն կ ու թ ի ւ ն ը : Ա մ ե ն մ ի գ ր ու թ ի ւ ն լ ա ւ է ,  
կ ր բ բ ն ա կ ա ն և խ ե լ ա ց ի է : Մ ա ր դ շ ա տ բ ա ն և ց ա ն կ ա ն ո ւ մ ;  
բ ա յ ց ն բ ա ն շ ա տ ք ի չ է հ ա ր կ ա ւ ո ր : Կ ա ր ճ ե ն օ ր ե ր լ և ս ա հ -

1) Տես «Մուրճ» 1895 թ. № 4.

2) Պ ո լ ի հ ի մ ի տ , ա լ ս ի ն ք ն օ ր հ ո ւ թ ե ա մ բ ա ռ ա ս , Ա ա ք ն ա ր ի հ ո ւ թ ե ա մ ի ն  
է , ն ե ր կ ա կ ա ց ու ց ի չ է ք ն ա ր ե ր զ ա կ ա ն բ ա ն ա ս տ ո ւ թ ե ա ն կ ա մ ձ ա ր ս ա ր ու -  
խ օ ս ու թ ե ա ն : Ծ ա ն : Ծ ա ր զ մ .

մանափակ է մահկանացուի ճակատագիրը։ Ես չեմ պախարակում այն մարզուն, որ գործունեալ է և վաստակի համար անխռնջութեամբ և անվեհերութեամբ փութաջան անցնում է ծովերով և աշխարհի բոլոր ճանապարհներով ու ժողովում է հարստութիւն իր և իր ընտանեաց համար, բայց արժանաւոր է նոյնպէս այն խաղաղասէր քաղաքացին, որ հանգիստ քայլերով սպատում է իր ծնողներից ժառանգած կայքի շուրջը և ժամանակին վարում ցանում է հողը։ Հողն ամեն տարի նրա համար չի փոխակերպում, տնկած ծառն յանկարծ չի մեծանում և առատ ծաղկում, ոչ, մարդ պարտաւոր է համբերել, նրան հարկաւոր է մաքուր, միշտ անփոփոխ, խաղաղ բնաւորութիւն և ուղղամոռութիւն, որովհետև շատ սերմ չի յանձնում պաղաքեր հողին և անկարող է լինում շատ անասուններ հոգատարութեամբ մեծացնել, սակայն նրա միակ ցանկութիւնն է վաստակը։ Երջանիկ է այն մարդը, որին բնութիւնը տեել է մի այզտեսակ ներփաշնակ բնաւորութիւն։ Նա մեզ ամենիս կերակրում է։ Երանի փոքր քաղաքի բնակչին, որ աշխատում է որպէս գիւղացի և որպէս քաղաքացի, նրա վրաց չի ծանրանում մին ճնշումը, որ սահմանափակում է գիւղացուն։ Նրան չեն շփոթում բազմապահանջ քաղաքացիների հոգսերը, մանաւանդ որոնց կանացք և օրիորդները մի կողմից միշտ աշխատում են հետեւ հարուստներին, իսկ միւս կողմից չեն կարողանում նմանել բարձրագոյն դասին։ Ուրեմն, միշտ օրհնեցէք ձեր որդու խաղաղ աշխատասիրութիւնը և նրա համամիտ աղջկան, որ նա իր համար հարսնացու է ընարել։

Երբ քահանան այսպէս խօսում էր, մայրը ներս մտաւ որդու ձեռքը բռնած և կանգնացրեց հօր առջև։ Ամուսինս, ասեց նա, քանի, քանի անդամ խօսել ենք միեւնանց հետ և ցանկացել ենք այն օրւան հասնել, երբ Հերմանը կ'ընտրի հարսնացու և կ'ուրախացնի մեզ։ Ինչպէս յատուկ է ձնողներին, մենք շատ անգամ նշանակել ենք նրա համար այս կամ այն աղջիկը։ Ահա, այդ օրը հասել է, երկինքն ինքն է ընտրել և ուղարկել հարսին դէպի մեզ, մեր որդին սրտով ընտրել է։ Զէ որ մենք միշտ ասել ենք, թէ ինքը պէտք է ընտրի։ Դու ինք էիր յանկանում, որ վաս սիրով սիրի մի աղջիկ։ Ահա, այդ ժամը հասել է։ Այս, նա զզացել է սէրը և

ընտրել է որպէս տղամարդ: Այդ այն օտար աղջիկն է, որին նա հանդիպել էր: Համաձայնիր, հակառակ գէպէռում որդիդ երդւել է ամուրի մնալ:

Հայր, ասեց որդին, համաձայնիր, իմ սիրառ անարառ սիրով սիրել և ընտրել է, նա կը լինի քեզ արժանի դուսար:

Հայրը լուս էր: Քահանան յանկարծ տեղից բարձրացաւ և այսպէս խօսեց. մեկ րոպէն է որոշում մարդուս ամբողջ կեանքը և բախտը, որովհետեւ երկար խորհրդակցելուց յետոյ էլ այնուամենացնիւ. ամեն մի վճիռ մէկ րոպէի գործ է լինում և միայն խելօք մարդն ըմբռնում է այն, ինչ որ լաւ է: Ընարողութեան ժամանակ շատ փառնդաւոր է երկար մտածել զանազան պարագաների մասին և զգացմունքը շփոթել: Հերմանը մաքուր տղայ է, ես նրան ճանաշում եմ երեխայ ժամանակւոնից, նա մանուկ հասակից մի ընկել զանազան բաների յետելից: Ինչ որ նա երբ և իցէ ցանկացել է, նրան համապատասխան է եղել և մինչեւ այսօր էլ ացդպէս է մնացել: Մի վախեցէք և մի' զարմացէք, որ յանկարծ կատարւում է այն, ինչ որ գուք երկար ժամանակ փափագում էիք: Ի հարկէ, այդ գործն այժմ այնպէս չէ, ինչպէս որ գուք միշտ երեւակայել էք: Մեր ցանկութիւնները քօղարկում են մեզանից նաև ցանկալին: Ողորմութիւնը բարձրիցն է իջնում իր սեպհական կերպարանքով: Երեսներդ մի' դարձնէք այն աղջկանից, որ առաջին անգամ շարժել է, ձեր սիրելի, բարի և խելացի որդու սիրով: Երջանիկ է այն մարդը, որին առաջին անգամ սիրած աղջիկն անձնառու է լինում և ամենաքաղցր տենչանքը նրա սիրաը ծածուկ չէ մաշում: Այս, ես տեսնում եմ, որ նրա ճակատագիրը որոշած է: Վիճակի ծշմարիտ կոչումն երիտասարդին անմիջապէս աղամարդ է դարձնում: Նրան չի կարելի յետ կանգնեցնել, ես վախենում եմ, որ արգելք դառնանք և այն ժամանակ անվիշտար կեանք վարելով կանցնեն նրա աւենալաւ տարիները:

Դեղագործը, որ այդ միջոցին խօսքը բերանին անհամբերութեամբ սպասում էր՝ ծանրութեամբ ասեց. այս անգամն էլ, թոյտ ու էք ինձ ցոյց տալ ձեզ ծշմարիտ ծանապարհը: Կամաց գնա՞ա, շնորհ գնա՞ա, այս էր Օգոստոս կայսեր սիրելի առածը: Ես ուրախութեամբ պատրաստ եմ ծառաց' լիմ սիրելի զրացիներին, իմ

Նուաստիս խելքը գործ ածել ձեր օգոսի համար: Երիտասարդներին պէտք է առաջնորդել: Թոյլ առեք ինձ, որ գնամի ես կամենում եմ այդ աղջկան փորձել, նրա մասին աեղեկութիւն ժողովել այն հառարակութիւնից՝ ուր նա ապրում է, որ նրան ճանաշում՝ է: Ինձ հեշտութեամբ շի կարելի խաբել, ես կարող եմ ամեն մի խօսք գնահատել:

Հերման արագութեամբ վրայ բերեց. ես համաձայն եմ, զրացք. գնացեք և աեղեկութիւն ժողովեցէք: Միայն ես կը ցանկացի որ մեր պատեհի քահանան էլ ձեզ հետ լինէր: Ձեզ նման երկու ազնիւ մարդիկ անխոտասփելի վկաներ կարող են լինել Ո՛հ, հայր, նա այնպիսի աղջիկ չէ, նա չի փախել այս կողմերն արկածներ որոնելու, երիտասարդներին որոդացթի մէջ ցցելու և անփորձներին խաբելու համար. ոչ: Կորսատաքեր պատերազմը, որ աշխարհը քանդեց և շատ շինութիւններ տալին ու վրայ արեց՝ հալածեց և այդ խեղճ աղջրիան: Միթէ մեծաշուք, վեհածին մարդիկ չեն լընկնում թշւառութեան մէջ: Խշունները ծպուած փախչում են և թագաւորներն աքսորում: Ա'խ, հէնց ացդպէս էլ նրա հետ է պատահել նրան բաժանել են իր հարազաններից, աքսորել են իր բնիկ երկրեց և նա, մոռանալով իր գժբախտութիւնը, ուրիշներին է օգնութիւն տալիս, իսկ ինքն անօդնական է: Առսկալի թշւառութիւն և տառապանք է տարածւել աշխարհիս վրայ: Միթէ այս գժբազդ ժամանակներում չպէտք է բախտս բացւի, որ ես, նշանածիս, իմ վստահելի կնոջս զբկում, պատերազմը ցիշելով ուրախանամ, ինչ պէս դուք ուրախանում էք հրդեհն ցիշելով:

Հայրը նրան պատասխանեց. որդին, ի՞նչպէս բացւել է լիզուդի որ բերանումդ երկար տարիներ կարծես թէ պապանձեւել էր և միայն ստիպմամբ էր շարժւում: Աւրեմն այսօր պէտք է լսեմ այն սպառնալի խօսքերը, որ որդիքը պատրաստում են իրենց հօր համար և պէտք է տեսնեմ թէ ինչպէս որդու անզուսպ ցանկութիւններն, եթէ հօր կամ ամուսնու դէմ են, մայրն ուրախութեամբ և մեղմութեամբ հովանաւորում է և ամեն մի զրացի նրան համակրում է: Ձեզ բոլորիդ չեմ կամենում հակառակել, անօգուտ է, որովհետեւ ես առաջուց տեսնումեմ հակառակութիւն և արտասուք Գնացէք, փորձեցէք և յանուն Աստուծոյ իմ տուն բերէք աղջկան հակառակ գէպքում թող որդիս մոռանաց նրան:

Հայր, ուրախութեամբ բացականչեց որդին, ուրեմն մինչեւ երեկոյ ընդունած կը լինէք Զեր պատւական աղջկան, որպէս մի մարդ, որ ունի իր մէջ իմաստուն հոգի:

Ես յոյս ունիմ, որ նա էլ երջանիկ կը լինի և ինձանից յաւիտեան շնորհակալ, ես Զեր կը տամ նրան օրպէս հայր և մայր և գուք էլ կ'ունենաք խոհական զաւակներ: Բայց ես ինչու եմ սպասում, իսկոյն ձիերը լծեմ և տանեմ՝ մեր բարեկամներին սիրածիս մօտ և նրանց իմաստութեանը յանձնեմ հարց ու փորձը: Երդւում եմ, որ կը վարւեմ նրանց վճռին համաձայն և աղջկան չեմ տեսնի, մինչեւ որ նա իմը չլինի:

Նա գուրս գնաց, իսկ միացածները ծանրութեամբ շարունակում էին դատել այդ կարես որ գործի մասին:

Հէրմանը շատապով գնաց գոմը, ուր գեղեցիկ յովատակները հանդարս կանգնած վարսակ և չոր խոտ էին ուտում, որ հնձւած էր ամենալաւ մարգագետնից: Նա շրւտով սպիտակ սանձերը բերանները տեղ, անցկացրեց փոկերն արծաթագօծ ճարմանգներից, գցեց երկայն ու լայն երատանակները, ձիերին դուրս բերեց բազը, ուր ծառան գուրս էր քաշել կառքը, լծեց ձիերին և, կառքի մէջ նստած, մտրակը ձեռքին դուրս եկաւ տանից:

Քահանան և զեղագործը նստեցին և կառքը սալայտակի գրաշով արագութեամբ սլանալով անցաւ քաղաքի պարիսպների և մաքրագարդ աշտարակների մօտով:

Հէրմանը կառքը թռցնում էր խճուզու վրայով առանց ուշագրութիւն գարձնելու զառիվերների և զաւիվայրների վրայ: Երբ նա տեսաւ զիւզի աշտարակը և շրջականների պարտեզապատ աները՝ ձիերը կանգնացրեց:

Գիւզի մօտ կար մի կանաչազարդ արօտ, որին բարձրահասակ գարեւոր լորենիք հովանաւորում էին իրենց սուերաշատ ձիւղերով: Այդ տեղը ծառալում էր որպէս զրոսավացը գիւղացիների և մօտակայ քաղաքացիների համար: Այդ ծառերի տակ գտնուում էր մի աղբիւր: Սանդուղքներն իջնելով մարդ համում էր քարէ նստարաններով շրջապատած այդ աղբիւրը, որի կենսասու պարզ ջուրը բղիսում էր ցածրակառոց քարաշարի միջից: Հէրմանը կանգնեցնելով ձիերը այդ սուերատու ծառերի տակ՝ տակ աղբ: Իչէք, բարե-

կամներս, և գնացէք ու տեղեկացէք, արդեօք արժանի՞ է ինձ այն աղջիկը, որին ես ցանկանում եմ հարսնախօսել, թէսկես գիտեմ, որ մի առանձին նոր բան չպէտքէ կարողանաք յայտնել ինձ:

Եթէ զործը միայն ես կատարելու լինէի՝ շտապով կը գնացի այդ գիւղը և կարճ խօսակցութիւնից յետոյ քաղցրաբարոյ աղջիկը կ'որոշէր իմ ճակատագիրը: Աղջկանց մէջ դուք կը ճանաչէք նրան, որովհետեւ գեղեցկութեամբ հազիւ թէ մէկը նրան նման լինի: Բայց աւելորդ չի լինի, եթէ յայտնեմ ձեզ նրա մաքրազարդ հազուսոփ նշանները. ժապաւէններով պնդած կարմիր կրծկալլ բարձրացնում է նրա լի կուրծքը, որի վերևի մասը կազմում է կոկլիկ սև շաղկիկը, իսկ զրա գեղաշար ծալքերը վայելլութեամբ պատում են նրա բոլորակ բուկը, նրա սիրուն գլուխը ոչ մի զարդ չի կրում; ճոխ հիւսերը բազմապատիկ փաթաթած են արծաթէ գնասանդների շուրջը և կրծկալից վայր է իջնում բազմածալ կապոյտ զգեստը, որ ճեմելիս պատում է նրա վայելու կազմւածքը: Բացի այդ, կամենում եմ ասել և յայտնապէս ինպրել, որ աղջկայ հետ չխօսէք և ցոյց շտաք նրան ձեր գիտաւորութիւնը, այլ ուրիշներին հարցըէք նրա մասին և տեսէք թէ ի՞նչ կ'ասեն: Երբ հօրս ու մօրս հանգստացնելու չափ բաւարար տեղեկութիւն ստացած լինիք, եկէք այսաեղ և յետոյ մտածենք թէ ի՞նչ պէտքէ անենք: Ճանապարհին, գալիս մտածելով՝ այդ միջոցը լաւ համարեցի: Սրանից յետոյ Հերմանի բարեկամները գնացին գէպի գիւղը, ուր այգիներում, շտեմարաններում ու աներում մարդկանց բազմութիւնը եռում էր և կառքերով լցւած էր լայն փողոցը: Տպամարդիկ տեղաւորում էին բառանչող անասուններին և ձիերին կառքերի մօտ, կանաչք շտապում էին չորացնել լւացքը ցանկերի վրայ, իսկ երեխաները զւարձանալով խաղում էին վտակի ջրի հետ: Մեր այդ երկու քննիչները մտնելով կառքերի, մարդկանց և անասունների մէջ՝ նայում էին աջ և ձախ, որ գոնեն այն աղջկան, բայց տեսած աղջիկներից ոչ մէկը նման չէր գեղեցիկ օրիորդին: Բազմութիւնը խտան ւմ էր: Մէկ տեղ, կառքերի մօտ աղամարդիկ վիճում էին, կանաչք էլ աղաղակելով խառնւել էին նրանց վէճի մէջ: Մի ծերունի ծանր քայլերով մօտեցաւ նրանց, նոյն բոսէին աղաղակները նւազեցին: Նա հայրաբար հրամացից

լոել ու ասեց. մի՞թէ զժբախտութիւնը զեռ մեզ խելքի չէ բերել, որ վերջապէս հատկանալ կարողանանք, թէ պէտք է միմեանց հետ հաշտ ապրենք, մինչև անդամ եթէ մի քանիսը ձեզանից չեն կարողանում չափաւորել իրենց կրքերը։ Արդարեւ, բաղդաւորն անհաշտ է։ Կրած վշտերը կը սովորեցնեն ձեզ արգեօք, որ եղբայրներն առաջւաց նման չպէտքէ կւաեն միմեանց հետ։ Աշխատեցէք ստար երկրում՝ յարմարւել միմեանց հետ և բաժանեցէք միմեանց մէջ ձեր ունեցածը, որ ոզարմութեան արժանանաք։ Այս խօսքերից բոլորն էլ լւեցին և հանդարաւելով սկսեցին հաշտութեամբ կարգաւորել անասունները և կառքեր։

Քահանան լսելով ծերունու խօսքերը և տեսնելով այդ ստար գատաւորի հանդարտ և խելացի վարմունքը, մօտեցաւ նրան և ասեց հետեւեալ նշանաւոր խօսքերը. հայր, երբ ժողովուրդն երջանիկ օրերում ապրում է լայնատարած հողերի արգիւնքով, որ ամսէ սմիս և տարեցտարի կրինեւում է, այն ժամանակ ամեն բան կանոնաւոր առաջ է ընթանում և ամեն մարդ իրեն խելօք և պատաւոր է համարում, բոլորն էլ խաղաղ ապրում են միմեանց հետ և խելացի մարդու վրայ նայում են ինչպէս սովորական մահկանացուի վրայ, որովհետև ամեն գործ էլ խաղաղութեամբ է ընթանում՝ ինչպէս հարկն է։ Բայց երբ զժբախտութիւնը խանդարում է կեանքի սովորական ընթացքը, քանդում է տները, տակն ու վրայ է անում այդիներն ու ցանքերը, արտաքսում է ացր և կնոջ իրենց հանգիստ բնակարանից, օր և գիշեր շփոթում է նրանց, ախ, միայն այն ժամանակ պառաւում են խելացի մարդուն և նրա անդին խօսքերն իգուր չեն անցնում։ Ասացէք, հայր, դուք երեխ այս վախչող մարդկանց դատաւորն էք, որ կարողացաք մի քանի խօսքով նրանց կարգի բերել։ Այս, գուշ նմանում էք այն նահապետական առաջնորդին, որ մոլորւած ժողովրդին առաջնորդում էր անապատներում։ ինձ թւում է, որ այժմ խօսում եմ Ցեսուայ կամ Մովսէսի հետ։

Դանը հայեացք զցելով քահանայի վրայ, ասեց. արդարեւ, մեր ժամանակը նմանում է այն արտակարդ ժամանակիներին, որոնց մասին սրբազն և աշխարհական պատմութիւնները մեզ ցիշում են, որովհետև ով երեկ և այսօր ապրել է, արդէն տա-

րիներ է ապրել։ Այսպէս բանաբարօրէն առաջ է պնում պատմութիւնը։ Երբ հարևանցի կերպով մաաբերում եմ անցեալը, ինձ թւում է, որ ամենահին անցեալը ճնշում է բանականութիւն։ Քայց այնուամենայնիւ մեր ոյժերը դեռ բաւական թարմ են։ Մենք կարող ենք մեզ համեմատել այն մարդկանց՝ որոնց Տէր Աստածն ծանր պարագաներում յայտնեց բորբոքւող մորենու մէջ, իսկ մեզ յայտնեց ամսերի և կրակի մէջ։

Քահանան ցանկանում էր շարունակել այդ խօսակցութիւնը և ծանօթանալ դատաւորի և զրտ մարդկանց վիճակի հետ, բայց դեղագործը ծածկաբար ասեց նրա ականջին։ շարունակեցէք խօսակցութիւնը դատաւորի հետ և յետոյ խօսքը ազջկայ վրայ դարձրէք, իսկ ես կը գնամ ազջկան որոնելու և երբ զանեմ՝ խորին կը վերադառնամ։ Քահանան ակնարկեց որ հասկացաւ։ Դեղագործը գնաց ազջկան որոնելու այցիներում և շահմարաններում։

Կ Լ Ի Օ 1)

Գ Ա Ր

Երբ քահանան հարցրեց, թէ ինչ զրկանքներ է կրել նրան հասարակութիւնը, քանի ժամանակ է, որ հալածւած են իրենց աներից՝ դատաւորը պատասխանեց, մենք սարսափելի կերպով այժմ զգացինք բոլոր անցեալ տարիների դառնութիւնները, մեր գեղեցիկ լոյսերը չիրագործեցին։ Ովկ կարող է ուրանալ, որ իւրաքանչիւրիս սիրուր բարձրանում, բաբախում էր ազատութեան զգացմանքով, երբ սկսեցին յայտնել նոր արեգակի առաջին հասագայթները երբ լսեցինք, որ մարդկանց իրաւունքները հասարակաց են զատնալու, լսեցինք ոգեսրիչ ազատութեան և ցանկովի հաւասարութեան դազափարների մասին։ Այն ժամանակ ամեն մէկս յոյս ունենք կեանք վարելու, թւում էր թէ լուծելու է այն կապանքը, որ կաշկանդում է շատ երկիրներ և առաջ է բերում դատարկութիւն և շահասիրութիւն։ Յոլոր ազգերն էլ միթէ նեղ օրերում չեն

1) Վլիօն է պատմութեան և զիւցազներգութեան մուսան, Ցէսի և Պնկ մողիների ազգին է։ Այս խորհրդական ոչանակն է ոլորուն կիսարաց գիրքը, Ցառն, Թարգմ.

նայում զէպի համաշխարհացին մայրաքաղաքը, որ երկար ժամանակ կրիլ է այդ անունը, իսկ այժմ աւելի արժանի է այդ անուն, քան թէ մի որ և է ուրիշ ժամանակ: Եղան աւետաբեր պատգամաւորներ, որոնց անունները բարձրաբժան են և ասողերի կարգումն են դասաւորւած. Զէր յուզւում արդեօք իւրաքանչիւրի արիւթիւնը, խելքը և լեզուն: Մենք, որպէս զրացիք՝ ակզրում խիստ վառւած էինք այդ զազափարներով: յդ միջոցին սկսւեց պատերազմը և զինւած ֆրանսիացւոց արշաւանքը մօտենում էր. կարծես թէ նրանք բարի ցանկութեամբ էին գալիս և հէնց այդպէս էլ էր, որովհետեւ նրանց բոլորի սրտերը վիճ էին, նրանք ուրախութեամբ անկում էին ազատութեան գւարթազին ծառերը, իւրաքանչիւրին խոստանում էին իրենը տալ և իւրաքանչիւր երկրի համար հաստատել սեպհական կառավարութիւն: Ցնծում՝ էր երիտասարդութիւնն, ուրախանում էին ծերունիքը և այդ պատճառով բոլորն էլ նոր դրօշակի շուրջը ուրախալի պար բռնեցին:

Յաղթող ֆրանսիացիք վառվռու՞ աշխուժով ամենից առաջ զրաւեցին տղամարդկանց միտքն, յետոյ իրանց անդիմազրելի քաղցրութեամբ կանանց սիրտը: Բազմասկաննչ պատերազմի ծանրութիւնը մեզ թեթև էր թւում, որովհետեւ յոյսը հեռաւոր տարածութեան մէջ թեատրած ծածանուում՝ էր մեր աչքի առջե, քաշում, հրապուրում՝ էր մեր հայեացքը զէպի նորաբաց շահիզը: Ո՞հ, ինչքան ուրախալի է այն ժամանակն, երբ հարս ու փեսան երերւելով պարում են՝ սպասելով ցանկալի միութեանը, բայց աւելի փառաւոր էր այն ժամանակն, երբ մօտ և հասանելի էր երեսում մեզ այն, ինչ որ ամենաբարձր է մարդուս համար: Ամեն մէկիս լեզուն բացւել էր: Ծերունիները, չափահասները և երիտասարդները բարձրածայն խօսում էին խմացականութեամբ և զգացութեամբ: Իայց երկինքը շատ ծածկեց մութն ամսիերով: Խշելու ցանկութեամբ առաջ էր գալիս ապականւած մի ազգ, որ անընդունակ էր բարեգործութեան: Մահւան ենթարկւելով ճնշում էին իրանց նոր դրացիներին և եղբայրներին և ամեն տեղ տարածում՝ էին շահակը խմբեր: Եւայտում էին մեծերը ու կողուպտում՝ էին մեծամեծները, իսկ աննշան մարդիկ շւայտում ու կողոպտում՝ էին ամեն չնչին բաներ: Ամեն մէկը հոգում՝ էր, որ

գոնեայ վազւան համար մի բան մնար: Տառապանքը մեծ էր և օրէցօր սաստկանում էր ճնշումը: Խողոքներին լսող չկար, որով հետև իրանք էին յաղթողները: Կարիքի մէջ լնկնելով՝ կատաղեցին նաև խաղաղասէր մարդիկ: Ամեն մէկը մտածում երգուում էր վրէժինդիր լինել թշնամանքի և խաբւած յոյսերի դառն կրուստի հայար. Վերջապէս բաղդը շրջւեց գերմանացոց կողմը և ֆրանսիացիք անյապաղ փախուստ դարձան: Այս, մենք հենց այդ ժամանակ զգացինք պատերազմի ան սպասելի տիտուր բախսը: Յաղթողը ձեւանում է մեծահոգի և բարեսիրտ, որպէս թէ խնայում է յաղթւածին, կարծես թէ իրենը լինի, քանի որ յաղթւածը իր կայքով օդնում, ծառայում է նրան: Փախչողը չի ճանաչում ոչ մի օրէնք, նա միայն աշխատում է պաշտպան, ել մահից և առանց խղճահարւելու արագութիւնում ոչնչացնում է ամեն ինչ: Այդ մի ջոցին նա կատաղած է և նրա սրտից բղխում են յուսահատ և շրամիտ ձեռնարկութիւններ: Նրա համար այլ ևս սսւրբ բան չկայ, նա կողոպտում է: Վայրենի ձգուումները մղում են նրան գէպի կանաց սեռը, և ցանկութիւնը դառնում է զարհուրելի: Ամեն տեղ տեսնում է մահ, բաւականութիւն է գտնում վերջին բոպէներում անգժութիւն գործելով, ուրախանում է արիւն տեսնելիս, ցնծում է սարուափելի թշւառութեանը նայելիս:

Սոսկալի կատաղութիւնը զարթնեց մել մարդկանց մէջ, վը աեցին կորցրածի համար վրէժինդիր լինել և մնացածը պաշտպանել: Խոլորն էլ զէնք առան, տեսնելով փախտականների խուճապանքը, նրանց գունատ երեսները և երկշու աշքերը: Անդապար հնչում էր ազդարար զանգակի ձայնը: Մօտալուտ վտանգը չկարողացաւ սոսկալի կատաղութիւնը: Եինականի խաղաղ զործիքն յանկարծ փոխեց զէնքի: Արիւն էր թափուում եզանից ու գերանովոց: Առանց զժութեան և անխնաց լնկան թշնամիքը Ամեն տեղ կատաղել էր անմտութիւնը և վեհերոտ ու նենգաւոր անզօրութիւնը: Երբէք չէի կամենալ մարդուն կրկին տեսնել այդպիսի անարդ շփոթութեան մէջ: Կատաղած զազանն աւելի լաւ է ծրանի մարդը չխօսէր ազատութեան մասին, որովհետեւ ինքն իրեն չի կարող կառավարել: Երբ արգելք չկայ, ամենամեծ շարիքներ է գործում և իրաւունքն ու օրէնքը ոտնակոխ է անում:

Ազնիւ մարդ, շեշտելով ասկից քահանան, եթէ դուք մարդկանց չեք ճանաչում; դրա համար չեմ կարող ձեզ մեղադրելը Բաւական շարիքներ կրեցիք խառնաշփոթ պատերազմի պատճառով։ Եթէ յիշեք անցեալ տիրալի օրերն՝ ինքներդ կը խոստովանեէք, որ լաւ գործեր էլ եք տեսել։ Կան և այլ շատ գործեր, որոնք աննշան լինելով ծածկւած են մնում մարդու սրտում, որովհետեւ վատնգ չեն սպառնում, իսկ պահանջը չի ստիպում մարդուն ուրիշների համար հրեշտակ ձեանալու և յայտնելու իրեւ ինամարկող Աստեած։

Պատեական ծերունի գատաւորր ժապալով պատասխանեց. հեռատեսութեամբ յիշեցնում էք ինձ այնպէս՝ ինչոէս որ շատ անգամ յիշեցնում են տիրոջը տան այրելուց կորցրած ոսկու և արծաթի մասին, որոնք աւերակների տակ հալել մնացել են։ Իրաւ է, փոքր բան է, բայց այդ փոքրն էլ թանկաղին է։ Ես ուրախութեամբ մոտաբերում եմ այն մի քանի երջանիկ օրերը, որոնք մնացել են յիշողութեանս մէջ։ Այն, ես չեմ ուրանում, որ տեսայ թշնամիների հաշտուիլը, որով քաղաքը փրկւեց զժքաղտութիւնից, տեսայ նոյնպէս բարեկամների և ծնողների սէրը. տեսայ ես երեխաների անասելի համաձակութիւնը։ Տեսայ, որ յանկարծ երեխան պատանի գարձաւ, պատանին—ողամարդ, ծերունին երիտասարդացաւ։ Այն, մինչև անգամ՝ գեղեցիկ մեռն զարձաւ քաջ և ոժեղ և ցոյց տւեց հոգւոց կենդանութիւն։ Թոյլ տւեցէք ևս պատմել մի գեղեցիկ գործ, որ մի աղնիս օրիորդ մեծահոգութեամբ կատարեց։ Այդ օրիորդը միւս աղջիների հետ մնացել էր մի ընդարձակ բակում։ իսկ աղամարդիկ գնացել էին պատերազմ։ Այդ միջոցին խաժամուժ աւերողների մի խումբ յարձակեց այդ բագի վրաց և իսկոյն կանանց քշեց սենեակները։ Յարձակւողները նկատեցին գեղեցկակազմ օրիորդի դէմքը և քաղցրադիմ աղջիկներին, որոնք, կարելի է ասել, գես երեխաներ էին։ Յափշատկւած վայրենի ցանկութեամբ՝ անխնայ յարձակւեցին ահաբեկ աղջիկների և մեծահոգի օրիորդի վրաց։ Օրիորդն իսկոյն խլեց մէկի սուրը և սաստիկ ուժով հարւածեց զիմադրողին, որ արիւնաթաթախ վայր ընկաւ օրիորդի ոտների մօա, յետոց, ճարպիկութեամբ շարժելով սուրը, վիրաւորեց գարձեալ չորսին, փախցրեց ամբողջ խումբը և

ազատեց աղջիկներին։ Դրանից յետոց օրիորդը կողպէց բագի դռները և զէնքը ձեռքին օգնութեան էր սպասում։

Երբ քահանան լսեց օրիորդի գովասանքը՝ սիրով յուսով լցւեց և արդէն կամենում էր հարցնել, թէ որտեղ է, այդ աղջիկը և թէ արդեօք այժմ փախառականների հետ է, այդ միջոցին դեղագործը շատպով մօտեցաւ, քաշեց քահանայի թեւը ու կամաց ասեց. վերջապէս հարիւրաւոր աղջկանց մէջ դասչ նրան՝ նկարագրութեանն համաձայն։ Եկէք և ինքներդ էլ տեսէք գատաւորի ընկերակցութեամբ, որպէս զի տեսնենք թէ, հետևանքն ինչ կը լինի, Եւ նրանք շուռ եկան գնալու, բայց այդ միջոցին գատաւորին իր մարդիկը կանչեցին խորհրդակցութեան։ Իեղագործը քահանայի հետ գիմեց գեղի ցանկը և խորամանկութեամբ ցոյց տալով ասեց. տեսնում էք աղջկան։ Նա երեխային բարուրել է, Ես լաւ ճանաչում եմ հին բամբակի շորերը և կապոյտ բարձի երեսը, որ Հերմանը կապոցով բերել էր նրա համար։ Իրաւ որ շատ լաւ և շուտ է գործադրել պարզեները։ Այդ լաւ նշան է, իսկ միւս նշաններն էլ ոիշան են. ահա ժապաւէններով պնդած կարմիր կրծկալը բարձրացնում է նրա լի կուրծքը, շապիկն էլ կոկ նստած է վրան, որ իր գեղաշար ծալքիրով վացելութեամբ պատում է նրա բոլորակ բուկը, նրա սիրուն զլուխը ոչ մի զարդ չի կրում; Ճոխ հիւսերը բազմապատիկ փաթաթած են արծաթէ գնդասեղների շուրջը։ Նա այժմ նստած է, բայց մ.նք տեսնում ենք նրա կազմածքը և կապոյտ զգեստը, որ կուրծքից վայր է իջնում և պատում է նրա գեղակազմ մարմինը։ Անկասկած հէնց նա է։ Ուրեմն մօտենանք և տեսնենք, նա բարի, առաքինի և տնարար աղջիկ է՝ թէ ոչ։

Քահանան քննողական հայեացքով նայեց նստած աղջկան և տոեց. զարմանալի բան չէ, որ այդ աղջիկը հրապուրել է մեր երիտասարդին. ինձ նման փորձաւծ մարդու քննողական աշքն էլ դրանում պակասութիւն չի գտնում։ Բախտաւոր է այդ արարածը, որին մայր բնութիւնը տւել է այնալիսի կերպարանք, որով նա ամենքին համարիկի է դառնում; որով և ոչ մի տեղ օտարութիւն չի զգայ։ Ամեն մարդ աշխատում է ծանօթանալ նրա հետ և երկար վացելել նրա ընկերակցութիւնն, եթէ քաղցրաբարոյ վարքն էլ համապատասխանում է դէմքին։ Ճշմարիտ եմ ասում, որ Հերմանի

համար այնպիսի լու աղջիկ է գտնւել, որ կը բախտաւորացնի նրա ամբողջ կեանքը և նրա հետ միշտ կ'ապրի ամենայն հաւատարմութեամբ։ Այլպիսի մի կատարեալ մարմին անկասկած պարունակում է իր մէջ մաքուր հողի, իսկ պատւական առողջութիւնը խօսանում է երկար կեանք։

Դրա գեմ գեղագործը ծանրութեամբ ասեց. կերպարանքն յանձախ խափուսիկ է լինում։ Միան դէմքին չեմ կարող հաւատ ընծայել, որովհետեւ ես շատ եմ փորձել առածը՝ թէ մինչև մէկ լիդր աղ չուտես նոր ծանօթիկ հետ՝ չպէտքէ նրան հաւատաս։ Միայն ժամանակը ցոյց կը տայ թէ ինչ յարաբերութիւն և ինչ տեսակ բարեկամութիւն ունիս նրա հետ։

Առաջ կը լինի նախ տեղեկութիւն ժողովենք բարեմիտ անձինքներից, որոնք ճանաչում են աղջկան։

Զգուշութիւնը գովելի է, պատասխանեց քահանան, որովհետեւ մենք համար չենք հարսնախոսում, իսկ ուրիշի համար իմասմահոսելը մի ծանրակշիռ զործ է։

Այս խօսքերից յետոյ նրանք դիմաւորեցին արթուն գատաւորին, որ, վերջացնելով իր զործերը, վերադառնում էր։

Խելացի քահանան դիմելով գատաւորին զգուշութեամբ ասեց. մենք տեսանք մի աղջիկ, որ նստած այստեղ խնձորենու տակ՝ շորեր է կարում երեխաների համար այն բամբակի շորից, որ նրան ընծայել են։ Մենք հաւանեցինք նրան. նա ողետք է պատւական աղջիկ լինի։ Յայտնեցէք մեզ նրա մասին ինչ որ կարող էք, մենք լաւ դիտաւորութեամբ ենք հարցնում։

Դատաւորն նայելով դէպի պարակդն՝ ասեց. դուք արդէն ճանաչում էք այդ աղջկան։ Ես ձեզ պատմեցի մի աղջիայ քաջագործութեան մասին, որ յափշտակելով սւըրը՝ պաշտպանեց թէ իրեն և թէ իր ընկերու հիներին։ Ահա դու է այն աղջիկը։ Դուք ինքներդ տեսնում էք, որ նա ամբակազմ է և կարելի է ասել, որ փոքր ինչ զէր է։ Դա պահպանում էր իր աղջականերից մէկին, որը, աշքի առաջ ունենալով մեր քաղաքին սպառնացող տառապանքը և իր կայքին սպառնող վտանգը, մեռաւ թշւառութեան մէջ։ Այդ աղջիկը քաջութեամբ տարաւ այն ցաւերը, որոնց նա ենթարկւեց իր նշանածի մահւան պատճառով։ Այդ աղջան մի աղնիւ երիտասարդ

էր և իր վառ խելքով ձգտում էր դէսլի ցանկալի՝ քաղցր ազատութիւնը։ Նա գնաց Պարիզ և այնտեղ սոսկալի կերպով մահացաւ, որովհետև ինչպէս այսուեղ, նոյն պէս այնտեղ կռւում էր կամացականութեան և խաբեբայութեան դէմ։

Երբ գատաւորը վերջացրեց այս խօսքերը, քահանան և դեղագործը շնորհակալութիւն յայտնեցին նրան և հեռանալուց առաջ քահանան հանեց մի ոսկի (ունեցած արծաթ փողը մի քանի ժամ առաջ ողօր լութեամբ բաժանել էր գաղթականների տիրալի խմբերին) և առեց գիւղապետին՝ ասելով, բաժանեցէք կարօտեալներին և Աստւած պակասը կը հասցնի։ Բայց գիւղապետը հրաժարւելով ասեց. մեր ունեցածից փրկել ենք մի քանի դրամ, շորեր և իրեղիններ, յոյս ունիմ, որ մինչև զրանց սպառւելը մենք տուն կը վերադառնանք։

Քահանան սեղմելով փողը նրա ափի մէջ՝ ասեց. այսպիսի ժամանակներում ոչ ով չպէտքէ գանդաղի փող տալ և ոչ ով չպէտք է հրաժարւի ընդունել, ինչպէս և ողորմածութիւնը պատիրում է։ Ո՛չ ոք չգիտէ թէ իր ունեցածը որքան ժամանակ կը բաւականաց։ Այն, ոչ ով, քանի որ, թափառելով օռար երկրներում, զրկւած է վարելահողից և ացդիներից, որոնցով նա ապրում էր։

Եթէ գրպանում փող ունենացի, շատապով ասեց գիւղագործը, բոլորն էլ ձեզ կը տայի, որովհետև անշուշո ձեզան ից շատերը փողի կարօտութիւն կ'ունենան։ Բայց այնուամենացնիւ առանց պարզեի չեմ թողնի գնաք, որպէս զի իմանաք, որ ցանկութիւնս անկեղծ է, թէպէտ տւածս մի մեծ բան չի կարող լինել։ Այսպէս խօսելով նա քաշեց, հանեց իր ծխախոտի կաշւէ քասկը, ուր կար ծխախոտ և մի քանի ծխամորճ և բոլորը բաժանեց։ Լաւ ծխախոտը շատ գնահատելի է ճանապարհորդների համար, ասեց գիւղապետը, զեղագործն էլ զովից իր ծխախոտը։

Քահանան և գիւղագործը հրաժեշտ աւնելով հեռացան։ Շտապենք, ասեց քահանան, երիտասարդը մեզ անհամբելութեամբ սպառում է, թող նա շուտով լսի ուրախալի լուրը։ Նրանք վերադանան և երիտասարդին գտան լորենիների տակ՝ կառքին յենւած։ Զիերն անհամբերութեամբ ոտնահարում էին կանոչ խոռը, իսկ Հէրմանը նրանց սանձերը բռնած՝ ընկղմանած էր խոր մտածութեանց

մէջ և չնկատեց, որ իր երկու բարեկամները մօտենում էին, մինչև  
որ նրանք ուրախալի նշաններով ձայն չտեղին: Դեղագործն ար-  
դէն հեռակ սկսել էր խօսել: Նրանք շուտով մօտեցան և քահանան  
զեղագործի խօսքն ընդհատելով՝ բռնեց Հերմանի ձեռքը և ասեց.  
օրհնուած լինիս, երիտասարդ, դու քո բարի աչքովդ և անկեղծ  
սրտովդ լաւ ընտրութիւն ես արել: Յանկանում եմ քեզ և երի-  
տասարդ կնոջդ բախտաւորութիւն: Նա քեզ արժանի է: Ուրեմն  
դարձրու կառքդ, որ գնանք գիւղը հարսնախօսենք աղջկան և տուն  
տանենք:

Սակայն Հերմանն առանց ուրախութեան ցոյցեր անելու՝ կանգ-  
նած լսում էր քահանայի հիմնալի և միխթարական խօսքերը.  
վերջապէս խոր հոգւոց հանելով ասեց, մենք արագլնթաց կառքով  
եկանք, բայց կարելի է, որ ամօթով և գանդաղ տուն վերադառ-  
նած: Երբ ես ձեզ սպասում էի, անհանգստութիւնն ինձ տան-  
ջումն էր, անվասահութիւնը և կասկածը սիրահար սիրտս վշտա-  
հարում էին: Միթէ կարծում էք, որ, եթէ գնանք այնուեղ, աղջիկը  
կը համաձայնի մեզ հետ գալ հէնց նրա համար, որ մենք հարուստ  
ենք, իսկ նա աղքատ, աքսորւած ու թափառական: Երբ ազք ա-  
տութիւնը հետեւանք է լինում անիրաւութեան՝ ազ-  
քատը հպարտ է լինում: Ինձ թւում էր, որ այդ աղջիկը  
սակաւագիտ է և գործունեաց, ացդ սպատճառով էլ աշխարհը նրան  
է պատկանում: Միթէ կարծում էք, որ կաց այնպիսի թէ գեղեցիկ  
և թէ առաքինի կին, որ երբ և իցէ հրապուրած ըլինի մի երի-  
տասարդի սիրտ: Միթէ կարծում էք, որ նրա սիրտը մինչև այժմ  
փակ է եղել սիրոց համար: Աւելի լաւ կը լինի, որ չգնանք այնուեղ  
և ամօթն երեսներիս, ձիերի գլուխները դարձնենք՝ դէպի տուն  
գնանք: Ես վախենում եմ, որ մի որ և է երիտասարդ նրա սիրտը  
զբաւած լինի, աղջիկն յայտնած լինի նրան իր համաձայնութիւնը  
և երջանիկ երիտասարդին հաւատարմութիւն խոստացած լինի:  
Մի, այն ժամանակ ես իմ հարսնախօսութեամբ ամօթալի կ'երեւամ:

Հերմանին միխթարելու համար քահանան կամենում էր խօ-  
սել, բայց շատախօս զեղագործն ընդհատելով նրան՝ ասեց. ի հարկէ,  
հին ժամանակներում մենք չէինք զժուարանաց, որովհետեւ ամեն մի  
գործ որոշ կերպով էր կատարուում: Մնողներն ընտրում էին մի

հարսնացու իրանց որդու համար հրաւիրում էին իրանց սրտավկից բարեկամներից մէկին, բացազրում էին նրան իրանց ցանկութիւնը և խնդրում էին նրան գնալ որպէս խնամախօս ընտրած աղջկայ ծնողների մօտ: Խնամախօսը մի կիւրակի օր հագնում էր իր ամենալաւ զգեստը, կոկում, սարքում էր և ճաշից յետոյ զնում էր աղջկայ տուն: Նա բարեկամաբար խօսում էր աղջկայ ծնողների հետ զանազան գործերի մասին և յետոյ երկար ժամանակ զրուցելով այս և այն բանի մասին՝ վարպետութեամբ խօսքը դարձնում էր աղջկայ վրայ, մի քանի անգամ դովում էր այն մարդուն և նրա տուն ու տեղը՝ ում կողմից որ ուղարկւած էր: Խելացի տան տէրը հասկանում էր նրա մատադրութիւնը, իսկ փորձառու խնամախօսը շուտով էր կարողանում ըմբոնել աղջկայ տիրոջ միոքը և սկսում էր աւելի արձակ, համարձակ խօսել: Եթէ մերժում էին այնքան էլ անյարմար ու գեւար չէր թւում խնդրողին: Բայց երբ խնամախօսի գործը յաջողում էր, այն ժամանակ ամեն մի գերդաստանական տօնին նա այն տան տաւաջին հիւրն էր լինում և ամուսիններն իրանց ամբողջ կեանքրում շարունակ մոռաբերում էին, որ այդ մարդն է եղել իրանց ամուսնութեան սկզբնապատճառը: Բայց այժմ այդ բոլորը և դրանց նման շատ լաւ սովորութիւններ գործածութիւնից դուրս են եկել և ամեն մարդ ինքն է հարսնախօսում: Եթէ մերժումն վիճակւած է թող ամեն մարդ ինքն իր ականջով լսի, թող ինքն ամօթով մնայ աղջկայ առջեւ:

Խնչ որ կ'ուզի՝ թող լինի, ասեց երիտասարդը վճռական կերպով, որ գրեթէ գեղագործի խօսքերը չէր լսել, ես ինքս կը գնամ, ինքս կամենում եմ լսել իմ գատավճիռը այն աղջկայ բերանից, որին ես այնքան սիրում եմ, որքան երբէք ոչ մի տղամարդ մի կնոջ չի սիրել: Ես գիտեմ, որ նա խելօք է, թող նա վճռի՝ ինչ պէս կամենում է, եթէ ինձ վիճակւած է նրան վերջին անգամ էլ տեսնեմ նրա սև աշքերի կախարդիչ հայեացքը: Եթէ ես երբէք չպէտք է սեղմեմ նրան իմ կրծքին՝ կամենում եմ մէկ անգամ տեսնել՝ գոնէ մէկ անգամ էլ տեսնել նրա կուրծքը և ուսերը, որ ես ագահութեամբ կը գրկէի: Մէկ անդամ էլ կամենում եմ տեսնել այն շըթունքը, որոնց համբոյրը և այսոյ խօսքը ինձ յաւիտեան կը բախտառացնի, իսկ ոչնա ինձ ընդ միշտ կ'ոչնչացնի: Թողէք ինձ միայնակի: Խուզ

ինձ մի՛ սպասէք: Գնացէք ծնողներիս մօտ, պատմեցէք՝ ինչ որ լսել և տեսել էք, որպէս զի նրանք չկարծեն թէ նրանց որդին սխալւել է և որպէս զի իմանան թէ աղջիկն արժանաւոր է: Ուրեմն թողէք ինձ միայնակ: Ամենակարճ ճանապարհը գնում է այս բլրի վրայով, անցնում է տանձենու մօտով և մեր այգիով ներքև է իջնում դէպի մեր տունը: Ո՞հ, եթէ կարողանացի ուրախ սրտով սիրածիս շուտ տուն տանել: Բայց կարելի է, որ ես էլ միայնակ տուն վերադառնամ և այլ ես երբէք ուրախ սրտով չանցնեմ՝ այդ ճանապարհով:

Այս խօսքերից յետոյ նա յանձնեց ձիերի սանձերը քահանացին, որն առնելով և վարպետութեամբ զսպելով փրփրուած ձիերին՝ արագութեամբ բարձրացաւ կառքի վրայ և նստեց ձիավարի տեղը:

Զգոյց զբացի, դու զեռ դանդաղում ես, բայց բարեկամ, դու ասել ես, որ յօժարութեամբ վստահանում ես ինձ հոգիդ, միտքդ և սիրտդ, իսկ մարմինդ և ոսկերքդ ապահով չես համարում, երբ կրօնաւորի ձեռքը յափշտակում է աշխարհի գանձը: Դու ժպտալով ասում ես, խոհական հայր, նստեցէք և վստահութեամբ հաւատացէք ինձ ձեր մարմինը և հոգին, որովհետեւ ձեռքս վարժ է սանձը բըռնելու և աչքս սովոր է կառքը ճարպիկութեամբ դարձնելու, որովհետեւ Ստրասբուրգում սովորել եմ կառք քշելը, երբ ուզեկցում էի երիտասարդ բարոնին, ամեն օր կառքով անցնում էի արձագանք տւող զոնավ, վոշոտ ճանապարհով, մինչև մարզագետինները և լորենիքը և ամբողջ օր զբոսանքով զբաղւած մարդկանց խորերի միջով:

Մասամբ՝ հանդստացած զեղագործը կառքը ելաւ և այնպէս նասեց, որպէս թէ պատրաստում է վայր ցատկել: Ամպանման փոշի բարձրացնելով՝ յօվատակներն արսգ վազում էին դէպի տուն գոմում՝ հանգստանալու համար:

Երիտասարդ Հերմանը զեռ երկար ժամանակ կանգնած նոյսում՝ եր բարձրացող վոշուն, տեսնում էր՝ ինչպէս փոշին ցրւում է: Նա կանգնած էր առանց մտածմունքի:

ԷՐԱՏՈ<sup>1)</sup>

Գ Ա Ր Ա Թ Ե Ա

**Ինչպէս** մի մարդ, որ նայում է արեգակի մայր մանելուն և յետոյ աշքերը դարձնելով տեսնում է նսեմալոյս անտառում ժայռի տակ արեգակի տառանող պատկերը և ամեն տեղ նրան ներկայանում է նոյն շարժւող, փայլուն, բազմագոյն պատկերը, նոյնպէս էլ մեղմութեամբ շարժւում էր Հէրմանի աչքի առջև նազելի աղջկայ կերպարանքը, և թւում էր նրան որպէս թէ նա գալիս է արտերի միջով։ Մթափւելով այդ զարմանալի երազից՝ նա ուզեսորւեց դէպի գիւղը և կրկին զարմացաւ, կրկին տեսաւ այն սիրուն աղջկայ սպառիերը։ Աւշագրութեամբ նացելուց յետոյ, տեսաւ, որ այդ ցնորք չէ, այլ հէնց նոյն իսկ աղջիկն էր եկողը։ Մէկ ձեռքով բռնել էր մի մէծ կուժ, իսկ միւս ձեռքով մի փոքրը և գնում էր դէպի աղբիւրը։

Հէրմանը զւարթ գէմքով դիմաւորեց նրան։ Աղջկան տեսնելով՝ նո վստահութիւն և ոյժ առացա։ Դառնալով սքանելի աղջկան՝ ասեց. մի՞թէ այդ զու ես, նազելի օրիորդ, որ միշտ զբաղւած ես ուրիշներին օգնելու և զովացնելու գործով։ Ասա, ինչու միայն զու ես գալիս աղբիւրը, որ բաւականին հեռու է, այն ինչ միւսները բաւականանում են զիւղում եղած ջրով։ Երաւ, պէտք է ասել, որ այս աղբիւրի ջուրն աւելի զօրաւոր և համեղ է։ Երևի ջուրը առնում ես այն հիւանդի համար, որին դու փրկել ես։ Բարեսիրա աղջիկը հեղութեամբ բարեւեց երիտասարդին՝ ասելով, ահա աղբիւրի մօտ գալս վարձատրւած է, որովհետեւ տեսնում եմ այն բարի մարդին որ մեզ այնքան իրեր ընծայեց։ Երախտաւորին տեսնելը նոյնքան ուրախալի է որքան և երախտիքը։ Պէտք է գաք անձամբ տեսնէք, թէ նվազում ջեր ընծաներից և օգնութիւն ստացողներից շնորհակալութիւն ընդունէք։

Խսկոյն կը բացատրեմ ձեզ, ասեց աղջիկը, թէ ինչու եմ եկել այս

<sup>1)</sup> Երաստ'ն է քնարերգական և մանաւանդ առվական բանաստեղծութեան արւեստի մուսուն։ Արան նկարում են փանողիուը ձախ ձեռքին բանած։

պարզ աղբիւրի ջրից տանելու. անզգոյշ մարդիկ սկսորել են գիւղի բոլոր ջրերը, անցրել են ձիեր և եղներ այն աղբիւրի միջով, որի ջուրը գործ են ածում խմելու համար և լւացքաջրով կեղառատել են գիւղի բոլոր ջրարբները և ջրհորները, որովհետեւ դժբախտաբար ամեն մէկրմածում է միայն իր մասին և աշխատում է շուտ իր պիտոյքը լրացնելու, իսկ մնացածների մասին չի մտածում:

Այսպէս խօսելով աղջիկը Հերմանի հետ իջաւ լայն սանդուղքներով դէպի աղբիւրը, և երկուսով էլ նստեցին քարերի վրայց Աղջիկը կրացաւ ջուր վերցնելու, իսկ Հերմանը վերցրեց միւս կուժը լցնելու: Այդ միջոցին նրանք տեսան իրենց երերւող պատկերները կապ ազոյն ջրի մէջ, նրանք միմեանց զլխով էին անում և քաղցրութեամբ բարեւում էին այլ հայելու մէջ: Չուր տուր ինձ, ասեց գւարթութեամբ Հերման: Աղջիկը կծից ջուր տռեց նրան խմելու: Յետոյ երբ երկումն էլ յենելով կժերի վրայ մտերմաբար նասեցին, աղջիկն ասեց իր բարեկամին, ասա՞՝, բնչափէս է պատահել, որ առանց կառքի և ձիերի հեռացել ես այն տեղից, ուր ես քեզ առաջին անգամ տեսայ:

Հերմանը մտածելով գետին նայեց, յետոյ հանգարառութեամբ և միսիթարւած բարձրացնելով աչքերը՝ բարեկամաբար նայեց աղջկաց աչքերին: Հերմանի համար դժւար էր սիրոց մասին խօսել: Աղջկաց աչքերում չէր երկում սէր, այլ պարզ խելք և խելացի խօսելու պահանջ: Այդ պատճառով Հերմանը զգաստութեամբ և մտերմութեամբ ասեց. անա թող պատճեմ սիրելիս և հարցերիդ պատասխանեմ, քեզ համար եմ եկել այստեղ, էլ ի՞նչ թազցնեմ: Ես երջանիկ ապրում եմ ծնողներիս հետ և որպէս միակ զաւակ՝ անկեղծօրէն օգնում՝ եմ մեր տան և կայքերի կառավարութեան գործում, իսկ մեր գործերը շատ և բազմատեսակ են: Վարելահողերի մասին ես եմ հոգում, իսկ տանը հոգածութեամբ հայրս է կառավարում: Քեզ էլ լաւ յացանի կը լինի, թէ ինչափէս ծառաները թեթեամուս թեամբ և անհաւատաբնութեամբ տանջում են ամեն մի տանաիկնոց և ստիպում են իրենց փոփոխել, այսինքն սխալը սխալով փոխարինել: Մայրս վաղուց է կամենում ունենալ տանը մի աղջիկ, որ օգնէր նրան ոչ միայն իր ձեռներով, ալ և փոխարինէր իր դստերը, որին վաղուց կորցրել է: Երբ այս առաւօտ տեսայ քո

ճարպիկութիւնը, տեսայ ուժեղ ձեռներդ և ամբողջ մարմնիդ առողջութիւնը և լսեցի խելօք խօսքերդ, ես յափշտակւած շտապիցի տուն՝ քեզ ծնողներիս և բարեկամներիս մօտ գովարանելու համաձայն արժանաւորութիւններիդ։ Վերջապէս այժմ յայտնում եմ քեզ նրանց և իմ ցանկութիւնը։ Ներիր, որ այսպէս անկապ եմ խօսում։

Մի բաշւէք, ասեց աղջիկը, համարձակ խօսեցէք։ Դուք ինձ չեք վիրաւորում, ես գոհունակութեամբ լսում եմ, որոշ յայտնեցէք ձեր կամքը, ես խօսքից չեմ՝ խորշում։ Դուք կամենում եք ինձ ազախին վարձել Ձեր ծնողաց համար, որ հոգամ Ձեր բարեկարդ տան համար։ Դուք կարծում եք նոյնպէս, որ ես Ժիր ակջիկ եմ, ընդունակ եմ աշխատանքի և ունիմ մեզմ բնաւորութիւն։ Ձեր առաջարկութիւնը շատ կարձառօս էր, ուրեմն պատասխանն էլ պէտքէ կարծ լինի։ Այն, ես կը գամ Ձեզ հետ և կը հետեւմ ճակատագրիս որոշմանը։ Իմ պարտաւորութիւնը վերջացրելիմ, ծննդկանին յանձնել եմ իր ազգականներին և զրանք շատ ուրախ են, որ նու մահից փրկւեց։ Նրանցից արդէն շատերը ժողովելի են ծննդկանի մօտ, մնացածներն էլ կը ժողովւեն։ Գաղթականները մտադիր են շուտով հայրենիք վերապառնալ, հալածւածը պէտքէ միշտ ացլուեսակ յոյսերով մմիթարի իրեն։ Բայց ես այս տխուր ժամանակներում զուր յոյսերով չեմ կարող խաբել ինձ, կարծեմ որ մենք պէտքէ գեռ սրանից աւելի տխուր օրեր տեսնենք, որովհետեւ աշխարհը տակնուվրայ է եղել, ով պէտքէ այդ բոլորը կարգաւորի եթէ ոչ մեծ որահանջը, որին գեռ պէտքէ ապասենք։

Եատ ուրախ կը լինեմ, եթէ կորողանամ Ձեր արժանաւոր հօր տանը ծառայելով և Ձեր պատական մօր հովանուորութեան տակ մնունդ գտնել, որովհետեւ մի թափառող աղջիկ միշտ կասկածանքի է ենթարկւում։ Այն, ես կը գամ Ձեզ հետ, բայց նախ պէտքէ վերապարձնեմ այս կժերն իմ բարեկամներիս և նրանց որհնութիւնն ստանամ։ Եկէք, զուք պէտքէ նրանց տեսնէք, որովհետեւ նրանք պէտքէ ինձ Ձեզ յանձնեն։

Երիտասարդն ուրախ սրտով լսում էր աղջկաց կամաւոր որոշումից, չգիտեր, յայտնէր նրան գործի խկութիւնը՝ թէ ոչ Բայց աւելի բարւոք համարեց աղջկան պատրանքի մէջ պահելով տանել

իրենց առւն և այնաեղ նրա սէրը գրաւելից հայց միս, ազջկաց մատին ոսկէ մատանի տեսաւ, այնու ամենայնիւ թողլ տւեց խօսել և ուշադրութեամբ լսում՝ էր նրան:

Աւքեմն զնանք, ասեց ազջիկը: Ազջկաց միշտ վասաբանում են, եթէ երկար ժամանակ մնում են ազբիւրի մօտ, թէպէտե շատ գուրեկան է հոսող ազբիւրի մօտ, քազգրութեամբ զրուցելը:

Երկուսով էլ վերկացան, կրկին նացեցին ազբիւրի մէջ և մի քազցր ցանկութիւն տիրեց նրանց: Ազջիկը երկու կծերի ունկերից բռնելով՝ ջուր լցրեց կծերը, բարձրացաւ սանկուզքներով և Հերմանը հետեւելով իր սիրեկանին՝ խնդրեց կծերից մէկը, որպէս զի նրա ժանր բեռը կարողանաց թեթևացնել: Թողէք, պատասխանեց ազջիկը, այսպէս հաւասարակշութիւնն աւելի լաւ է պահպանւում և և իմ տէրը, որ պէտքէ շուռով ինձ հրամաչէ, նա չպէտքէ ինձ ծառայէ: Այդպէս լրջօրէն մի նայէք ինձ վրայ, ասեց ազջիկը, կարծես թէ վիճակս կարեկցութեան արժանի լինէր: Կինն իր վիճակին համաձայն պէտքէ վազօրօք սովորի ծառացել, որովհետեւ միտքն ծառացել կարող է նա վերջապէս ձեռք բերել իշխանութեան իրաւունքը, որ տան մէջ իսկապէս նրան է պատկանում: Քոյրը վաղ է սկսում ծառայել եղբօրը, ծառայում է նոյնակս իր ծնողներին, նա ամբողջ իր կեանքում ոսի վրայ է, տանում է, բերում է, պատրաստում է, աշխատում է ուրիշների համար: Երանի ամէն ազջիկ այնպէս սովորի, որ ոչ մի վիճակ նրան անախորժ չերևայ, զիշերաց և ցերեկւայ ժամանան լինեն, երբէք աշխատանքը չնշին բան չհամարի և ասեղը նուրը, ինքն իրեն բոլորովին մնունաց և ասպրի ուրիշների համար: Եւ իրաւ որպէս մայր նա պէտքէ առաքինի լինի, երբ ծծկերը զարթնացնելով հիւանդ և թողլ մօրը՝ մնունդ է պահանջում, ցաւերի վրայ հոգսեր էլ են աւելանում: Քսան աղամարդ միասին չեն կարող կրել ացդ գժւարութիւնը և հարկաւոր էլ չէ, բայց աղամարդիկ էլ պէտքէ երախտագէտ լինեն:

Ազջիկն այսպէս խօսելով իր ուղեկցի հետ, որ լուս հետեւում էր նրան անցաւ այզիով և հասաւ այն շատեմարանը, ուր ծննդիանն ուրախ պարկած թողել էր իր զուստրների և փրկած նորածին ազջկաց հետ, որոնք անմեզութեան սլոտիեր էին ներկայացնում: Եր-

կուսով էլ ներս մտան, իսկ միւս դռնից ներս մտաւ գատաւորք երկու երեխաների ձեռքերից բունած: Թշւառ մայրը խառնակութեան ժամանակ էկորցրել էր իր այդ երեխաներին, որոնց գատաւորը գտել էր ամբոխի մէջ: Երեխաները տեսնելով իրենց մօրք ուրախանալով փաթաթւեցին, համբուրեցին նրան և աւելի ուրախացան տեսնելով իրենց նորածին եղբօրք, որ նրանց խաղակից պէտք է գառնար: Յետոյ երեխաները վազեցին դէպի Նորոթէան և, փաթաթւելով նրան, հաց և միրգ ուզեցին, բայց ամենից առաջ ջուր խնդրեցին: Աղջիկը բերած ջրից բոլորին էլ խմացրեց: Այդ ջրից խմեցին ևս ծննդկանը, միւս երեխաները և գատաւորք բոլորն էլ հիացած գովեցին այդ պատաւական ջուրը: Ջուրը փոքր ինչ թժու էր և զովարար, բայց մարդկանց առողջարար էր խմելու համար: Աղջիկը ծանրութեամբ ասեց. բարեկամներ, այս վերջին անշամն է, որ խմելու ջուր բերեցի ձեզ համար: Եթէ սրանից յետոյ սուերում հանգստանալով մի պարզ, սառն աղբիւրի ջուր խմէք՝ չիշեցէք ինձ և իմ ծառայութիւնը, որովհետեւ ձեզ համար սիրուց դրդւած եմ աշխատել և ոչ ազգակցութեանս պատճառով. ինչ լաւութիւն որ ինձ արել էք՝ երբէք չեմ մոռանաց: Ակամայ եմ հեռանում ձեզանից: Այսպիսի դժւար պարագաներում մէկը միւսին աւելի ծանրութիւն է պատճառում՝ քան թէ օգնում է նրան, մենք բոլորս էլ պէտք է վերջ ի վերջոյ ցըւենք օտար երկրներում, եթէ հայրենիք վերադառնալը մեզ արգելեն:

Ահա այն երիտասարդը, որ մեզ համար բերեց ուտելիք և երեխացի համար շորեր: Սա եկել և հրաւիրում է ինձ իրենդ տուն, իր պատաւական և հարուստ ծնողներին ծառայելու: Ես չեմ հրաժարում, որովհետեւ աղջիկը պէտքէ ծառայէ և ոչ թէ տանը նստած մի բեռը դառնաց և տանը հանդարտ նստած ծառայութիւն պահանջի: Ես գնում եմ այս խելացի երիտասարդի հետ, երեի սրա ծնողներն էլ աղնիւ մարդիկ կը լինեն՝ ինչպէս վացել է հարուստներին: Ուրեմն մնաք բարեւ, իմ սիրելի բարեկամ, ասեց նա ծննդկանին, ուրախ եղէք, որ յաջողութեամբ աշխարհ բերեցիք մի առողջ որդի, որ ձեզ այժմ նայում է: Ո՞հ, չմոռանալով այս բարի երիտասարդին, որի ընծաներով պահպանեցինք այդ երեխացին, և ապադայումն, ինձ էլ, որ ձերն եմ, կերակրելու ու պահպանելու է:

նոկ ձեզ, պատւելի պարոն, ասեց նա դատաւորին, ձեզ յայտնում եմ իմ շնորհակալութիւնը, որովհետեւ զանազան դէպքերում ինձ հայրաբար պահպանել էք: Յետոյ չոքեց արտասւալի ծննդկանի առջև, համբուրեց նրան և տռաւ նրա օրհնութիւնը:

Ազնիւ դատաւորն ասեց Հերմանին. ես հաւանում եմ ձեզ, բարեկամ, որ լաւ տնարար լինելով, ցանկանում էք յանձնել ձեր տնարարութիւնն աշխատաւոր մարդկանց: Ես շատ անգամ տեսել եմ, որ կովերին, ձիերին և ոչխարներին փոխելու կամ գնելու ժամանակ՝ լաւ քննում են: Բայց մարդը, որ կարող է ամեն ինչ պահպանել երբ նա գործունեաց և բարի է, ամեն բան կարող է նաև քանդել ու վատնել, երբ նա չար սկզբունքներ ունի. մարդուն բախտի բերմամբ և պատահաբար են ընդունում և շատ անգամ զղջում են, որ առանց ճանաչելու են ընդունել: Կարծեմ, ասած հասկանալի է: Բայց դուք ընարել էք ձեր տանը և ծնողներին ծառացելու համար մի այնպիսի աղջիկ, որ ունի ամեն տեսակ առաքինութիւն, դրան լաւ պահեցէք: Երբ յանձնած կը լինէք զրան ձեր տնարարութիւնը՝ դուք դտած կը լինէք մի քոյք, իսկ ձեր ծնողները մի դուսար:

Այդ միջոցին եկան ծննդկանի ազդականները, բերեցին նրա համար զանազան բաներ և յայտնեցին, որ նրա համար լաւ բնակարան են գտել: Ասելով, որ աղջիկը վճռել է գնալ, սկսեցին օրհնել Հերմանին և զարմացմամբ, խորհրդաւոր կերպով նայում էին նրան: Միմեանց ականջին շշնչում էին. եթէ այդ պարոնը փեսայաց աղջկաց բախտալ կը բանի:

Հերմանը բռնելով աղջկաց ձեռքն՝ ասեց, ժամանակ է որ գնանք, որովհետեւ մթնում է: Կանացք աշխուժով խօսելով՝ գրկեցին Դորոթէալին, որ իր բարեկամների համար բարեներ յանձնարարեց, իսկ երեխանները լալով, գոռալով բռնեցին նրա փեշերից և չէին թողնում իրենց երկրուդ մօրը, բայց մի քանի կանացք սաստելով նրանց՝ ասեցին. երեխանցք, սուս կացէք, Դորոթէան զնում է քաղաք այն քաղցրեղէնները բերելու, որ ձեր եղբայրը պատւիրեց, երբ արագիլը նրան անց էր կացնում շաքարագործի մօտով: Դուք շուտով կը տեսնէք, որ նա կը բերի ոսկեզօծ թղթերի մէջ փաթաթած քաղցրեղէնները: Երեխանները թողեցին նրան և Հերմանը հաղիւ կարողացաւ աղջկան բաժանել կանանց գրկից, որոնք հեռւից շարունակում էին շարժել իրենց թաշկինակները:

## ՃԵՄԱՐՏՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՇԱՏՈՒՐԵԱՆԻ

Քեզ համար է իմ տանջանքը,  
Ճշմարտութեան գաղափար!  
Թող քեզ զոհւի մասաղ կեանքը—  
Ես ապրում եմ քեզ համար!

Կեանքի կուռում քանիցս անգամ  
Ես քեզ պաշտպան կանգնելով—  
Հալածեցին ինձ անզգամ  
Մարդիկ — ոյժըս ծաղրելով...

Հոգով աղքատ, մոքով տըկար—  
Նոքա իմ ձայնն անաչառ  
Նաև ջանացին խեղդել իսպառ...  
Ոխալւեցին չարաչար!

Եւ երբ նոցա սե սըրտերին  
Խօսքըս զիպաւ, որպէս նեա,  
Նոքա փըրփուր բերաններին,  
Թոհն խառնեցին հացիս հետ...

Բայց դու յուզիր, յուզիր կեանքը,  
Ճշմարտութեան գաղափար!  
Դու ես իմ ոյժն, իմ եռանդըս.  
Ես ապրում եմ քեզ համար!

## ԵՐԱԶ ՕՐԵՐ

(Գիշերօթիկի մը յաշատեարէն)

Շ Ա Յ Թ Ի

(Նարանակութիւն<sup>1)</sup>)

Օգոստոս 5

Մեր ընթերցանութեան ժամերը այլ ևս ձեւի համար է միայն.  
ձեւի համար է, որ դիբքը կը բանանք, իսկապէս այդ մեր կռւի  
դաշտն է:

Այն, չենք-չնորհք կը ուիւ մըն է այս. հրապոյքի, հաճոյքի,  
կամքի ու խենթութեան տարօրինակ ընդհարումը, ուր աղջիկը  
յարձակողական դիբք ունի, ես պաշտպանողական:

Եւ, երկինք, ալ ինչեր լսես չընէր ինծի բոլորովին յիմար-  
ցնելու համար: Եր արդուզարդը, շարժումները, ընթերցման շեշ-  
տերը, խօսիլը, ժպիտը, նայւածքը, ասոնք բոլոր իր գէնքերն են,  
որ ձարապիկ կերպով գործածել դիտէ, օր օրի աւելի յանդուգն,  
աւելի ձեռներէց:

Կնքն ալ քանի կ'երթայ եթերացին բան մը կը դառնայ. ամ-  
բողչ՝ ժպիտ, դիւթանք, գրգիռ ու յուզում:

Հազար պատրւակներ կը ճարէ ինծի մօտինալու, սեղմէելու,  
ձեռքս ձմիւլու, ծունկերուս զարնւելու, թերէս քաշելու:

Երէկ դիբքը սեղանին վրայէն հովհարովը վար ձգեց:

<sup>1)</sup> Տես «Մուլք» 1894 թ. № 11—12, և 1895 թ. № 1:

որ առնեմ. ինքն ալ ծռեցաւ. ու կ'ուզէր զիրքը ձեռքէս իլէ. չը աըւի. սկսու մաքառումը. մեր թեւերը իրար էին հիւսւած, եր կուքս ալ զէպի գետին խոնարհած, գլուխ գլխի՝ հարու տւող այծերու պէս: Ա՛, ինչ հեշտանք կ'ըզգայի իր մազերու շոյանքէն, որ ճակախս ու քունքերուս վրաց կը գալարէին. ինչպէս իրար ձեռք կը սեղմէինք:

Այսօր ալ գրապանէս ծոցատեարս խլեց ու փախաւ, սպառնալով մէջինը կարդալ. ամբողջ կէս ժամ պարոէզը իր ետևէն կը վազէի ածուէ ածու. քանի անգամ բոնեցի, քանի անգամ խոյս տւաւ. ինչպէս կը թափահարէր բազուկներուս մէջ ձեռքէս ազատւելու համար: Ազատ օդին մէջ խոյացող թոշնակ մը ովկ է բռնած. ինչպէս կը թոթւէ ան իր սիրուն, փափուկ փետուրները, ինչպէս կը ծըլւըլայ. այդպէս կը քրքջար Վարդուհին թեւերուս մէջ խաչտալով: Ու ես կը դոզդզայի իր մարմնի ամեն մէկ հաղումէն անհուն խախըտանքներ զգալով:

Իր բոլոր ճիզը ինծի զիւթել, հմայելն է: Կ'ուզէ ընկծէ ինծի, լեզուս բանալու սահպէ, յաղթել կ'ուզէ, կ'ուզէ հպարտութիւն կոտրէ:

Ես այդ կ'ըմբռնեմ:

Բայց ինչ հալարտութիւն. ոչ, հպարտութիւն չէ այս, ոչ ալ վախ կամ տարակոցս. երբէք:

Հասկա ինչու ուրեմն այս հոգեկան տանջանքները, այս խենթլարումը, մաքառումը. ինչու չեմ քակեր այս կծիկը, որ ժամ, ժամ՝ աւելի կը խճնւի:

Գուցէ խենթութիւն է այս, գուցէ անբնական—չգիտեմ. միայն այս բոլորէն ես բուռն հաճոյք մը կ'ըզգամ. հաճոյք...

Օգոստոս 7.

Երբ Վարդուհինց սրահէն ներս մոտայ՝ սենեակի սեմին վրա օրիորդին հետ զէմուզէմ գտնուեցայ:

Ժապանցաւ ու աշխոյժ շարժումով մը ինծի մօտեցաւ:

—Ռօզա, ովկ է այն. հարցուց ներսէն:

—Պ. Երւանդը. եղաւ պատասխան:

Սեմէն բարեեցի տիկինը:

— Այսօր նոր պիտի աշխատենք. հարցուց օրիորդը:

Գիշերը թեթև անձրւած էր. ու պարտէզը քիչ մը խոնաւ:

— Եկէք, պատշգամ. հոն ալ պարտէզի պէս է ու առանձին, աւելցուց իսկո՞ն.

Եւ իր սովորական շարժումով ետ դարձաւ, թեէս քաշելով ինձի պատշգամ. հանեց, գրեթէ հրեց ոլորէ աթոռի մը վրայ ու ինքն ալ նետւեցաւ օրրան աթոռի մը մէջ. իմինիս այնքան մօտիկ, որ երբ կօրօրւէր՝ ստիպւած էի միշտ ծունկս ետ քաշել բազլում մը չունենալու համար. թէեւ այդ ծառայութիւնը միշտ յանձն էի առնէր.

Պատշգամը իրաւ որ պարտէզի մը պէս էր. երկու խոշոր կաղնի իրենց ծերացած ճիւղերը վրան կը տարածէին: Պատշգամի եղերքները շարւած էին մեծ ու փոքր թաղարներու մէջ ամեն տեսակ ծաղիկներ, որոնցէ զրգուիչ հոս մը կը ծաւալէր: Առջևնիս փռւած էր. ընդարձակ կանաչութիւն մը, ուր բաւական լայն ոտքի ճամբայ մը արքունի խճուղին պատշգամի սանդուղներուն կը կապէր:

Արևը զէնիթին կը մօտենար. ու տաքը սկսած էր զօրանալ: Թմբեցուցիչ, յափրեցուցիչ օդ մը կը բարձրանար խոնաւ խոտերէն, ծառերէն ու կանաչէն.

Վարդուհին կարդուլ սկսաւ. բայց շատ անշնորհք. պարզ էր, որ մաքին չէր հետեւէր:

Ես ալ չէի հետեւեր. կը դիտէի քովնախի իր մաքուր ճերմակ վիզը, ուր խիստ բարակ ազւամազ մը ու խիստ թեթև քրտինք մը իրարու հետ կը զրկւէին:

— Օ՛, ինչ հեղցուցիչ օդ է, բացականչեց յանկարծ՝ գիրքը ծունկերուն ձգելով ու անթարթ ինձի նայելով. և նորէն շարունակեց.

Քանի մը անգամ կրինւեցաւ այս, մինչև որ վերջապէս զոցեց գիրքը, նետեց քովը աթոռին վրայ ու հծծեց.

— Չէ, ալ չեմ կրնար կարդար:

Փռւեցաւ օրրան աթոռի թիկունքին ու սկսաւ ճոճւել: Իր արագ ճոճումէն մազերը երկու ուսերու վարացէն դէսլի առաջ սահեցան ու ամէն ճոճումէն տարութերելով ծէփուն շրջանակի մը մէջ առնին իր շիկնած նրբագիծ դէմքը:

«Սկիզբն է երկանց», մտածեցի ես: Սիրտս սկսաւ թվուտալ և ուժերս ամփոփեցի:

Վարդուհին յանկարծ աթոռէն ցատկեց, գնաց ղեղի սանդուղը, զիտեց քիչ մը հեռուն, եկաւ քովս, խենթ-խելօք բաներ մը ըստնք իրարու, հեռացաւ պատշգամի եղելքը, ծաղիկ մը փրցուց ու սկսաւ չղաձգօրէն փեթուտել:

Բան մը կ'օրոճար:

Ես վերացած կը դիտէի. ինչպէս գեղեցիկ էր: Կարծես օղի ամուր յորձանք մը ինձի գէպի աղջիկը կը քաշէր, ես ակամայ շարժում մը ըրի իր մօտը երթալու համար:

— Օ՛խ, ի՞նչ անուշ կը հոռի. բացականչեց աղջիկը փեթուտած մեխակի մը թերթիկները ափով դէմքին սեղմելով:

— Հատ մը կ'ուզէք, դարձաւ. ինձի.

— Ա՛, օրինրդ, եթէ շնորհէք:

Քիչ մը փնտուեց — կ'ընտրէր — փրցուց ու նեաւեցաւ քովս աթռախն վրայ:

Զեռքս մեկնեցի, որ առնեմ: մէկդի հրեց:

— Ո՛չ. ես ինքս ձեր կուրծքը պիտի անցնեմ. ըստ հաստատ ձայնով մը, որու վերջին թոնը սական գողգոսց:

Ծռեցաւ վրաս, ձախ ձեռը նեռեց ուսս, իսկ աջով ծաղիկը տարաւ օձիքիս օզակին. մէկն ի մէկ ինքզինքս իր բազուկներուն մէջը զգացի: Օղակը կարւած էր. աղջիկը սկսաւ աշխատել ծաղիկը անցնելու համար. և այդ ճիգի տաեն տչնքան ինձի ծռեցաւ, որ իր ուսուցիկ, առանձգական կուրծքը եկաւ իմինիս յարեցաւ. արագ ու անկարգ կը շնչէր ու իր կիզիչ շունչը բուռն հոսանքով կը զարնէր կզակիս ու օձիգէս ներս կ'երթար. պարզապէս զբկած էր ինձի:

Իսկ ինքզինքս աղէկ շեմ ցիշէր. կարծեմ զլուխս կը դառնար. սիրտս պահ մը զարնելէ զարբեցաւ ու ետքն ալ սկսաւ տերեի պէս գողգոսալ: Թեւերս բնազգօրէն բարձրացան ու փաթթւեցան իր ճկուն մէջքին. այդ շօշափումէն ես յանկարծ ցնդեցայ, որոշ շեմ ցիշէր ինչպէս երկաթէ ո՛չ մը զիկզակեց գլխուս մէջ. կամքիս ու ֆիզիքական բոլոր ուժերուս մնացորդով քակեցի թեւերս, աղջկան գրկէն կերպ մը ազատեցայ, դայթեցայ սանդուղներէն վար ու գինովի մը պէս կթոս՝ շիտակ տնեն:

Մոտայ սենեակս ու երեսս իվացր նետւեցաց անկողնիս վրայ:

—Այս արդէն չափազանց է. կը կրկնէի անդադար բարձերուս մէջէն. այս անիբնական է, անհեթեթ: Աստւած իմ, Վարդուհին զիրկս լինի ու ես գիւահարի պէս փախչեմ: Ես, որ զիշեր ցերեկ իր համբոյրը կ'երազեմ: և ինչու. հաճիչք է այս. ի՞նչ հաճոյք. հրէշութիւն:

Եւ ձեռքերս մազերուս խրած ըրածիս վրայ կը զարմանայի. կը զայրանայի. մտածեցի ետ երթամ՝ նորէն փաթթւեմ կրծքին, ըսեմ, պասունմ՝ ամեն բան: Բայց այդ ալ շատ յիմար կը փախչէր: Թրիկոնը վճռեցի. ու թաղւեցաց կրկին մտածումներու մէջ:

Ինծի այնարէս թւեցաւ, թէ դուռս կը զարնէին:

Հազիւ գլուխս դժգոհութեամբ բարձրացուցած էի, որ դուռը բացւեցաւ ու սեմին վրայ տնկւեցաւ. Միքայէլը:

Պահ մը զարմանքով ինծի զիտեց.

—Խէր լինի. ի՞նչ բանի ես. հարցուց:

Նայեցաւ չորս դին, անկողինս, ինծի, դէմքս ու սկսաւ ինդպալ:

—Հասկցայ, հասկցայ, կրկնելով:

Մէկ ալ յանկարծ լրջացաւ ու բժշկի մը պէս, որ իր հիւանդին ախտանիշները կ'որոշէ, ըստ հատիկ-հատիկ.

—Հագուստը խառնակ, մազերը ցրիւ, անկողինը ճմռաքած, դուցէ բարձն ալ թաց. (բարձիս վրայ ծռեցաւ). այս բոլորը կը նշանակէ... ա, այս բոլորը խիստ ծանր պարագայ մը կը նշանակէ. վերջացուց հազիւ խնդուկը բռնելով:

Զայրոյթէս ինքզինքս կ'ուտէի ու կատած երեսր կը նայէի.

—Հէ. չի խօսին, եղբայր. ի՞նչ պապանձեր ես, Փռւյ, այդ ի՞նչ ապօնչ դէմք է. մի՛, մի՛, մի՛ նացիր երեսս, պոռաց երեսը անդին դարձնելով ու շարունակեց. եթէ բոլոր սիրահարածներու դէմքը այդ տեսակ է, լու է կեանքիս մէջ բնաւ. չսիրահարւիմ:

Ես ցնցւեցաց զզացի, որ ամեն բան ճիշտ կերպով դրւշակելու ճամբուն վրան է. սիրահ ճմլւեցաւ. չեմ ուզեր, որ ոչ ոք սիրահ կարդայ: Նեղ վայրկեաններու յատուկ ճարպիկութեամբ մը խկոյն դերս փոխեցի:

—Ուհի, մի՛ ըսեր, Միքէ, սիրահարւիլը պքանչելի բան է եղեր.

և կերպնում, որ վայրկեան մը առաջ սիրահարւելու պիտի աշխատիմ։ քեզի ալ նոյնը խորհուրդ կուտամ։

— Ենորհակալ եմ խորհրդեղ։ զուր յոգնութիւն։ միայն ըսածդդ աղէկ չըմբռնեցի։ ինչ ըսել է աղիսի աշխատեմ։ մենակ աշխատելու որոշումը տալու համար միթէ կարելի է այդ աստիճան ապուշ դէմք մը առնել։ գոնէ կարծեցի, թէ գործը գլուխ հանած ես։

— Ապուշդ քեզի պահէ ու ինձի ականջ դիր։ շխտակը ինձի համար ալ շատ տարօրինակ է այս Քի։ մը առաջ պատկեր էի ու խենթ-խելօք կը մտածէի։ յանկարծ միոքս ինկաւ քու անցեալ օրւան երեակայութիւնը։ կը յիշե՞ս անտառին մէջ։

— Ե՞ս։

— Ես սկսայ մտքով այդ անուրջը շարունակել։ կամաց կամաց ոգեւորւեցայ։ խորհեցայ թէ ես՝ Սիւնեաց Սեպուհս Գուգարաց օրինորդի նշանածն եմ։ և քեզի հետ նշանածիս այց կ'երթամ բղեշի ամարանոցը, և վառ կերպով երեակայեցի այն բոլորը, որ պիտի անցնէր իմ ու օրիորդին մէջ։ Սիրոս սկսաւ եռ գալ։ երեակայութիւնը մոռցած անուրջիս մէջ առաջին անդամ կը խմէի սիրոյ հեշտանքը։ իբր թէ Սիւնեաց օրիորդին հետ առանձին էի, թուզարներով, ծաղիկներով շրջապատւած տեղ մըն էր այն։ կարծես պատշգամ։ մը. օդը յափրեցուցիչ էր, բուրուժնաւէտ, ու մեղկացը նուլ տաք մը։ Օրիորդը նատած էր քովս, ինձի կից։ և կ'ուզէր կուրծքս մեխակ մը անցնէ։ իր շրմունքները այնքան մօտիկ էր խմիններուս, որ իմ շուրջս իր շուրջը կը համբուրէր։ և այնքան մօտիկ կը զարնէր իր սիրով իմինիս, որ ես խելագարւած էի…

— Տղայ, այդ բոլոր այնպէս կը նկարագրէս, որ քիչ է մնացեր հաւտամ պիտի։

— Լուէ. ես ալ, դիմադրելու անկարող, այդ ինձի անձնատուր կուրծքը բազուկներու մէջ շղթայել կ'ուզէի, որ գուռը զարկին դուն էիր։

— Ա.այ, շունշանորդին, ինչ գէշ տեղ եմ հասեր։ զիստնայի քի։ մըն ալ կ'ուշանազի։ Հայ, հիմա կ'ըմբռնեմ, թէ ինչու այնպէս գէշ գէշ երեսս կը նայէիր։ ինչ և է. իրաւ որ շատ կը ցաւիմ գործդ խանգարած լինելուս համար, կ'ուզէս ես երթամ ու դուն նորին շարունակէ։ մենակ առաջւընէ ըսեմ, որ ձիով աղւոր պտոյտէ մը

պիտի զրկւիս. ձիերն ալ վարն են. դէ, ընտրէ. երազական Սիւնեաց օրիորդի համբոյրը կ'ուզես, թէ իրական կացտառ ձի մը:

—Ընարսւթիւնը գժւար է, բայց... ըսի ես գլխարկս առնելով:

—Ասորի իմ քաջս. չէ. եթէ քանի մը ամիս ինծի հետ ապրիս՝ կարելի է մարդու նմամիս: Դէ, մարշ. սղուաց և, զինւորական եղանակ մը որոտալով, զինւորական քայլերով առաջ անցաւ:

Հետեւցայ իրեն:

Չիերը պատշաճի տակն էին: Հեծանք ու աշտանակեցինք:

Այդ յախուռն, արագ ընթացքը տրամադրութիւնս բոլորովին փոխեց, ուժի զգացում մը լցցւեցաւ. մէջս, և ես գոհունակութիւն մը զգացի այս օրւան վարմունքէս: Բայց վաղը. ինչպէս վարւելու էի, ինչ պիտի լսէի: Այդ գժւար հանդիպումը որքան կարելի է յետաձգելու համար՝ մոտածեցի վաղը պարապման չերթամ. և ալ առանց երկար-բարակ խորհելու՝ տուածարկեցի Միքէին վաղ առառ կանուխ որսի ելնենք անտառը:

Միքայէլը սիրով յանձն առաւ. արդէն շաբաթ մըն է գլուխս կը տանէր միևնոյն բանը կրկնելով:

Երբ առանձին մնացի՝ ըրածիս զզջացի: ամբողջ օր մը Վարդուհին չահսնելլ շատ ծանր էր: Բայց միւս կողմէն ալ ուրախացայ. այսպէս աղէկ էր. մէկէն ի մէկ իր աշքէն կորսւիլս անշուշա աղջկան վրայ սաստիկ ազգէր պիտի, պիտի գրգոհը իր կանացիութիւնը. աւելի պիտի փնտուէր ինծի, ու աւելի ուժով զեալի ինծի պիտի ձգտէր. և այն ատեն մեր վերստին հանդիպմը... ահ:

Խւ խորհեցայ ինքզինքս զսպեմ ու խոյս տամ իր աշքէն ոչ միայն մի օր, այլ որքան որ կարող եմ:

Օդոսառու 10.

**Երեք օր է, սակացն ամբողջ երեք օր, որ Վարդուհին չեմ տեսած:**

Գինովի պէս եմ. ըրածս-թողածս չգիտեմ. միտքս կարծես զբաղւած է, թէև էապէս ոչինչ չեմ մտածեր, հոսանքի մէջ ինկած նաւակի կը նմանիմ. ինծի առաջ կը մղեն և ես կ'երթամ. և այդ պէս ինծի վար քշողը իմ մէկ գաղափարս է. «որքան հնար է ինքզինքս հեռու պահեմ Վարդուհիէն»:

Այս զբկանքէն անբացառելի, խենթ գոհացում մը կ'ըստանամ. կը խաղամ սրտիս հետ, ինչպէս կը խաղայ կատուն բռնած մնելին հետ: Ըրածիս բնաւ խելքս չի հասնիր. և խելք հասցնելու ալ պէտք չեմ զգար. միայն զգացու մներուս բոլոր թափովը կը տեն. շամ այս վայրի հեշտանքին մինչև յատակը ծծեմ:

Երբ դպրոցը վեպի մը ընթերցումէն վերջը՝ սիրային անուրջներու մէջ կ'ընկզմէի՝ ինծի այնպէս կը թւէր, թէ երբ սիրոս մէկի մը դրաւէր՝ ալ իր շուքը պիտի լինէի, զիցուհիի մը պէս պիտի սպաշտէի այդ էտկը ու իր մէկ վայրկենական քմահաճոյքին համար ամեն բան զոհէի պիտի. իր հազուատի շփումէն ելեքտրականանայի պիտի, իր ախնարկը իմ օրէնքս պիտի լինէր. իսկ հիմա. ինչ անհեթեթութիւն. զարմանք:

Օրերը կ'անցնեն անդուլ ու անդադար ֆիզիքական սպառիչ աշխատութեան մը մէջ:

Առառուն կանուխ Միխայէլին հետ հրացանը ուսերնիս զարկած կը վագենք անտառ. ու հոն ամբողջովին անձնատուր կը լինենք որսի համոցքին. որսի համոցքը. շատ էի լսած, միայն այժմ կ'ըգգամ, թէ ինչ յափշտակիչ, խելացուզիչ բան է այդ. կարծես մարդ պահ մը ամեն բան կը մ՛ռնաց վիշտը, մտածմունքը, ինքզինքը, իր միակ խոհը որպն է. մէկ կէտի վրայ է յառած իր բոլոր ուշքը և այդ կէտը այն է, ուր կը միտի և հրացանին փողը Վերացած որսորդը, ոգեսուած տենդոս անմիտ եռանդով մը. ալ չի նայիր ժայռ, քար, ձոր, ծառ, ոչինչ. ծառերու չորցած դոս ձիւղերը ձեռքերը կը ճանկառեն, մացառներու փուշը ծոծրակը կը ճանի. ոտքը տալպաւած ծառերու կոճղին կու գայ, կը զարնւի բուներուն... բայց որու հոգ. միայն թէ, երբ վառօդին մուխը փարասոի՞ ոտքերուն տակը տեսնէ իր այդ խոլ հետապնդման նապատակը. վայրի՞ ու արիւնատ զւարձութիւն, բայց անփխարինելի:

Ճաշին վերջն ալ՝ հաղիւ քիչ մը հանդած՝ կը նետուենք ձիերնուս նիւսը ու հայտե...

Ահ, երբ հովը ականջի մէջ դիւցազնական եղանակներ սուլիով՝ կը զարնէ դէմքիցը, յարդէ գլխարկիս եզերքները կը ծալէ քիթուբերնիս, կ'ուռցնէ շապիկիս մէջքը, կը ցրէ ձիուս բաշը. երբ ես ձիուս մէջքիս փակած, հակած դէպի դլուխը, մըրըրկի պէս

կը խոյանամ՝ տարօրինակ, անասելի մարմնական ու հոգեկան խըստանք մը կ'ըզգամ մէջ, ու կը գրգռւեմ; կը հապարտանամ, կը թաղւիմ լիոնցու անուրջներուն մէջ, կը վայրենանամ: ինձի այնողէս կը թւի, թէ Վարդուհին է զիրկս, որ կրծքիս սեղմած հեռու, հեռու կը փախցնեմ... ձին կը թաշի...

—Տղայ, քիչ մը կամաց. կը պոռաց ետևէս Միքէն:

Ես երեւակացութեանս թափէն մորակւած՝ կը մորակեմ խեղճձիս, որ իր վերջին ուժերը կը կծկէ ու առաջ կը սլանայ աչքերէն կայծ, բերնէն փրփուր թափելով:

Եւ այս յորձանուտ մարմնական յոգնութեան մէջ կ'ուզեմ մոռացման տամ ինքս ինձի պատճառած հոգեկան տանջանքներս. կարծես այս մըրկոս շարժման ու ֆիզիքական ուժասպառման մէջ խեղիկ կը ցանկամ հոգիիս պահանջը ու սրտիս բողոքները իմ այս խելառ վարմունքիս դէմ:

Բայց չեմ յաջողեր: Երբ որսէն ուժաթափ կը նետւինք ակընթարթ մը ծառի մը տակ հանգչելու, երբ արշաւէն շնչառակառ կը նստենք ժայռի մը վրայ պահ մը շունչ քաշելու, երբ իրիկունները սենեակս կը քաշեմ, և երբ մանաւանդ առաւօսները մնոելական քունէս կազզուրւած՝ աչքերս կը բանամ օրւան լոյսին՝ կ'ըզգամ որ ներսէս բան մը սիրաս կը կոծէ, կ'ըզգամ որ այլ ևս այս տեսել կարող չե...

#### Օգոստոս 41

**Տեսայ... անբացատրելի է առաջին տպաւորութիւնս:**

**Չիսրշաւէն կը դառնացինք:**

**Արևը մայր մանելու վրայ էր:**

Ես առջեւէն կ'արշաւէի, Միքէն ետևէս, երբ հեռուն ձանապարհին վրայ նշմարեցի Վարդուհին եղբօրը հետ:

Միրսս ճմլւեցաւ. արիւնս զլուխս զարկաւ: Մեքենական շարժումով մը ձիս խթեցի ու շիտակ անոնց առջեւը սանձը քաշեցի:

—Պահ. բացականչեց պարսն Կարապետը:

Վարդուհին նոյնն էր. միայն չորս օրւան կարօսս ուրիշ հրապոյք մը տւած էր իր զիմազծերուն, ուր գլխարկին տակէն թափւած մազերը զեղարւեստական կէսսուեր մը կը ձգէին:

Եսաւ երեխի գեղեցիկ էի այն վայրկեանին. ամբողջ էութեանս վրայ կարօտը զրոշմած էր վագքէն յոգնած մարմինս մեղկ զիրք մը առած էր ձիու մէջքին. այտերս կը վառէին ներքին յուղումէս. երկայն մազերս հովը ճակտիս էր թափած. ու թոյլ կապւած փող-սպատիս տակէն մետաքսէ շապիկիս օձիքը բացւեր կրծքիս մէկ փոք-րիկ մասը կը մերկացնէր արեխ ճառագայթներուն ոսկեզօծումին տակ:

Վարդուհին այլայլած յանկարծակի երեւումէս, յուղւած ըրած տպաւորութիւնէս ու աչքերուս արտայացառութիւնէն՝ խոշոր աչ-քերը գամեց աչքերուս...

Ե՛, շատ էի լսած, կարգացած, շատ ալ լսած, բայց հոդ առաջին անգամ զգացի, թէ աչքերը ինչու կը խօսին: Այդ հայ-եացքին մէջ ես ինչեր չկարգացի. անուշ կարօտ մը, դառն յանդի-մանութիւն, զայրոյթ, հիադում, յանկարծակի եկած մտառանջու-թեան մը մնացորդը...

Բայց ազջիկը իսկոյն իր աչքերը խոնարհեցուց ու ացդ արտա-յացառութիւնը ալ կորաւ: Երբ երկրորդ անգամ ինծի նայեցաւ՝ ալ կեանք չի կար հոն. սան անտարբերութիւն մը:

Այդ ի՞նչ կը նշանակէր:

Ես ձիէս ցատկեցի. այս բոլորը մէկ վայրկեանիմը մէջ. Պարոն կարագետը առաջին խօսողը եղաւ.

—Բայց այլևս մեղի մոռացաք, պարոն Երւանդ:

—Անիրաւ ես, Կարօ. պատասխանեց Վարդուհին եղբօրը. մի՛ մոռանար, որ դուն ալ շաբթւան մը չափ է անոնց չես գացած. ոչ. անարդար լինել պէտք չէ. այնպէս չէ, պարոն Երւանդ:

—Հ՛, այդ ի՞նչ ձեւականութիւններ է. «պէզզաժ» աւարտելու ետևէ էի, թէ չէ... ասաւ պ. Կարագետը:

—Անշուշտ պարոն Երւանդն ալ զբաղում մը ունէր. ի՞նչ միա-կողմանի տրամաբանութիւն է այդ, պատասխանեց օրիորդը:

Ես ոչինչ չէի հասկնար. այս լեզուն ինծի անծանօթ էր: Ես մենակ մէկ բան մը կ'ըսպասէի. բուռն կարօտ, զսպւած յուղումներ, գուցէ, բարկութիւն, յանդիմանութիւններ. արդէն առաջին հայ-եացքն ալ այդ չէր. ի՞նչ են ուրեմն այս անտարբեր խօսքերը. թէ ինծի այդպէս կը թւի:

**Միքէն հասաւ մէզի:**

Նախ խօսակցութիւնը պաշտոնական դոյն մը ունէր ու չեր կապէեր. բայց քիչքիս սկսաւ տաքնալ. Միքէն նիւթ կը քաղէր. մեր որսերէն կը պատմէր, իմ ձախլիկութիւններս. ու պարոն Կարասկովը ամբողջ կրծքովը կը խնդար:

Վարդուհին ալ: Եղբօրը թեւէն միշտ անբաժան՝ կը կառակէր, կը ծիծաղէր իր սովորական եղանակովը. ոչ յուզում, ոչ ակնարկութիւն: Խնձի հետ ալ կը իօսէր, կը հարցնէր. կարծես երկրորդ անգամ կը տեսնեէինք:

Ինչ մտածելս ինքս ալ չգիտէի: Ասուած իմ, արդեօք սխալւած էի. արդեօք այդ աղջիկը զէպի ինձի լուրջ զգացում մը տածած չէ. բայց ոչ, հաւանօրէն մենակ մնանուս կ'ըսպասէ:

Քի: մը վերջը Միքէն անջատւեցաւ. նկատեցի, որ Վարդուհին երկու երեք վացրկեսն ձեւքը բոնած սկսաւ խենթ բանիմը վրայ երկար խօսել. արդէն ամբողջ խօսակցութեան միջոցին անսովոր կերպով բաց էր Միքէին հետ ու աշքերը միշտ անոր վրան:

Անհանոյ զգացում մը ինձի խայթեց:

Եսացող անհամբերութեամբ տուն համնելնուս կ'սպասէի. իւրաքանչիւր քայլը զար մը կը տեէր: Երբ իրենց տան առջեւ հասնք, եղբայրը սովորականին համեմատ ինձի բորկեց ու ներս դնաց:

Մհացինք մենակ. մութ էր արդէն. սիրտս ծովու պէս ալեկոծւած. կ'ըսպասէի, փոթորկիկը փրթէր պիտի... հազիւ կը չնչէի...

—Գիշեր բարի, պարմն Երւանդ. ըսաւ օրիորդը կառարեալ պարզութեամբ, թոթւեց ձեւքս ու սկսաւ սանդուղներէն վերելնել:

Քար դարձայ:

Ուրեմն երած մըն էր ինքզինքս սիրւած կարծելս:

Այս հարցը կ'անցնէր մոքէս, երբ սանդուղի կէսին աղջիկը ետ դարձաւ՝ պոռալով.

—Հա, պարմն Երւանդ, աղէկ միտքս եկաւ. սպասեցէք վայրկեան մը, իննդրեմ: «Դաւիթ բէզլը վերադարձնեմ:»

—Խնչն. հարցուցի աշխուժով:

—Զեր ընկերոջը գալէն իվեր կը տեսնեմ, որ ժամանակ չունիք

միասին կարդալու. և չեմ ուզեր, որ իմ պատճառովս ինքզինքնիդ նեղէք. իսկ առանձին ալ կարդալու տրամադրութիւն չունիմ:

—Սակայն կը սխալիք. ընդհակառակը. ես շատ ժամանակ ունիմ: վազ առաւօտնէ՝ ալ ամէն օր պիտի գամ կանոնաւորապէս:

—Սակայն կարծեմ առաւօտները որսի կ'երթաք:

Ոչ, ոչ. ալ վերջացաւ. պոռացի ես ինքնիրմէս ելած ու ասն. գուղներէն վեր ենելով՝

—Վերջացմաւ... է, շատ լաւ. ըստ ու մութին մէջ աներեսով եղաւ:

Մարմնական շափագանց յոգնութիւն, հոգեկան անսանձ յուգում, երեք օրւան խորին կարօտ ու ծարաւ սրախ մէջ, անզուսպ հանդիպման մը իդէալը գլխուս մէջ. ես իմ յոցերուս դադաթինակէտը, լարմանս վերին աստիճանը, և յանկարծ այս պազ, անտարբեր, անակնկալ վերջնաբանը...

Խորսակւած, ջախջախւած, ծանր-ծանր ես զարձայ:

Ա՛, ես ինչպէս խաբւեցայ, ինչ ստորնութիւն. ինչ ապու միամնութիւն: Ինչպէս եղաւ, որ ես կարծեցի՝ թէ ինծի կը սիրէ. բայց ինչպէս չենթագրէի. միթէ այն բոլորը, որ մեր մէջը անցաւ, այդ աստիճանի սովորական բաներ էին, միթէ այդ կերպով կը վարւի այդ աղջիկը ամեն տղու հետ. և ինչու չէ. ահա Միքէն. ինծի հետ ալ նոյն կերպով չըսկանւ. նոյն անընդհատ ձեռքի սեղմումները. թու. ինչ գուեհիկ բան. գոյ ըրած ֆումիներ, որ անգայտար ամենքին կը կրկնէ. և ես այնքան յիմար եղայ, որ այդ հասարակ աշխարհիկ ձևերը իմ ազնիւ զգացումներուս պատասխանը կարծեցի. ինչ ստորնութիւն. ահ, երկինք, ինչ սոսկալի պատրամնք:

Օգոստոս 12.

**Ամբողջ գիշերը անհանգիստ էի.** շատ ուշ քնացայ:

Արթննալուս պէս առաջին միտքս Վարդուհին եղաւ. արդէն վարժւած եմ անոր վրայ մտածելով արթննալու: Սիրոս ուժին ճմլեցաւ. այս իմ բոլոր անուրջներս օդի մէջ դղեակներ էին. իրանւ, Վարդուհին ինծի չըսիրեր, իրաւ, ինծի չէ սիրած:

Թարմ միտքս սկսաւ դործել, բոլոր անցած մանր-մունր դէպ քերը իր քննութեան բովէն անցնել: Եւ ես քանի կը խորհիւ, քա-

նի անողորր մոքով մեր յարաբերութիւնները կը չիշէի, այնքան վստահութիւն կու դար վրաս:

Ոչ, այդ աղջիկը ինձի սիրած էր. այդ պարզ է արևոն լոյսին պէս, բայց հիմնական վարմունքը. արգեօք քմահաճնչք մըն է. արգեօք երեք օրւան յիմարութեանս փոխարէն վրէժ լուծել կ'ուզէ. բայց այս աստիճան կեղծել:

Ե՛, այս այսպէս չի վերջանար. այսօր ամեն բան կը պարզեմ:

Այս որոշումով սովորական ժամին Զ. երու պատշգամը ելաց: Անորոշ զգացում մը ու անհամբերութիւն մը ինձի կը խեղդէր:

Դուռնէն ներս մտածիս պէս՝ սպասուհին դէմս ելաւ:

— Օրիորդը ուր է:

— Օրիորդը պարոնին հետ շրջելու ելան, պատասխանեց աղջիկը:

Կարծես պազ ջուր լեցուցին վրաս:

— Ե՞րբ դուրս ելան, հարցուցի շրթունքներս խածնելով:

— Կէս ժամ մը կայ, պարո՞ն:

Ճաթէի պիտի: Այդ աղջիկը հետո կը խաղար. այս պարզապէս անքաղաքավարութիւն էր. և վերջապէս ես իրեն հետ զբաղելու կու դացի. առջի երեկոյուն աւ պարզապէս ըսի. ապէրամիսը, գէթ այնքան աշխատութիւնս յարգէր:

Վճռեցի իրիկունը գամ՝ ու հաշիւս մոքրեմ:

Նառ գէշ հոգեկան տրամադրութեան մը տակ տուն վերադայ:

Մեր պատշգամբին վրայ՝ սեմի առաջ կանգնած էր շնիկս. անոր այդ տեսակ անյարմար տեղ պառկելլը ինձի խիստ անհաճոյ երեցաւ, ու ոտքով հարւած մը տի. խեղճը զառն կազկանձեց, արցունքոտ աշքերով երեսս նայեցաւ ու, պոչը տակը քաշած, ներս փախաւ:

Ճաշէն վերջը ժամանակ սպաննելու համար ուզեցի պարոն Մկրտիչի ու տիկինոջ նարա խաղալուն ներկայ գտնւիմ. բայց այնշափ անհամ թւեցաւ այդ զարերու անդադար գլտորւիլը, այդ փուլերու բաթքիւթը, որ զզւեցայ ու ելայ սենեակս:

Առի մատիս մը ու սկսայ ձեռքիս մէջ խաղցնել. մատիսի ծայրը բթացած էր. հանեցի զրչահատս, որ շոկեմ, և միայն այն առեն ձեռքէս վար դրի, երբ ամբողջ մատիտէն հաղիւ բռնելու

բան մը ձեռքս մնաց : Նետեցի մատիտը պատուհանէն դուրս, ինքն զինքս ալ անկողնիս վրայ : Կը մտածէի... ուզեզս չէր կրնար եղրակացութեան մը յանդիր . ենթալրութիւնները գլխուս մէջ յորձանք կուտացին . զնւր կուտան մը կը վնառէի, ուր միտքս կենդրոնանար, զնւր հաւանականութիւն մը կորոնէի, որու վրայ կանգ առնէի :

Երիւան դէմ՝ գաղափարներս խառնակ, կուրուած, սիրս յուզումն զողգոջուն անոնց սրահէն ներս մոտայ :

Տիկինը մեքենայի վրայ կար կը կարէր. ոտքի ելաւ ու հարամցուց Կը խօսէինք՝ չգիտեմ ինչ, երբ Վարդուհիի հնչուն ձախնը լսւեցաւ, որ ներսէն կը պուար.

—Մայրէկ, կարմիր կազմով նօթաներուս ժողովածուն գիտն ուր է :

Ու պոռալով ներս մտաւ, սեմի վրայէն ինծի նշմարեց ու թեթև մը կանգ առաւ, բայց խսկոյն շտեսնել ձևացնելով զնաց դէպի գրքերու դարակը Վերջը յանկարծ ետ դարձաւ դէպի մօրը և իբրև ինծի նոր տեսնելով՝

—Ա՛յս, զուրք հնու էք, պարմի Երւանդ, ըստու, ձեռքս թոթեց, ինչպէս լինելս հարցուց ու անտարբեր սենեակէն զուրս ելաւ :

Ալ չկրցայ համբերեր ու ցատկեցի ետեւէն :

Ան թէեւ անշուշտ ոտքիս ձայնը լսեց, բայց, չի լսել ձևացնելով, մտաւ հիւրասենեակ ու դուռը զոցեց :

Բացի ու ներս մոտայ :

—Ա՛, հրամեցէք, ըստու աթոռ մը ցոյց տալով. ձայնատետրս չգիտեմ ուր են դրեր. կրկնեց, ախ, այս սպասուհին :

—Զայնատետրին կորուսաը այդ նրքան յու զած է ձեզի, ըսի ետ :

—Անշուշտ :

—Այն աստիճան, որ անոր պատճառով ձեր բարեկամին այցը կը մոռնաք :

—Ներսը հիւր է եկած, հարցուց յանկառծ աշխուժով. դրաւ կուգամ, որ պարոն Միքայէլն է :

—Ո՛չ, գժբաղդաբամը, եկողը միան ես եմ :

—Ա՛յս, ձեզի համար կը խօսիք, ըստու կորուսաը վնտուելով :

Այս ակնցայտնի անփութութիւնը ինծի սաստիկ դառնացուց, և մէկէն լոյս մը ինկաւ մոքիս մէջ. չլինի բնազդս սխալւած չէր.

Հինո՞ ճշմարիս որ Միքէն սկսած է իր սրտին մէջ տեղ մը գրաւել,  
որ ես գրաւած լինել կը կարծէի. այս գաղափարը քանի կ'երթար  
աւելի հաւանական կը դառնար, և հետզհետէ ինձի աւելի կը տան-  
չէր: Այդ աղջիկը կը մոռնար ինձի, իմ յուզումներս, մեր ան-  
ցեալը, մեր քիթ-քիթի անցուցած ամիսը իր սիրտը տալու համար  
Միքէն, որ անոր վրայ կը նայի՝ ինչպէս սիրուն գեղարւեստական  
նկարի մը վրայ:

Ես այս համեմատութենէն աւելի կատղած ուռքի ելայ.

—Ներեցէք, օրինրդ, վայրկեան մը. ձեր կորուսուը կրնաք  
միշտ փնտուել, ասկայն ես մեկնիմ պիտի և նախապէս ձեզի հոր-  
ցում մը ունիմ:

—Ինչո՞ւ այդշափ կը շտապէք, հարցուց շիտակ դէմն կենալով  
ձեռքերը ետել:

—Որովհետեւ ներկայութիւնս հոս աւելորդ է:

—Այդ ձեզի ով ըստւ. բայց թնչ է ձեր հարցնելիքը:

—Արդեօք գիտէիք, որ այս առաւոտ ձեզի հետ զբաղւելու  
պիտի գայի:

—Այն, երէկ գիշեր ըսիք կարծեմ:

—Լաւ. ուրեմն ուր էիք այս առաւոտ:

Վարդուհին աւելի շտկեցաւ, աշքերը շեշտ յառեց աքչերուս  
և առանց դէմքի մէկ գիծը շարժելու, ծանր ու յատակ ձայնով մը  
արտասանեց.

—Որ սի:

—Ահ...

Դաշոնի մը սէս բառը խրեցաւ կուրծքս:

Քէնս, զայրովթս, բարկութիւնս վալրկենաբար ցնդեցաւ: Սաս-  
տիկ կարմրեցայ ու խոր ստորնագման զգացումով մը թիկնաթոռին  
մէջ ինկայ:

Վարդուհին լուռ անցաւ դաշնակին առջել:

Խեղճ աղջիկ. ուրեմն վշտացած է ինձմէ. իր բոլոր առերեւովթս  
անհոգութեան և նոյն խոհ զւարթութեան հակառակ՝ վշտացած է  
ինձմէ ու խորապէս:

Իրաւ, վայրկեան մը սուզւեցայ իր վիճակին մէջ. երևակացեցի,  
որ ես իմ տեղը, որ կը սիրեմ, որ ինքս կը նետւեմ դիմացինիս

գիրկը. իսկ ան՝ զիմացինս. կոպառւթեամբ ետ կը հրէ ինծի, կը ձգէ կ'երթայ ու այլ ևս ամբողջ օրեր երեսս անգամ չի նալիր. և այս բոլորը զգացողը աղջկան զգացուն սիրոն է: Ո՞վ զիտէ, որքան տառապած, վշտացած ու շարչարւած է այս երկու երեք օրւան մէջ. բայց այդ կը ծածկէ նոցն իսկ ինծնէ, որ իր գառնութեան աղբիւրն եմ եղած:

Եւ ես չնչին բանի մը համար այսպէս իրար եմ անցած, եկիր եմ երեսին յանդիմանութիւն կարգալու. ա, ամօթ, սոմօթ ինծի, ինչ ոչինչ բնաւորութիւն:

Խորին ախնածութիւն մը իր ծածուկ վշտին գէմ կուրծքս լեցուց: Ուհ, ինչ բիրա, ինչ վայրենի, ինչ խամոլ եմ եղած, որ իմ մէկ անհեթեթ քմահաճոցքիս համար ացդչափ ցաւ եմ պատճառած իմ՝ քնքուշ Վարդուհիիս: Անտարակիցա. չէի զիտակցեր, որ գէշ բան մը կ'ընեմ, գեռ ընդհակառակը կը խորհէի ես. բայց մասածելու էի:

Այս բոլորը կ'անցնէր ուղեղիս մէջէն, երբ ես, անշարժ բաղկաթուի մէջ խրած, դլուխս ձեռքերուս մէջ և արմուկներս աթուի բազու կ'երաւն՝ կը զիտէի ետևէն Վարդուհիի իրանը, ուսերն ու մազերը:

Խոր թախիծ մը, արգահատանք մը, խղճահարութիւն մը կըզգացի գէպի Վարդուհին: Կէպի ինքը տածած զգացումն կը բարձըրէր. ես անպատաւած, արհամարած, վշտացուցած էի այդ փափուկ, չքնաղ արարածը, որ ինծի կը նուիրւէր, որ սրտիս կեանք կուտար:

Դաշնամուկն հոսող գեղգեղուն եղանակ մը զգացումներս աւելի կը սրէր. ես այն աստիճանի հասայ, որ աչքերս արցունքուեցան ու յանցաւոր աղու մը սիէս՝ մտածեցի երթամ ու ներում ինդրեմ: Բայց այդ մտածմունք մըն է, որ չիրագործւիր. այս տեսականն էր, որուն գործնականը գտնել պէտք էր:

Մօտեցայ դաշնակին՝ ու թեթե մը ուսին դպայ. աղջիկը ցնցողական շարժումով մը ինծի նայեցաւ:

Ա, ինչպէս գեղեցիկ էր. ես ուղեցի անհամար համբոյներով ծածկեմ իր թեթե մը կծկւած շրթունքները, յոզումէն շիկնած երեսները, ամառւան երկնքին պէս մաքուր ճակատը, իր բնաւորութեան նման անառակ խոպոպիկները. ու գիցի, բայց իր նայւածքին

մէջ շեշտ մը կար, որ կը սանձէր զգացումներս և ես չէի յանդգնէր գէթ առաջւոն շափ համարձակ վարելու:

—Կողէք սրովս մը լնենք. բսի ես անուշ, վախկոս ձայնով մը:

—Աւշ է. հիմա արել մայր կը մտնէ, պատասխանեց:

—Ի՞նչ փոյթ. հեռու չենք երթար:

—Բայց ձեզի գուր նեղութիւն պիտի տամ:

—Նեղութեան բան չի կայ. քանի որ առաջարկողն ալ ես եմ: Եւ կարծիմ ուրիշ առուն ինձի հետ շրջելու միջոցին նեղութիւն տալէ չ'իք վախենար:

—Այն առեն ուրիշ. հիմա դուք շատ զբաղւած էք:

Ես ձայն չհանեցի:

—Լաւ, երթանք, քանի որ այդպէս է. վճռեց և ուսերուն թեթև շալ մը նեսելով՝ ինձի ընկերացաւ:

Մաքուր մութ-կապոյտ մըն էր վրանիս. հնա-հնա ամպի ծիծեր հայեացքի միօրինակութիւնը կ'աւրէին:

Առաջ աւելի լուռ էինք:

Քովերնուս գիւղացի մը անցաւ, նայեցաւ մեզի ու նշանակիչ կ'բալով մը ժպտեցաւ:

—Այդ մարդը ինչու խնդադ, հարցուց օրիորդը:

—Ով գիտէ, բսի ես:

Թէ՛ գիւղացին ալ, աղջիկն ալ, ես ալ շատ լաւ իրար հասկցեր էինք:

Գիւղացին առիթ եղաւ խօսակցութեան արծարծւելուն: Գիւղական կեանք, իր բարքերը, սովորութիւնները՝ սրտիս մօտիկ, մանկութեանս կապւած նիւթեր. սկսայ խօսել ու նկարագրել, թէկ ուշադրութիւնս բաւական ցրւած էք:

Խսկ աղջիկը լրջութեամբ կը լսէր ու կը հարցնէր: Ոչ մի վախխութիւն. կարծես նոր պարապելու սկսած օրերնիս ենք. կարծիս մէջերնիս ոչինչ անցած չէ:

Միայն խօսելու առեն, քովնոտի գաղտնի տէնտը մը նետեցի՝ հրձւանքով նշամարեցի, որ նոյն տեսակ գաղտնի նայւածք մը աչքերէս անմիջապէս խուսափեց:

Արդէն մթնած էր. ու դիշեր մը:

— Դասոնանք. լսաւ Վարդուհին:

Լուս էինք. ու քով քովի կը քալէինք. քանի կ'երթար յուղումն կ'աւելանար. հովը, մուժը, մեր առանձնութիւնը, իր մերձաւորութիւնը սիրոս աւելի ու աւելի կը հրահրէր: Յոլոր էութեամբս գրկել կ'ուզէի այդ աղջիկը ու բոցէ համբոցրով մը մօխիր զարձնէի երեք օրւան կարօտս, այսքան ժամանակւան չարչարանքներս, Վարդուհիս պատճառած ցաւս, իմ երեկւան կասկածներս, բոլորը, բոլորը... բայց աղջիկը այնքան լուրջ էր, որ չէի համարձակիր:

Ուզեցի գոնէ թես առնեմ:

— Մուժ է, դուք ալ կարծեմ յոդնեցաք, օրիորդ. թես չէք մտնիր:

— Ո՛չ, հոգ չէ. չեմ յոդնած. պատասխանեց կարծ:

Այս մերժումը ալ չափը լրացուց. բաժակը յորդեց. ու հաշիւս կորսնցուցի:

Վարդուհին թես առնելը պահանջ մը դարձաւ:

— Բայց կը խնդրեմ, որ թես մտնէք. բախ թեւէն քաշելով:

Աղջիկը կեցաւ, երեսս նայեցաւ վայրկեան մը մութին մէջէն, թողուց որ իր փոքրիկ ձեռքը թես անցնեմ ու հեգնական ծիծաղով մը աւելցուց.

— Քանի որ կը խնդրէք, չ'արժէր, որ մերժեմ, միայն կը զարմանամ մարդկային սրտի փոփոխութիւններուն վրաց:

Իրաւ ւր: Դերերնիս բոլորովին փոխած էինք. առաջ ինքը բռնի թես կը մտնէր, հիմա ես բռնի թես կ'առնէի:

Բայց նոյն վայրկեանին այդ տեսակ բարակ բաներու ականջ կախելու անկարող բոլոր ուժովս պինդ մը սեղմեցի բազկիս որ կրծքիս յանձնւած այդ փափուկ, բնիքուշ թաթիկը:

Վարդուհին մկան խնդրակ ջղային, անքնական խենթ խընդուք մը:

Ես աւելի սեղմեցի:

— Սակայն ինչու կը խնդրաք:

— Ա, տնեն, տուն զառնանք. կմկմաց, այսօր քիչ մը տիար եմ, ջիղերս գրգռւեցան:

Ու թեր թես ազատեց:

Ես կը հասկանալի ։ Նախորդ գէպքերը ինծի փորձառու էին ըրեր ։ ալ զժւար ինքինքը կը զսպէր ։ ու սանձւած զգացումներու յորդումէն վախնալով՝ խոյս տալ կ'ուզէր :

Միւնոյն խաղն էր, որ կը կրկնւէր ։ միայն դերասաններն էին իրենց դերերը փոխանակեր :

Դուան առւաջ նորէն թևը բռնեցի :

—Ինծի հանգիստ ձգեցէք, ըսաւ լրջութեամբ, բայց չկրցաւ իր լրջութիւնը սրահել ու նորէն խնդաց :

—Ինչու բարկացած էք :

—Ո՞վ ըսաւ թէ բարկացած եմ. ամենելին :

—Ինչու կը խնդաք :

—Այնպէս. սակայն ձեզի՞ ինչ :

—Իմանալ կ'ուզեմ :

—Բայց ձեզի չի վերաբերիր. ձգեցէք թևս :

—Չեմ թողնիր մինչեւ սրատասխան չի տաք :

—Բոնութիւն :

—Ինչպէս կ'ուզէք՝ այնպէս հասկցէք :

—Ի՞նչ տարօրինակ տղայ էք :

Վայրկեան մը մոածեց ու յանկարծ աւելցուց աւելի կակած ձայնով.

—Լաւ, ձգեցէք թևս, վաղ առաւօտ եկէք ձեզի սրատասխանեմ :

—Կը խոստանաք. չէ՞ որ առաւօտները որսի կելնէք, ըսի ես քմծիծաղ:

—Ո՞չ, ալ վերջացաւ... սրատասխանեց երէկ իրիկւան բառերս ինծի դարձնելով ու ժպտեցաւ :

Չեռքը պինդ մը սեղմեցի ու բաժնեցայ:

Սիրոս թեթևած, հանգարտած էր :

Արտասովոր փափուկ, անուշ հաճոյք մը կ'ըզգայի կրծքիս տակ:

Յատկելու, երգելու բաղձանք մը կար մէջու:

Տունն մօնելուս պէս սրատաւ աղախինը դիմացս ելաւ. խենթ փափագ մը ունեցայ. վրան յարձակւեցայ խնդալով, ու գրկածիս պէս սկսայ սովոր մը եղանակել ու դառնալ: Խեղճը կը քաշքշւէր, կը հրէր, ազատւել կ'ուզէր, կը խբնէր. բոլոր անեցիք շուրջս ժողվւած մարելու չափ կը խնդային:

— Երւանդ, իսենթցմբ, կը կրկնէր տիկինը լիաթոք ծիծաղին  
մէջէն:

Մինչև խնդալէն, ցատկելէն, երգելէն ուժասպառ՝ թողուցի  
դամա ու հեալով ինկայ դիւանին վրայ:

Օգոստոս 13

Դեռ սովորական ժամանակին բաւական կար. սակայն չկրցալ  
սպասել ու շտապեցի Վարդուհինց առունը:

Վարդուհին պատշամբը նստած թերթ մը կը թղթատէր:

Թափանցիկ, նուրբ, ճերմակ շրջազգեստ մըն էր հագած, որու  
մէջէն կերեւէր իր ամբողջ կլոր թեւը ու կրծքին մէկ մասը:

Ժայռեցալ և բարենցի:

Չի պատասխանեց, միայն ոռքի ելաւ. ու միասին իշխանք  
պարտէզը:

Երբ հովանոցը մտանք՝ մասովը իմ սովորական տեղս ցուցուց:  
Նստեցայ, ինքն ալ անմիջապէս իմ՝ քովս:

Վայրկեան մը լուռ էինք. երկուքնուս սիրուն ալ լեցուն էր.  
Երկուքն ալ յու զւած. կուրծքներիս այնքան առեն ճնշող զգացում:  
Ները պուտկային պիտի. բաւական էր միայն, սկիզբ մը. մէնք պէտ  
սկիզբը չեինք զաներ ու լուած էինք:

Վերջապէս լոռոթիւնը խզեցի:

— Օրինրդ, խոսոումնիդ:

— Ի՞նչ խոսոում:

— Խնձի ըսէիք պիտի ձեր երեկւան բարկութեան ու խնդալաւ  
պատճառը:

— Այն. բայց ես հիմա ձեզի ուրիշ բան պիտի ըսեմ:

— Ի՞նչ:

— Պիտի ըսեմ, որ դուք չափազանց տմարդի, անհոգ, եսասէր  
ու անքաղաքավարի էք:

Այս այնչափ անակնկալ էր, որ ոռքի ելայ:

— Նստեցէք, ըստու ու ձեռքէն քաշեց. ես իրեն այնքան մօտ  
ինկայ, որ շրջազգեստին ծալքերը ծունկերուս տակը մնայ:

Աղջիկը առանց ձեռքս ձգելու շարունակեց.

— Ի՞նչ կ'անւանէք դուք այն տղան, որ իր գաւազանի կոթովը

կը խաղաց, երբ քսաներորդ անգամ իր միակ դրացուհին քովեն կ'անցնի:

Ես երեսը նայեցայ. չափազանց հեռեւէն էր սկսած:

—Ի՞նչ կ'անւանէք դուք այն տղան, որ շաբաթներով աղջկան մը հետ շարունակ կը պտըտի՝ առանց անգամ մը թել առաջարկելու:

—Օրինրդ, արդէն քաւեցի...

—Ի՞նչ կ'անւանէք դուք այն տղան, որ, աղջկան մը օգնել խռոսանալով, օրերով կը ձգէ կ'երթաց առանց ոչինչ յայտնելու:

—Ներեցէք, խնդրեմ. ճշմարիտ...

—Ի՞նչ կ'անւանէք դուք այն տղան, որ յանկարծ օձէ խայթածի պէս կը ձգէ ու զիւահարի պէս կը փախչի, երբ անոր կուրծքը ծաղիկ մը խոթել կ'ուզեն:

—Բայց, օրինրդ...

—Ի՞նչ կ'անւանէք դուք այն տղան, երբ իր անշնորհքութիւնը իրեն հասկցնել կ'ուզեն՝ քիթը-բերանը թիզ մը կը կոխէ ու զայրցթի ձեւեր կ'առնեն: Հետո, լսէք այդ տղան ի՞նչ կ'անւանէք դուք:

—Բայց միջոց չէք տար, որ պատասխանեն:

—Ի՞նչ. դեռ պատասխանել կ'ուզենք. կ'ուզենք ձեզի արդարացնէք. մի՛, մի՛ լսեցէք, բերաննիդ մի՛ բանաք. տնակառածառ նոր անքաղաքախարութիւն մը կ'ընէք:

—Ներեցէք, օրինրդ. եթէ յանցանք մը ունիմ՝ բնաւորութիւնս է:

—Յնաւորութիւն, սիրուն արդարացում:

—Ուրիմն չէք ներիր. լսի ձեռքը սեղմելով ու անուշ, քծնող նախածք մը սպրացնելով աչքերուն մէջ:

Յուզումէն կը դոզար իր նուրբ հագուստի օդէ ծալքերուն մէջ:

Իր կողմէն ամենաթեթև թողլասորութիւն մը և ես ալիքի մը պէս կուրծքին պիտի փաթթւէի. ալիքի մը պէս, որ քորալէ ժայռին ձերմակ լանչին կը փարի. բայց զգիտեմ ի՞նչ զաղիչ, ի՞նչ պատկառու բան մը կար իր ոյզ հալարտ դիբքին մէջ, իր այդ չքողարկած յուզման մէջ, որ ես բացի հիացումնով ու յափշտակութեամբ դիտել՝ շարժում՝ մը ընելու չիցանդպնեցաց:

Աղջիկը կամաց ոտքի ելաւ ու վայրկեան մը լուս ինձի գի-

տեց. կարծես բան մը ըսել կուզէր, երբ նորէն շրթունքը սեղմեց  
ու քայլ մը հեռացաւ. դուրսը ոտքի ձախն կար:

Հովանոց մոտաւ սպասուհին:

— Ի՞նչ կուզես, հարցուց օրիորդը զայրացած. քեզի չեմ ըսած,  
որ մեր սարապունքները չընդհատես:

— Թող օրիորդը ներէ. դեղձան մազերով երիտասարդ մը եկեր  
սպարժնը կը փնտուէ. ըսաւ խեղճ ազջիկը ինծի ցոյց տալով:

Ես վարանած Վարդուհին նայեցայ:

— Գնացէք, ըսաւ ռուսերէն. ձեր ուզածն ալ այդ չէ, աւել-  
ցուց հայերէն:

— Սակայն, օրիորդ, անիրաւ էք, ըսի վշտացած:

— Գիտեմ, գիտեմ. շատ սպարզ է. մինչև հիմա որսի էիք, ասկէ  
վերջն ալ դեղձան մազերով երիտասարդներ պիտի բուսնին մեր  
զբաղումները կտրելու համար:

Ես իրեն մօտեցայ. բան մը ըսել կուզէի, երբ՝

— Գացէք, գացէք, կրիսեց հրամայական շեշտով մը. դէպի  
ինծի անքաղաքավարի լինելը արդէն ձեր սկզբունքն էք ընդունած,  
զոնէ դէպի ուրիշները զգուշ եղէք. գացէք:

Ես չգիտէի ինչ լնեմ. եթէ սպասուհին հոն չլինէր՝ անտարա-  
կոյս ծայրացեղ միջոցիմը կը դիմէի. բայց այդ ազջիկան առջելը գալ-  
թալզական տեսարանի մը տեղի չիտալու համար՝ ծեծւած ու պոչը  
կծկած շան պէս դուրս ելայ հովանոցէն՝ զայրոյթէս ինքզինք  
ուտելով:

Անցայ արագ սրահէն. ելայ սպատշգամ. խառնակ մտածում-  
ներուս մէջէն վիստա ելով, թէ ով էր լինելու այդ գեղկուն մաղե-  
րով երիտասարդը:

Եւ ով էր. Միքէն...

Կատաղութիւնէս շրթունքս խածի:

— Ուր ես, եղբայր, ժամ մըն է քեզի կը փնտուեմ. սոսաց  
Միքէն սանտուզներու վարէն ինծի նշմարելուն պէս:

Կոպիտ խօսք մը հազիւ ակռաներուս տակը սեղմել կարողացայ:

— Քալէ, քալէ. արդէն ուշ մնացինք. պուաց թիւն քաշելով:  
Ուր, ինչ կայ. հարցուցի դժգոհ շեշտով մը:

— Քիթ որո՞ւ է. այնքան տեղ ետևէդ գալուս ու փնտռելու

համար շնորհակալ լինելուդ փոխարէն է այս. վայ, աշխարհք, վայ:

Ու նորէն թես քաշեց:

— Բայց ուր. ի՞նչ կայ. մէկ հասկնանք:

— Ի՞նչ պիտի լինի. մայրս այսօր պատւական քիւֆոէ է եփեր.

Հայու փառաւոր քիւֆոէ, անշուշտ կարօտցած կը լինիս. եկայ քեզի տանեմ, որ միասին ուտննք. բայց եթէ կրնամ՝ գտիր. ձեր տունէն իջազ ձոր, ելաչ անտառ. վերջապէս տիկինը ըսաւ, որ կարելի է Զ.-երուն ես, կուգամ կը հարցնեմ այդ սիրուն քածին. Չգիտեմ, երթամ նացեմ կըսէ: Խելքս չի հասնիր. դուն հոս գտղուկ կը մտնես, ի՞նչ է, տղայ, ի՞նչ յարդի տակէն ջուր ես, Է:

— Յիմար, յիմար մի՛ խօսիր նորէն. չէ, քեզի ըսած եմ, որ երբեմն օրիորդի հետ միասին կը կարգանք:

— Բաներ մը ըսեր ես. կ'երեակայեմ՝ շատ ախորժելի բան պիտի լինի ացգ: Իրաւ, կատակը մէկդի. ացգ աղջիկը վրադ ի՞նչ տպաւորութիւն կ'ընէ. սիրտդ բնաւ չի յուզւիր, երբ իր խոշոր կրակոտ աչքերը վրադ կը գամէ, արիւնդ չեռար, երբ միասին կարդալու կը նստիք. կուրծքդ չի սեղմէիր, երբ կամաց մը ձեսքդ կը սեղմէ բարեւի պատրւակով. շան աղջիկը երեւի քեզի ալ շատ կ'ընէ. անցած իրիկուն տցնպէս ձեռքս սեղմեց, այնպէս երեսս կը նայէր, որ քիչ մնաց վիզը պիտի փաթթւէի:

Այս լեզուն վրան ծանր կ'ազդէր:

— Ե՛, պատասխան չի տամ. բայց դուն անխելք ես, արդէն բոլոր խելացիները անխելք են. այնպէս չէ:

Ու սկսաւ քահ-քահ խնդալ:

— Բայց դուն ուր ես այս երկու օր է, յանկարծ խնդուքը ընդհատեց. անցած օր քիչ մը տկար եմ գրեր էիր. կոկորդտ չօռ փակաւ:

— Երկու երեք օր արևներուն տակ թափառելս կարծեմ գըլ-իուս զարկաւ. վճուցի այլ ես որսի չելնեմ:

— Ալխելքութիւն, արեւ զարկեր է եղեր. ինծի ինչու չի զարնէր:

— Դուն վարժւած ես:

— Դուն ալ կը վարժւիս. գիւղացու զաւակ չես. գլխուս արիստոպքաս է դարձեր. թէ անցեալ օր Սիւնեաց Սեպուհ ըսելուս իրաւ հաւտացիր:

—Ե՛, քիչ մը, պատասխանեցի ես ակամայ խնդալով։  
Տուն հասանք։

Մայրը ինչ լնելը չգիտէր, ինձի համելի լինելու համար  
կը մաներ, կ'ելնէր։

Նատեցանք հացի. Միքէն շարունակ կը շաղակրատէր. երեա-  
կայելու է իմ՝ դրութիւնս. կերանք այն «զատւական» քիւֆտէն,  
թէև բնաւ ախորժակ չունէի. կերաց ու համն ալ գովեցի, թէև  
բնաւ համ չառի։

Ո՞հ, սոսկալի օր մը անցուցի. յուզում, սրտի ծածկւած ան-  
հանգստութիւն, կեղծելու անհրաժեշտութիւն, ուրախ-անփոյթ երե-  
նալու տանջանք...

Աւշ ատեն միայն օձիկս ազատեցի Միքէի ճանկերէն ու կաս-  
կած չի տալու համար անզամ մը տուն հանդիպելիս վերջը՝ բո-  
նեցի արքունի ճանապարհը։

Ամպոս իրիկուն մըն էր. ամպոս ու հովոս. բոլոր ուժս հա-  
ւաքած կը վագէի հովին հակառակ. տուանձկական, գրեթէ շոշա-  
փելի բան մը ինձի արգիլել կ'ուզէր. ես կը մաքառէի. կ'ուզէի  
պատուեմ, անցնեմ. հովը ետ կը հրէր։ Եւ այս պայքարը սրախ  
բաւականութիւն կուտար. միոքս ամբողջովին անձնատուր էր եղած  
մինչև իրիկուն այնպէս պինդ-պինդ ծածկել ջանացած զգացումիս.  
կուրծքս նեղ կու գար. և այդ եռումը իր ամանին մէջ անպարփառ  
գուրս կը յօրդէր։

Մթութիւնը աւելի կը հրահրէր մտածումներս, ու խօլ վազքս  
նոր ովեռութիւն մը կուտար. երեակայութիւնս բւնիել մկամաւ։

Հովը, որ առաջ արգելք մը կը թւէր ինձի, հիմա Վարդու-  
հիսս առանձնական լանջն էր, որ թեերուս մէջ շղթայելու կը վա-  
զէի. կը սարսահին շրթունքներս համբոցը մը ճիգերով. բացց այդ  
լանջը կը խուսափէր։ հնդ մը միայն գրկիս ու շունչիս տակը թող  
նելով...

(Եարունակելի)

## ԴՐԻՆ ԿԱՂՅԹԵՒՐ

Ե Ա Ն Ո Ւ

Դրւն կ'աղօթէիր յուզւած, դողահար  
Կոյս նընջարանիդ առանձնութեան մէջ.  
Զինջ արցունքիդ տակ ժըպիտ կը խաղար,  
Մինչգեռ բընածին շարժումով մը մեղկ՝  
Մերկ, լի թէերըդ կը հիւսւէր իրար:

Գլխու ամեն մի թեթև ցընցումիդ  
Կապէն ազատւած մազերըդ առատ,  
Խնչպէս ոսկէզօծ առւակ մը սըրտմիտ,  
Կը հոսէր ուսէդ կոհակ ու կոհակ  
Դէպի ձիւն. փիլրփուր գիրկը անկողնիդ:

Ի՞նչ կ'աղօթէիր, ի՞նչնւ. չըգիտեմ:  
Միայն կը ցիշեմ, որ քու փըզոսկըէ  
Կիսասքօղ կուրծքիդ ալիքներուն դէմ,  
Ըզգացի տենչ մը Աստւած լինելու,  
Արուն կ'աղօթես դոն ամեն ատեն...

## ՔԱՐ ԶԱՐԴՈՂՆԵՐ

(ԾՈՒՐԻԱԹԻ յիշողութիւններ)

Ա. ՓԱՓԱՋԵԱՆՑԻ

Իմ բարեկամը սիրում է լաւ ապրել, երբ կարող է: Ամեն յարմարութիւններ ունի և ոչինչ չէ ինացում լաւ բնակարան ունենալու համար: Դրա համար էլ նա իր առողջը վարձած ունէր քաղաքի ամենալաւ տեղում, խճուզու վրայ: Բնակարանի ամենալաւ մասը պատշգամն էր, որ կիսովին դուրս էր պարզուում զէպի խճուզին և ունէր իբր տեսարան՝ գետը, այգին, լեռներն ու բերդը մի կողմից, իսկ գէմուկէմից էլ մի քանի հար և առների պերճ տներ:

Պատշգամը զարդարւած էր վարագոյրներով, որոնք ես իշեցրի մի օր ժամը 12-ին և, ապասելով ճաշի, առի մի գիրք, նատայ բազկաթուի մէջ ու ացգայէս հանգիստ և հովանու մէջ՝ սկսեցի կարդար:

Կարդում էի, բայց զլուխս բան չէր մտնում: ուղեղս դեռ չէր տաքացել, ուշադրութիւնս չէր կենդրոնանում: մի նախադասութիւնից յետոյ աչքերս զբքից հեռացնում էի և ուրիշ բանի ուղղում: Յըինակ հէնց նայում էի զէպի ցած խճուզու վրայ քար փշողներին ու նրանց զործողութիւնը զիտում: Սկզբում չէի էլ զգում, յետոյ էր միայն որ տեսայ նրանց պարսիկ լինելը, իսկ աւելի յետոյ էլ կենդրոնացնել յաջողւեց ուշադրութիւնս և սկսեցի հետազոտել այդ տեսարանն ու նրան բազկացնող մասերը:

Երկու պարսիկներ էին Պարսկաստանից — երեխ Թաւրիզից կամ Խոջից: Թաղեայ թասաձև զլխարկ էին կրում: կապոյտ կտաւի արխալուխ էին հագել և այն էլ այնապէս կտրուած, խունացած ու նոր

կաորներով կարկանած արխալուզ, որի պէս պարսիկները միայն կարող են հագնել։ Կարտաւածներ ու ծակեր անողակաս էին թէ թևերի և թէ կրծքի վրաց։ Սպիտակ շալւարը կեզառու ու կարստած՝ ձգելու աստիճանի, իսկ նրանք ձգելու անդամ՝ չէին մոտածիլ, որովհետեւ տնտեսագէտ էին երևում։ չէ որ միշտ քարերի վրաց էին նսումն ոտքերի կօշիները—որեիններ, պատած էին հսան կաշու կաորներով, որովհետեւ քարերին շատ էին շփում ոտքերը։ Նսումն էին ոտները պարզած դէպի առաջ. գնում էին քարի մեծ կաորը, ոտքերով բռնում, իսկ կո անով ջարդում. ջարդելուց յետոց ոտներով հրում և ետ տալիս—ահա նրանց պարբերական ամբողջ գործողութիւնը։

Ախզի։ արևէ այլում էր նրանց մէջքը ետեից. երեխ միշտ էլ այդ դիրքով էին նսումն նրանք, որովհետեւ նրանց լերկ վիզը ետեից՝ հսանել էր նեղրային սևութեան։ Աև էր դէմքերն ու ձեռքերը. դէմքը թշւառներին յատուկ խոր կնճիւներով լիքը, աչքերն արիւնով լցւած, քթերի կաշին՝ սողոննիած, այսերը այրւած, ձեռները հողոտ ու կոշտ, ոտների ոլոնիներն՝ աղտոտ ու թռւի։

Երբ ես գննում էի այդ բոլորը, իմ մէջ հարց ծագեց թէ արդեօք որքանով են վճարւում նրանք այն փոքրիկ ջարդւած քարից սլիրամիդի համար, որոնցից ամեն ոք կարող է տեսնել խճուզիների կողքին։ Յետոյ էլի մի հարց գոյացաւ այդ հարցից, այն է թէ օրական արդեօք քանի՛ սլիրամիդ կարող էին ջարդել երկուոր ժիասին։ Մատքերեցի որ մի քանի տարի առաջ էլ այդ հարցը հետաքրքրել էր ինձ, հարցը էլ էի, դիտէի, աշխատեցի չիշել, բայց մոռացել էի։

Նայում էի անընդհատ։ Նկատեցի իսկոյն որ կարւող քարերը լաւ կարծր էին. պէտք է որ որձաքար լինէին, բայց կային և գրանիսի կոորներ, որովհետեւ դէս ու դէն էին ցայտում յաճախ կրիստալային կազմածքներ, որոնց մուրճի 5—6 հարւածներ հազիւ էին կառուկտոր անում։

Ուժի, ինչ զժւար գործ էր։ Արեխ տակ, այդպէս անցարմար կերպով նսուած և անդագար միևնոյն տաղտկացուցիչ գործը։ Ինձ եթէ մի սլիրամիդի համար 10 բուբլի իսկ տային՝ չէի անիլ։

Այսուղ լիշեցի որ բարեկամիս ծառան խմելու առար չուր

մասակարարելու համար, պահ մատաջ երկու վետքոներ կախ էր արել մի կոր ձկուն փայտից, լցրել էր նրանց ջրով և վերապահում էր մի գերս հեռու ազբիւրից: Հեռում էր, քրանաթոր, ծնկները կքում էին և ես մասածում էի թէ որքան սոսկալի բան կը լինէր եթէ ինձ ասիցէին այդ գործը կտառարեր: Քարեկամն ասում էր որ 100 բուբլի էլ տացին՝ ինքը չէր անիլ այդք: Կ'ուղենացի որ նա զուրս գար և ես նրա ուշագրութիւնը հրաւիրէի քար փշրողների վրաց: Անշուշտ նա աչպայխիների հարիւր անգամ՝ տեսած կը լինէր. տեսած կը լինէն շատերը, միշտ էլ տեսնում ենք. բաց ոչ մի ժամանակ առանձնապէս կանգնած, գոնէ ես, չէի զիտել այդ տեսարանը: Հետաքրքիր մի տեսարան էլ չէ. ոչ էլ գեղարւեստական. սարսափելի է միայն. — Արեւը մի ճեղքից քիչ խփելու ժամանակ իսկոյն ամեն հնարք գործ գրի որ վարագոյրները գնդասեղով և այն միացնեմ ու ճառագայթի մուտքն արգելիմ: իսկ ինձնից քիչ հեռու, առաւտեսնից ի վեր, 7 ժամ անընդհատ կատարեալ արեի մէջ՝ քար են փշրում երկու խղճալի արարածներ:

Արգեօք ի՞նչ սիրոի ստանացին ամբողջ օրւաց այդ տանջանքի համար: Խօսում էին. սկսեցի լսել որ զուցէ հարցիս պատասխանը իմանալ յաջողւեր ինձ:

Լսելու համար՝ քիչ ծուեցի գետի փողոցը:

Այդ միջոցին էր որ մի սուր ձայն լսւեց:

— Բուլին, աղաղակում էր մէկը, որ մի մեծ սակառ աջ ուսին, կքւած նրա ծանրութեան տակ, ձեռքի փայտը իբր լինարան գործ ածելով, բարձրանում էր փողոցն ի վեր, անցնելով ճիշտ քար փլշ բողների կողքից:

— Բուլին. կրկնեց նա ակնարկը մեքենայօրէն քար փշրողներին գարաճրած:

— Ի՞նչ. հարցրեց պարսիկներից մէկը և մուրճը ցած գրեց—բուլին... զա ի՞նչ բան է:

Հաց ծախողը կանգ առաւ նրանց կողքին:

— Հաց է, ասաց:

— Բաս հացը աչպայխ կը ծախեն:

Միւս պարսիկն էլ դադարեց, մուրճը գետին դրեց ու գտնաւ լով լնկերին՝ նկատեց անհամբերութեամբ:

— Զես հասկանում, Մահմէդ, դա չացի հաց է:

— Յոյց առուր նայենք, ասաց Մահմէդ հաց ծախողին:

Վերջինս երեխ հոգնել էր և մի փոքրիկ առիթի էր սպասում  
որ սակառը ցած զնի: Յած էլ դրեց, բայց երեսի ծածկոցը չհանեց:

— Բաց, տեսնենք, հարցրեց Մահմէդը պարսկական շատուկ հա-  
մարձակութեամբ—տեսնենք ինչ տեսակ հաց է:

— Խօ չէք առնելու, էլ ինչու բանամ:

Միւս պարսիկը վիրաւորւեց:

— Ենից գիտես որ չենք առնելու, այս հայ:

Հայ էր ծախողը. կուացաւ և սակառի ծածկոցը ետ քաշեց.

— Ահա տեսէք, ասաց—բուլիի է էլի:

Սակառը լիքն էր բուլիիներով, նոր էին եփւած ու մի շատ  
անուշ հոտ փեցին պարսիկի քթածակերի մէջ. շատերի երեսի  
կարմրութեան վրայ մարգարիտների պէս փայլվում էին շաքար-  
աւաղի հատիկներ:

— Էս ինչ տեսակ հաց է, մասը դրեց մէկի վրայ Մահմէդը, և  
ինչ փափուկն էլ է. սու ուստիմ են:

— Ե հարկէ, ծիծաղեց ընկերը:

— Չայի հետ են ուստիմ, աւելացրեց ծախողը—շատ համովն է:

— Մէկ նայեր այսուեղ է, Շիրին, դրդեց ընկերոջ Մահմէդը և  
ուզեց ձեռք առնել մի բուլի:

— Ձեռք մի սալ, կը փշրես, արգելեց ծախողը:

Պարսիկը ձեռքը ետ քաշեց, յետոյ ուզեց մուրճը ձեռք առ-  
նել, բայց էլի թողեց և մի տեհնչալի հայեացք ձգելուց յետոյ սա-  
կառի վրայ՝ ասաց.

— Փահ, փահ, ինչ լաւ հացեր են էլլու:

Մախողը ծանրութեամբ սկսեց ծածկել բուլիիների երեսը:

Մահմէդը ցուցանատի վրայ բոցթով մի եղնկաշափ ցոյց տալով.

— Մի այսքան կարի առուր, ասաց—տեսնեմ ինչ համ ունի:

Միւս ընկերը ժաղիտը դէմքին՝ լսում էր. չէր էլ ջարդում. եր-  
բան միայն կռանը տափակեցրած՝ հեռւից մօտ էր քաշում քարի  
թռչուած կտորները:

— Ենիչպէս կարելի է, պատասխանեց ծախողը և սակառն ուսի  
վրայ ձգեց—չէ, կը փշանայ:

—Մի այսքան էլի, պնդեց Մահմէդը—խօ աւելի չեմ ուզում, գուցէ, եթէ լաւն է, առնեմն

—Նատ լաւն է, չես տեսնում որ շաքարով է շինւած:

—Նաքարը երեսն է, խօ մէջն էլ չէ:

—Մէջն էլ է շաքարով:

—Բնեյ... զարմացաւ Մահմէդը—մէջն էլ:

—Ի հարկէ, ասաց ծախողը—իւզով էլ:

—Բնեյ... իսկ ինչն է կարմիրեցնողը:

—Իւզն է և ձուն:

—Զմու էլ կայ մէջը:

—Կալթ էլ:

Մահմէդը լնկերոջը նայեց. աչքերը մեծացան փափագից, քթի ծակերը լայնացան ու վերի շրթունքը բաժանեց ցածինից. ախորժակը խիստ գրգռւել էր:

Տախողը մի քայլ արաւ գնալու: Մահմէդը անձկանօք նրան նայեց և սակասին: Նիրինը տեսաւ այդ, մի վայրկեան կնճռեց ճակատը, յետոյ գարձաւ ծախողին ու ասաց կտրուկ ձայնով.

—Մէկը քանին:

—Հինգ կոսէկ, պատասխանեց ծախողը և կանգ առնելով՝ կիովին գարձաւ: Կարծեց որ առնելու էին:

—Ի՞ն. բացականչեց Մահմէդը իսկոյն. անցետացաւ դէմքի անձ կալի արտայայտութիւնը—այդքան թմնկ, կրկնեց նա, յետոյ մուրճը ձեռքն առաւ և մեզմ ձայնով աւելացրեց:

—Չեմ ուզում, գնամ. գէհ, գնաս էլի:

Հաց ծախողը նրան նայեց մի քիչ, յետոյ՝

—Գնում եմ էլի, ասաց—ինչու ես բարկանում:

Հեռանալ սկսեց:

—Երեք կոսէկով չես տալ, զուաց նրա եաւից նիրինը:

—Ոչ, չեմ ուզում, թող զնայ, վրայ տւեց Մահմէդը, կառադութեամբ մուրճը քարին խիելով:

—Ոչ, պակաս չի լինիլ, զուաց հաց ծախողը, որ հեռանում էր:

Նա գնում էր դէպի դիմացի տունը, երեխ այնտեղ նստող աստիճանաւորին սուրճի համար հաց տալու:

Նիրինն էլ էր տաքացել և բարկութեամբ էր որ մուրճը քարի կտորներին էր խփում. Քիչ յետոյ դարձաւ և նայեց Մահմէդին. յետոյ հաց ծախողի ետևից գոռաց.

—Երկուսին եօթը կոպէկ տամ, բեր:

Այս անգամ Մահմէդը ձայն չհանեց: Հաց ծախողը հեռացաւ և մոռաւ մեծ տան մէջ:

—Արդեօք ովքե՞ր են ուտում այդ տեսակ հացը, խօսեց Ահմէդը:

—Ովքե՞ր. պատասխանեց Նիրինը—շատ պարզ է, աստիճանաւորներ և հարուստներ:

—Մոռացաւ կրօնաւորները, մոռածեցի ես:

—Եսկ մեզ պէս աղքամները, շարունակեց Նիրինը—դրա համն էլ առնելու իրաւունք չունին:

—Հինգ կոպէկ. մոմաց Մահմէդը—ինչքան էլ փոքր էր, մի բրաուճ կարելի է անել միայն:

Սկսեցին պահ մի լուսթեամբ քար չարգել, որից յետոց Ահմէդը նորից խզեց լուսթինը.

—Քաղցած չես, հարցրեց նա Նիրինին:

—Ուտե՞նք:

Մուրճերը ցած զրին. Նիրինը վերցրեց կարմիր թաշկինակով կապած հացը, բաց արաւ, տարածեց քարերի վրայ և սկսեցին հաց ուտել:

Միայն ցամաք հաց էր, Ահմէդը ախորժակով էր ուտում և յաձախ նայում էր դէպի աստիճանաւորի տունը, ուր մտել էր բուլիի ծախողը:

—Տեսնես ինչ իւդով կը լինի շինած, ասաց նա մէկէն—կարգով:

—Գժւե՞լ ես, պատասխանեց Նիրինը—կարագ իւղով էլ հաց կը թիսն... զմակ իւղով կը լինի:

Եւ լուեցին: Նոզը սաստիկ էր. անցուգարձը դադարել էր. երբեմն միայն ցածի փողոցից երեսում էին եղան սալեր:

—Ուր երկրում ացլպէս բաներ չեն թխում, ասաց նորից Մահմէդը:

—Այս, բայց ուրիշ աւելի լաւ քաղցրեղէններ կան. միտով չէ թէ նովրուզի օրը ինչեր են լցնում խանութներում. ինչ փախլաւաներ, ինչ լոխումներ:

—Բայց մենք—դիս զացիներս խօ այդպէս բաների համը չենք առնում. դրանք քաղաքացոց համար են:

Եիրինը քիչ լոեց, յետոյ մեկն ի մէկ ասաց.

—Իսկապէս, Մահմէզ, կ'ուզես մի հատ առնենք:

—Զէ, չէ, շտապեց պատասխանել Մահմէզը—օրական 45 կոպէկ աշխատանք անենք, դիժ խօ չթմ որ 5 կոպէկ փողը մի բրատճ հացի տամ... բաս պարտքնը ով տայ, որդիներին ով կերակրէ:

Լոեցին: Մահմէզի տրամաբանութիւնը էլ առարկութիւն վերցնել չէր կարող ըստ երեսոյթին:

Կերան ինչ որ կար: Եիրինը թաշկինակն թոթափեց, կոխեց ծոցը, յետոյ կռանն առաւ ու ասաց.

—Դէն, վերջացնենք, քիչ մնաց:

Հաց ծախողը երևի ուրիշ կողմով էր գուրս դնացել աստիճանաւորի տնից և կամ թէ հէնց նրա տակի մառանումն էր բնակւում: Երէկ ես նկատել էի որ այդ մառանում կանաչք և մանուկներ կացին:

—Երևի լաւ առեւտուր ունի... հօը, Եիրին, հարցրեց դարձեալ Մահմէտը:

—Ես հարկէ. հատը 5 կոպէկով որ օրական 20 հատ ծախէ, այդ քեզ մի բուբլի. քի՞չ փող է:

—Լա. աշխատանք է, Աստած վկայ... մեր մի երկու օրւայ աշխատանքը:

Այդ միջոցին բարեկամիս ծառան դուրս եկաւ. պատշպամ և ասաց ինձ.

—Աղա, խորովածը պատրաստեց, համեցէք.

—Երաննի այդ հարուստներին, տառմ էր ցածում Մահմէտը—այդպէս լաւ հացեր են ուտում միշտ...

—Ու այսպէս էլ արեի տակ չեն այրւում... աւելացրեց դառնութեամբ Եիրինը և սրբեց ճակատի ծորող քրտինքը:

Վերիացայ ներս մանելու:

Վերջին խօսքը որ լսեցի, դա Մահմէդի խօսքերն էին, միացած մի խոր հառաչի հետ:

—Ե՞ն .. ասում էր նոս խորին ախրութեան շեշտով—երևի մեր ճակատագիրն այդ է... ահսնել և չկարողանալ վայելել:

## ԹՈՂ ՅԱՄԱՐ ՎԻՇԵ...

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՔԱՅԵՆԻ

Թող յամառ վիշտը զարթնելավ նորից  
Վրդովէ հոգոյս հանգատութիւննը...  
Երբէք չխղճաս, երբէք աչքերից  
Զթափիս արցունք, թող քո արիւնը  
Բորբուած հոսէ քո խաղաղ կրծքում,  
Թող քո արեւ շողայ երկնքում...  
Ես չեմ հաւատում կեանքի խնդութեան  
Ես չեմ հաւատում սիրոյ պատկին.  
Եթէ կայ կեանքումս սիրելու մի բան,—  
Այդ իմ տանջանքն է, թախիծը խորին...

## ԱՀԱ ԿԱԹԻԼԸ...

\* \* \*

Ահա կաթիլը ցու րա արցունքներիս...  
Օ՛ կեանքի մռայլ, զիտեմ, չես հեռու,  
Բայց մինչ հասնելդ, աւազ, այս սրախա, —  
Դեռ շատ արցունք կայ ի զուր թափելու...

Այս աննողատակ և փշոտ ուղին  
Գիտեմ շիրիմն է ինձ հասցնելու,  
Բայց մինչ հնչելը կոչնակը վերջին, —  
Դեռ շատ տանջանք կայ ի զուր տանելու:

## Մ. Ա. ին

Դեմենիկ Դեմիքելսի

Ասողերը, որպէս մահւան կերտններ,  
Դուռ զողդողում են դառնաշունչ քամուց...  
Ցուրտ է իմ սիրալ, ցուրտ որպէս ձմեռ,  
Օ՛ նա յոգնած է զուր բարախելուց...

Ո՞ւր ես, միս, մ. ր ես, իմ մահւան հրեշտակ,  
Դու, որ երկինքը դարձրիր գերեզման,  
Դու, որ իմ սրտին տալով լոկ տանջանք  
Իմ վառ սիրոց հետ խաղում ես միայն...

Ա՛ն, արի, հոգիս, թող քո հայեացքը  
Չտայ ինձ ոչ սէր, ոչ մօներմութիւն...  
Գոնէ կը լսես իմ հառաչանքը,  
Որպէս մի օտար ազօթքի հնչիւն...

## Ս Օ Ն Ե Տ Տ

(Մ. Ա.-ին)

Դ Ե Բ Ե Ն Ի Կ Դ Ե Մ Ի Ր Ճ Ե Ա Ն Ի

Ա'ն, մի՛ հրամազիր ծանր լոռւթեամբ,  
Որ ես քեզ երբէք, երբէք չսիրեմ...  
Հոգիս ապրում է սրահիդ ջերմութեամբ  
Եւ զու չմս աեսնում նրբան տանջում եմ...

Ես կը ցանկայի զզացմունք լինել  
Եւ յանկարծ սուզւել սրտիդ խորքերում...  
Եւ կը ցանկայի արցունքի փոխւել  
Որ թառամեի քո վաս աչերում...

Ես կը ցանկայի մի երազ լինել,  
Երազ մանկուկան, անդրաշխարհային,  
Վառելով սրտումդ ահեղ ցնորքներ...  
Ես կը ցանկայի քո սերը երգել,

Որպէս ովկիսանը արև-արքային,  
Խռովելով կրքիս անթիւ ալիքներ...

# ՍԱՍՈՒՆ

(Դմբ յիշատակարանից)

ԵՐԵՎԱՆ ՀԱՅՈՑ ՆԱՐ ՊԻՏՄԱՆԻԹՅԱՆ ՀԱՐՈՒԹ

ՈՒՅԼԱՆԻ

(Ծարունակութիւն <sup>1)</sup>)

Մ Ի Պ - Ա Ա Տ Օ

Այսուղից սկսւում է պատմութեանս այս մասը, որի հերոսներից շատեր ապրում են տակաւին, մանրամասն նկարագրելով տրամախօսութիւններ, պատկերներ, առաս նիւթ մատակարարելով սրամութեան աւելի վայելչութիւն բերին անցքերին։ Հետեւապէս պիտի կարողանանք իրապէս գծել Միք-Ատաէն և մանրամասն պատմել անցքերը։

Սուլթան-Ապդիւլ-Շէճիտ օսմանեան գահն ամբառնալիս, թէն-զիմէթն հռչակեց։ Սկսւեցաւ բանապետութեան մէջ մի ահասկ խուլ քայլացում։ Քայլացում էր հինը, Նիրէթը, ոչ մահմեզականաց համար, իբր թէ կարդուում է թէնզիմէտը հաւասարութեան սկզբունքով։ Յայտնի են պատմաբաններին այն ներքին խոռոշութիւնները, որոնցով ժողովուրդը փորձում էր տիրանալ իւր իրաւունքին։ Ճեմարանի խնդիր, Յակովի, Մատթէոս, Սարգիս պատրիարքների արարքը, անկումները, Կ. Պոլսոյ յուղումները միմիայն յիշեալ քաղաքի ձեւական փոփոխութեան առիթ եղան։ Գաւառներ և քաղաքներ մնացին միւնոցն մեռելութեան, միւնոցն յետագիմութեան մէջ։ Քրդական էշիրէթներ երբէք շեղւեցան իրենց աւանդական գրութիւնից, կազմակերպութիւնից, միայն բէկերի իշխա-

<sup>1)</sup> Տես «Առողջ» 1894 թ. № 10, 11—12 և 1895 թ. № 1։

Նութիւնը այլ ես չէր տարածւում քաղաքների մէջ: Իւրաքանչիւր անկիւն ցցւեցաւ մի միւլու իւր (կառավարչի օգնական): Սոքաթէնզիմէթը նկատում էին միայն հայոց համար սահմանւած: Ուստի ամեն ծանրութիւն կուտակւում է հայ գլխին: Ահա այս շփոթութեանց ժամանակ Միր-Աստո յաջորդում է Սրգօի:

1845 թւին Սասնոյ ըմբիչն Սատո իւր իշխանութեան տակն է առնում Շատախի բոլոր գիւղերը, ոչ միայն գլըբբոց այլ և միւս հայերին, բարձր հանճարով, խոհականութեամբ, տնտեսագիտութեամբ, ազգեցութեամբ և քաջութեամբ իւր հպատակները իրեւ գորովագութ հայ սիրելով:

Սատո բարձրահասակ, լայնաթիկունք, ցորենաւմորթ, գեղանձն, քաջ, յանդուգն, ուժեղ, հաստատամիտ, աղքատախնամ, աղքասէր, մի խօսքով՝ կատարեալ մարդ լինելով՝ մի քանի անգամ յաղթական դուրս գալով, ժողովրդ եան սիրելի, քրվերին ահարկու, փաշաներին յանդուգն խոչնդու ախոցեան է հանդիսանում, շնորհի իւր անդուգական բարեկամին՝ հրակի ու բոցի աւայ Դալորկայ Միր-Աւէին կամ Յւէին:

Վերջինից իրը աւանդութիւն լսած և ուսած լինելով հայոց պատմութեան մեծ մասը, ստանալով առողջ գաղափարներ, ինք մասսմբ զարգացած, ձգուում է և իւր հպատակները զարգացնել աղքասիրութեամբ, կրօնասիրութեամբ, քաջ, ազնիւ, միութիւնասէր սրահելով, մինչև իւր կենաց վերջ աշխատում է արմատախիլ անել մի աղետալի սովորութիւն, որին զոհուում էին հացք, որոնք շիրեւ օտարական իրար արիւն էին թափում...», միշտ անբաժան բարեկամ, արկածների բաժանորդ ունենալով քաջն միր-Աւէ, կոփեցի վրէժիւնդիրն Գալէ, քաջայր վարդապետն Ախմէօն, Աէս-Մարտո և իւր հարազատն աէր-Քաղէ (աէր-Ազար), զղփացաւ փառքով, գրեթէ պաշտեցաւ Սասնոյ սարերին վերայ, նման Յովհաննու բարձրանալով ընդհանրական համակրութեան, սիրոց այն գաղաթնակէտը, որին վերայ այժմ գտնեւում է հայոց Հայրիկը:

Սատո՝ սիրահարի աւգաւէն, թշւառի մխիթար, որբի հայր, այրիի ինսամակալ, վոարի հիւրընկալ, արդարակորով հիւրընկալ, արդարակորով գատառոր, զրկւածին սպաշտան, գաւաճանին գահիճ, քրդին ոսոխ, ազգին անձնւէր, կրօնին ջատագով, հայրենեաց

վերին ասախճանի հաւ ատարիմ՝ լինելով՝ իւրաքանչիւր անհատի մտերիմ՝ բարեկամի՝ գաղտնապահ խոստովանահայր էր նաև

Օրիորդներ խոստովանում էիս նորանն, քուրզը սարասփում էր նորա անունը լսելիս, փաշան ուաքի էր կանգնում. ի՞նչ մեծ պատիւ, երբ Սատօ սպճնազարդ, լեռնականաց զգեստներով, միջնադարեան զէնքով, թիվնապահների բազմութեամբ մննում էր Սէրայ (պաշտօնատուն կառավարութ.), որ և իցէ ազգային գործի համար...

Սատօ, Գալէ, Աւէ իրար սիրելով, իրար պաշտօնելով, իրար շարունակ օգնելով, Սասնոյ լեռնականների լուսաւորողները եղան. 1845 թ. մինչև 1852 թ. բոլորովին փոխւեցան զէնքերն ու բարքերը: Ոչ ևս են պատրոցիկաւոր հրացան, լայնալիճ, աղտէաձե եռանկիւն սլաքներ... Սասնուհին, իբրև երախտագէտ, իւր կորիւնի անշուք օրօրելիս՝ երգում է քրդերէն յօրինւած դիւցագոներգութեան կառորները, որոնց մէջ Սատօ, Աւէ, Գալէ զուգափառ դրոշմում են մանկան մատաղ հասողութեան մէջ իբրև հերոսներ, իբրև ախոյեանք սիրեցեալ հայրենեաց: Ահա մի քանի հասւածներ՝ ազատ թարգմանելով վերածում եմ՝ ոտանաւորի:

Զէն օր (որ) զլուխն հողաւ հաւասր իր դրուկ;

Վրդու, թրքու անլաց գերինիր էզուկ

Հըմկայ տարի վրէն խլած զուր վահան,

Պրին ալիտէ զալլում քրդին, փահլւան

Հայ լօլօլօ լօլօլօ

Աւէ, Գալէ, միր-Սատօ:

Սատէ ասեց մըր հայերուն կիսամեռ,

«Մըզիք աւայ խլէք նիզակ ելէք լեռ,

Զանուն հասւն կախինք ճակաս Անտոքայ,

Իմըլ ուր էրէց Դաւիթ, Մհեր միր արքայ...»

Հայ լօլօլօ լօլօլօ:

Յակօ, Գալէ, միր-Սատօ...

Սեծ մարդիկ ազատ չեն մնացած մեծ ոսոխներից: Մարդուն արժէքը հակառակորդի արժանիքից մակարերելու և իմ կարծեօք: Առհասարակ հաւասար մարդիկ միմեանց ատել կամ սիրել են կարող: Եւ միր-Սատօ ունեցաւ իւր ոխերիմ՝ թշնամին, որպէս պիտի տեսնենք:

Խոշորէս վերել բացատրեցի համաօտիւ, թէնդիմէթի բերմամք նշանակւած էին այս ու այն գաւառներին համար կառավարիները Ասանոց կառավարին էլ աշխատում էր ոգի ի բոնին ջնջել Նոլոյեանց անկուսութիւնը, որ վշի նման ցցւած էր օսմաննեան կառավարութեան աչքին առաջ զուգափառ Զէցթունիք: Ամեն ձեւեր, քաղաքավարական ցոցցեր գաւերի հանգոյցներ էին, բայց՝ տիմար էին կարիճ սասնեացք, ազւէսի նման մօսենալով թակարդին, խիստ զգուշութիւնմք ճաշակում էին խաչծից առանց նորա մէջն ընկնելու: Նոքա հանձարին, կասկածին ապաւինելով միշտ աղաս մնացին, կասկածը անհասու մատառական թագաւորութեան ոստիկանալեար չէ: Կասկածելով՝ լարւած դաւերի ճախարակիներն ի ղերեւ հանեցին, երբէք չհաւատարով օտարի կնդղ սիրոյն, օտարի շողոքորթութեան գերծան վտանգից: Խակացն երբ բնազդական կասկածը չազդեց, արժանապէս բանւեցան ծուղակների մէջ, զորս արթուն թշնամին տարիներ առաջ լարւած էր ու սարքած:

Միր-Սատօնի թշնամին հասարակ մարդ չէր, ներկայացուցիչ էր սամանիան կառավարութեան. մի ահադին էշեր էթի իշխան, մի զղւելի բանաւոր-անբան էր, մինչդեռ Սատօն և իւր բարեկամներ իրենց խնամքին յանձնեւած ժողովուրդի առողջ տարերքն էին բոլոր հայոց մէջ: Նոքա էին որ սրով ու գերանդով իջնում էին կուի դաշտ կրօնի և ազգի պատիւը անաղարտ պահելու:

1854 թ.—աւերածների, կտորածների արիւնոս թւական,— Խիանց-բէկ և Միզիւր (օգնական կառավարիչ), Քէլել-աղաջի որդի Հածի-աղա, սկզբից մաերիմ բարեկամութիւն կեղծելով, միր-Սատօն համակրութիւնն զբաւելով սպասում էր սպատեհ առթին:

Մի օր հրաւիրում է իւր մօտ, գաւառի ինչ ինչ անտեսական ինպիրները պատրակ բռնելով: Միր-Սատօն մոռանալով Աւէի նշանաւոր խօսքը.—«աաճիկ, քուրդ, եթէ իրենց զաւակները քեզ համար զոհեն, մի՛ հաւատար, մի որոշ նպաստիկ, գաւադրութիւն ունին... օտարը միշտ օտար է, նորա սէրը՝ ծառայութեանդ տրիտուր թոյնն է միայն»: Անկասկած, միացն թիկնապահով գնում է Խիանց: Հայ իշխանը երկչոսութեան նշան է համարում զինեալ ծառաներով շըջել:

Միզիւր շէցիսի և բէկերի հետ ահճամք ընդառաջ խըռնելով:

ուրախութեան երդերով, թմբուկներով ընդունում է «իրրի քաջ հայերի իշխան»։ Հիւրասլրում իւր ասլարանին մէջ, ճաշ պատրաստում, մնեղէն, բուսեղէն ընտիր կերակո բներ, հաղէշի օղի, Խարբերդի անարատ գինի և այլն հանում սեղան։

Սատո անձնատուր է լինում ախորժակին, մոռանում իւր բարեկամի պատւէրը։

Աւրախութեան լաւ ժամանակ, միւզիրը յանկարծ ոտքի ելնելով ասում է։

—Միր-Սատօ, բարեկամ, գիտես որ ես Միւզիր, վեհ սուլթանի պաշտօնեացն եմ, ինձ նորին վեհափառութիւն իւր հրովարտակում աթիվ էթ լու (վեհափայլ) տիազոսով պատում է... ես՝ թող զինւորները, ես դլուխ և իշխան եմ մի ահագին էշիրեթի, փարթամ, կարիճ 10,000 քաջերի... .

—Այս, Հաճի-աղա-բէկ, —պատախանում է Սատո առանց վերահասու լինելու նորա գիտաւորութեան։

—Գիտես, որ ինձանից սարսափում են բոլոր քուրդ ցեղերը, Սամոյդ, Մշու, Տիգրանակերտի, Խոտոսի, Պուլանըքի և այլ կողմերի մեծանուն թոռուները։ Գիտես, որ ափիս մէջ են նոքա։

—Ի բաց առեալ բագրանցին. կարծեմ, —մըմաաց Սատո։

—Գիտես նաև, որ իւմ անւան արձագանքը սարսափ ու մահ է մազում Մշու զաշախի, Բաղէշի և այլ շրջակայ երկիրների հայերի գլխին, որոնցից մազիս թուով գերած, կողովաած, սպաննաած եմ նման Խան-Մահմետի։

—Բայց... նոքա հայ չեն, —բայցականչեց ազատորդին, —բէկ, մենք ենք, մենք ենք հայ, Մուշ հայ չկայ, Մշու զաշտ միացն կենդանի հայ զիակների զերեզման է... .

—Այսպիս ենթաղբենք... Սատօ, զիտես՝ որ մեծ ազգեցութիւն ունիր հայոց վրայ, բացի սասնցիներիցդ... դուք, Սատօ, ապագամը էք, թէնզիմ էթի, սուլթանի առաջ։

—Ի՞նչ ասել կամենաս, —յանկարծ միր-Աւեկի խորախորհուրդ խօսքերը յիշելով, հարցուց Սատօ կառկածով, —առանց նպատակի չեն հարցումներդ. պարզ խոսիր։

—Լաւ, Սատօ, պարզ խօսենք։ Յաղթողը պէտք է ամենուրեք յաղթական լինի. եթէ ո՛, սոսկական մարդ է նա, քաջու-

թիւն՝ անդրւաս, յաղթութիւն անպատկ, մշակութիւն անարգասիք, ամուլ ձեռնարկութիւններ են: Ե՞ս, Համի-ազա-բէկս, չեմ ուզում ամուլ ձեռնարկութիւններ ունենալ. եթէ յաղթող եմ, պէտք է յաղթական հոչակւեմ ինձ յանձնած երկիրների մէջ... ձեզ, սասնցի ապստամբներիդ հրամանաւ վեհ. սուլթանի յաղթել եմ ուզում, ընկճել, սորկացնել եմ ուզում իմ սրոլ... իմ բազկին տակ:

Կարծես Սիմա լեռը փլաւ, կամ մի կայծակ ընկաւ Սատօի գլխին: Խոկոյն թողեց զինին, սթափեցաւ: Մի մռնչիւն թռաւ առիւծի շրթունքից իբր պատասխան:

—Ո՞վ խոնարհի, վաս դռւ, միր-Սատօն, Սւէն, Գալէն, Շատմիս, Դալւորին, չի լսեցիր նախնիքներից նոցա ձեզ հասուցած ֆասները, աղէտները... մոռացմն ձեր կիները ողբալ քաջերի մահերը... անկիրթ քուրդ, առիւծների հետ չեն խաղում, նոքա քոթոթ չեն... Սատօն խոնարհի... երբ տեսար այդ երազը... Սատօ խոնարհի... լաւ հիւրասիրութիւն, լէմէրդ (ապերախտ):

—Պիսի խոնարհին, որովհետև Սատէ անդէն իմ տանս մէջ, իմ ձեռիս մէջն է:

Սատօ խոկոյն ձեռը սրին կը տանի, զարմաներով կը տեսնէ իւր անգէնութիւնը, զիսի գանգը կարծես վեր կ'ինչը, ուզեղը կարծես պիտի տրաքւէր: Դաղափարների խուռն հոսանք այլայլեցին քաջ. որդուն: Ծնիները, շրթները, ձեռները գողում էին օրհասական ծերունու նման:

Էէկը մի տեսակ յաղթական ժպիտով, վէսօրէն մօտենում է, Սատօի ձեռը բռնելով, հեգնաբար առում է.

—Հիմա՝ քաջդ Սատէ, ինձ պիտի սպանէիր, եթէ սուրդ վերադ լինէր, բայց... Սատէ, կատակը մի կողմ, մենք քաջեր ենք, մի յուզւիր, քաջը քաջի կեանք չէ զրաւում աւազակի պէս. ես ի՞ն անեմ... մի թագաւոր է ինձ հրամայում այսպէս վարւել քեզ հետ, հարկատու, հպատակ դարձնել: Ուրեմն՝ ազատութիւնդ կարող ես ստանալ երկիւղած հպատակութեամբ, ձեր զէնքերը ինձ յանձնելով:

Քաջութիւնը սրի ծայրն է, մարդի արիւնաներկ դաշտին մէջ միայն բաժանւում է քաջ տիազուը: Անզէն մարդիկ կողոպտել սպանել, թշւառ, խոնարհ գիւղացին օրասպահիկից զրկել, գողա-

նալ, յափշտակել, դաւադրել քուրդ ազգի քաջութեան յատկանիշ-ներն են։ Գողացար սուրս, ես անդէն եմ հիմայ, ուրեմն քաջ քըր-դերիդ մէջ հերոս հանդիսացիր, դաշոյնիդ սլաքը փորձիր թիկոն-քիս վերայ երբ ես յետ դառնամ, կշոյիր պողպատի զօրութիւնը... Սրիկա, աւազնկ, արդէն ինձ կողոպտեցիր, բայց՝ նախ առան տեսնեմ, ի՞նչ ունիս ինձ հետ. ի՞նչ ես պահանջում. գէնքերն առնել ի հնդ իջնել Մշեցու պէս... յաղթող ճակատը խոնարհել, քսմէլ ոսներիդ տակ, անսովոր կորովի վզեր կըթէլ ձեր ծանր լծերի տակ, անդորրութիւն, հարստութիւն, ազատութիւն զոհել ձեր կրից, մեր սիրատուն, պարկեշա օրիորդն ու հարս, անբիծ պատա-նին ձեր գեր գարշելի կրից մատնել... երբէք... երբէք... լսիր, բէկ, այժմ ինձ յօժարակամ նուիրում եմ նոցա փոխարէն, ահա, կշիդ կախւած է դաշոյն, առ, ես անդէն եմ, ահաւասիկ է սիրտա. մաֆի՛ր նորա մէջ, բայց՝ սարկութիւն, բնաւ:

— Հանդարտիր, Սատէ, հանդարտիր, ոչ սիրտ խողիսողել, ոչ արիւնդ թափիել եմ ուզում... քեզ համար ասում էին պազարիւն է... իր ես յուզւում։

— Խոդիրը ինձանից, իմ կեանքից ծանր է. ազգիս կորուսոը փութացնել!

— Ե՛, Սատէ, բարեկամաբար խօսենք։

— Խօսիր տեսնեմ. ի՞նչ ունիս փորիդ մէջ։

— Իմ իշխանութեան տակ մոիր, հրամանովս շարժիր։ Սանցի հայլ ինձանից չէ պատկառում, ինձ չէ յարգում, ես յարգանք և իշխանութիւն եմ ուզում։ Երբ զնում եմ Մշու գաշոն զանազան կերակուրներ եմ ուտում, մաքուր անկողնի մէջ հանգստանում, հայ աղջիկն ու հարսը իմ հաճոյից ծառայում։ Շողում է սուրս, ծա-ւալում անունս, ես իբրև Սուլթան երկրագութիւն ընդունում, փառաւորուում և հարստանում նւէրներով։

— Յափշտակութեամբ ասա՛, անիրաւ։

— Թնդ ացդակս լինի. իսկ քո, Միր-Աւէկի, Գալէի, Յակօի, եր-կիրներին մէջ ացդակս չէ, մի խօսքով Սամայ հայք ինձ չեն ճա-նաշում։ Քանի անզամ եկած, կորեկ հաց, գլկիլով խառն թրթու-թան կերած, իբր շուն, չոր խոտի վրա իմ ապացով պառկած եմ հէնց քո տան մէջ։ Մի անզամ համարձակեցայ քո սիրուն աղջկայ

երեսին նայել, նա անմիջապէս յօնքը պոտուելով, —շնչն քըզիք, —մըմռաց ու քար խլեց որ գլուխս ջախջախէ:

—Երանի ջախջախէր... միթէ իրաւունք չունէր:

—Վերջապէս, ես ուզում՝ եմ բոլոր հաճոյքս գոհացնել:

—Ցանուն վեհ. Սուլթանի!

—Խնչ կաց ո՞ր...

—Եւ հեր:

—Քո իշխանութեան մէջ, կեղանու հայ, քո տան մէջ:

—Մնկարելի է, կը մեռնես ու չես հաւնիլ քո փափագին, —հանդիսաւոր ձացնով, լրջօրէն պատասխանեց Սատօ՝ իւր անյազգողդ զիբքն վերասանալով, —քուրդ, զու զիտես որին ես խօսում, կամ զիտես թէ, ինչ ես ուզում, քան համոզւած եմ որ ոչ. զու չես մանաշում հայ-ազգը, գաղափար չունես նորա վրա, ծանօթ չես նորա անցեալին՝ չես կարող նախառեսել ապազայն. չես զթալ նորան, սորուկ, անգէն, քեզպէսների հաճոյքին գերի սոր առարկայ, մարդոց և կենդանեաց մէջ ցցւած մի տեսակ անհշան արարածներ կարծելով: Բայց՝ ոչ, այնպէս չէ, սխալ կարծիք, անօգուտ ձեռնարկութիւն, անիրագործելի յառաջապրութիւններ խարխափում՝ են քեզ, Մենք քաջ ենք, զուք տեսի լաւ զիտեք, ինչ է մահը մեզ համար, ոչինչ, ննջել, ինչպէս զիշերները մեծաւ ուրախութեամբ նիրհաւմ ենք, թափառում ենք անուրջների աշխարհը: Քաջ լինելով, մահն արհամարհելով հրաշքներ ենք զործում... 2000 քորդ հալածեցինք մի քանի տարի առաջ վիրաւորով ու մեռածով գաշտերը ծածկելով... Արդ զիտցիր թէ այսպիսի ազդի զաւակաց հետ գժւար է քեզ մրցել: Հետեւաբար՝ անկարող լինելով ազգս սարիութեան մատնել, որախութեամբ մեռնում եմ ես, սակայն զունպատակիդ չպիտի հասնես: Իմ և Միք-Աւեի, Գալէի ձայնին անմոռն, հնազանդում է Սասունը, 40—50 հայ զիւղեր, առնւազն 15,000 զինավառ քաջեր նիզակներով պիտի մարին օձախիղ բոյը: Եթէ քրդիրդ Մահմեդից քաջաթիւն ստանան, Սասուն մէջ փոխանակ հայի, բռուրասեղ ապաստների կիսաշխն աճիւների տակ, մենացած աւերակների վրա՝ իբրև բու պիտի իշխես, աչքով պիտի տեսնես հայ կտրինի զիւցագնական հոգեվարքը, հոգւոյն արեան մէջ խուռափիլը:

Սատօի հակիրճ ճառը խորին ապաւորութիւն թողեց քրդին վրա, մի բողէ աչքը գետին խոնարհած, մոքին մէջ ծնած զանազան հարցերի պատասխանները մակընթացութեան պէս դաւրս էին ենում հոգւոյն ափերից, նկատելով դէմքին վերաց:

Աւրեմն, հաճի, —շարունակեց Սատօ, —խորհիր: Ես քովդ եմ: Անկարելի է ինձ համոզել: Սատօն ոտքիդ տակն է. իջիր ասուարէզ իբրև քաջ:

—Եթէ կամենաս, պատասխանեց խատիւ, —Սատօ, կարող եմ իշխել:

—Անկարելի է:

—Ինչո՞ւ:

—Արդէն ասացի, Հասկացար... կրկնեմ... գալով իմ անձիս՝ պատրաստ եմ ազգի և հայրենեացս համար վանդակել:

—Բայց... հրամաց ում է:

—Դու մի՛ գործադրիր, անկարող ես, այս երկիրների մէջ թնչ կայ օրինաւոր. եթէ քրգեր թողուն իրենց վայրագ սովորութիւն, արդէն հացք, պատական ժողովուրդ լինելով, կը յարգեն ամեն իրաւունք: Դու՝ որ կառավարութեան անունով ուզում ես զէնքը խլել մեզանից, առաջ խնդրեմ, լուրովին մեզ գերելու համար չէ. նախ՝ ինքդ զիր վար, ապա՝ յորդորիր ինձ: Քանի որ մենք ժաղիբիդ տակ տեսնում ենք կորսառաքեր վիճը, ոչ թէ թագաւորի, այլ և Ասուծոց հրամանն անգամ եթէ լինէր, պիտի մերժէի, մանաւանդ չեմ կարծում որ հրամացւած լինի քեզ թէ՝ զերիր հայերին, նացա կիներն ու աղջիկները զոհիր հաճոցքիդ... Դիցուք թէ հրամացւած է, ասպարէզը բաց է, եթէ կարող ես իրագործիր, ես ձեռնպահ եմ մնում... բայց՝ յաւ զիտեմ՝ որ, ոչ, հրաման չկայ. այլ ուզում ես բռնութեամբ գաղանացին փորձեր փորձել:

—Միր, նախառում ես ինձ:

—Ոչ, միայն նախառել, այլ և...

—Վերջապէս... Միր, պիտի հնազանդի՛ս:

—Ոչ, ոչ, ոչ... քանի անգամ ասեմ՝ ոչ:

—Աւրեմն առ այժմ պիտի բանտարկեմքեզ, մինչև իմ ուզածը կատարես, կամ ապանեա:

Միրը խորհրդաւոր կերպով ժապաց:

Երկու քրդեր ութ օլոս (21 գրւանքա) ծանրութեամբ մի շղթայ բերելով կաշկանդեցին, կապեցին նորա ձեւները, ոտները, մի մութ, խոնաւ կեզառո խցի մէջ բանտարկեցին:

Սատօի ձերբակալման լուրը, թէ տրամախօսութիւնը ամենայն ճշոտութեամբ, կացծակի արագութեամբ ծաւալեցաւ Սասնոց մէջ, շնորիւ իւր թիկնապահին՝ որ մոռացւած էր և գիշերը փախած:

Մեծ յուզում և իրարանցում վրդովում են գիւղերը: Դալորկայ Միր-Աւէն, Կոփացի Գալէն լուր ուղարկեցին: Սատօի իշխանութեան ենթակայ ուշաներին: Երկրորդ օրը կազմում է մի ժողով Գալէ-Կուզանի մէջ:

Աւէ, Գալէ որոշում են ժողովի մէջ անմիջապէս զինել ժողովուրդը, կազմ և պատրաստ սպասել վճռական ժամուն:

Միր-Սատօի երկու եղբայրները Վարդան և Պէտօ, որ վերջը ուս եղաւ և այժմ էլ մի ծերունի վերաբոյժէ, մի քանի կտրիճներով կերթան: Սատօի հետ խորհրդակցելու: Ի հակառակ դէպս բոլոր հայք միաբանելով, սուր առնելով յանկարծ դուրս դան բռնաւորի դէմ:

Վարդան, Պէտօ դիւրաւ հրաման կառանան իրանց եղբօր հետ տեսնելու: Միրը ջղացին և մասնաւոր տենդով՝ տառապում էր բանտի մէջ: Եղբայրներին տեսնելով՝ աւելի ևս աւոթից, տիրութիւնից կը նեղւի:

—Ազատութիւնդ, Սատօ, —ժողովի որոշումը յայտնելուց յետոյ ասաց Վարդան, —ազատութիւնդ որպէս ձեռք բերենք... դու որոշիր:

—Վասնգաւոր է մեր զիրքը, եթէ զինու զօրութեամբ փորձէք ինձ ազատել՝ ապստամբ պիտի նկատենք կառավարութեան առաջ, որովհետեւ՝ այս գազանը ներկայացուցիչ է... ուստի, միայն մի ազանով միջոց կայ, բայց՝ չեմ ուզում ձեզ թշւառութեան ենթարկել:

—Ահաւասիկ մենք, եղբայր իմ, —ասում է Ռէս-Պէտօ, —ի՞նչ կայ զժւարին: Առանց քեզ չէ կարող շարժիլ Սատօն, բայց՝ առանց մեզ կարող է պահել իւր ազատութիւնը: Ուրեմն՝ յայտնիր որոշումդ:

—Լաւ ուրեմն, —պատասխանում է Միրը, նկատելով իւր

հարազաների անձն իրութիւնը. — պէտք է որ ես ազատ լինեմ, դուք իմ փոխարէն գէթ վեց ամիս բանուը մնաք, մինչև որ մեր զօրութիւնը բազմապատկենք ղաշնակցելով և քրդերի հետ...: Աւատի երկուադ էլ գնացէք միւզիրի մօտ, ինձ մահամերձ հիւանդ նկատելով՝ անվախ ասացէք այդ վայրադ գազանին, — Մեր եղբայրը եթէ մեռնի բանդի մէջ, լաւ զիտցիր, պիտի շիջանի էշերեթիդ ծուխը, մարի հովիւներիդ սրնդին ձայնը, Խիանք աւերակ պիտի գտունայ, կեանքդ սոսկալի տանջանքով զրաււի: Եթէ գործ ունիս Միրի հետ, կրկին կարգագրիր, մենք նորա փոխարէն իրբե պատանդ կը նստենք բանուիդ մէջ... թող երթայ նա, առողջանայ կազզուրւի, կամ ընաանիքի զրկին մէջ մեռնի, որ չառւժէք պատերազմով...:

— Եաս լաւ, — պատասխանում են անձնուրաց եղբայրները:

— Երբ Խասուն երթամ, զիւնեմ անելիքս, — մրմնջում է Միրը:

Հաճի-Ազա-Բէկ կը սարսափի, երբ կը խօսին պատգամաւորները, երևակայելով Սասնցոց անյագ վրէժինդրութիւնը, գրեթէ կը զդշայ: Աւատի հրամայում է արձակել Խատօն, բանդարկելով երկու եղբայրները:

Միր-Խատօ տասը զինակիր քաջերով շրջապատւան, իւր զէնքով զինւած, նոյն երեկոյին ժամանում է Գալէ-Կուզան անվտանգ, ուր սպասում էին իւր բարեկամները Գալէ, Աւէ, Քաջայր, Տէր-Քաջէ և այլն:

Սրտաշարժ է լինում քաջերի դրկախառնութիւնը, արտաս-ւելով համբուրում են իրար, իրբե պատերազմի ընկերներ, անզու-գական բարեկամներ:

— Սատօ, — ասում է — Միր Աւէ ըստ իւր սովորութեան գերանգաձեւ սուրը շոգելով, — Սասնոյ սարերը քեզ համար պիտի արտասէին, գողացին բարեկամ, 5000 Դալորիկցի կտրիճներ հըրա-մանիս էին սպասու՞... այժմ գու ինձ հետ ես, յարձակւինք ջնջենք անօրէննէրի զօրութիւնները, առիթը ինքնին ներկայացաւ, պար-գենք դրօշը, վերջնական հարւածը տալով, արեան գետերը Սասու-նից մինչև երգուում հոսեցնելով՝ օդնութեան հասնենք Ռուսական զօրքին:

— Նախ՝ սիրելիդ իմ՝ Աւէ, մեր աղէրքը աղասիելու մասին

լոօինք, դա եկրորդական հարց է, ասպատակ սփռել, Աստուն մաքրելուց յետոյ Առւշ կամ այլուր արշաւել: Վերջը կը որոշինք: — Ե՞ն, շատ յոգնած ու սոված եմ...: Աւէ, շատ եմ կարօտած մեր սովորական կերակու ըներին:

Սաստնուհիք արդէն աճիւնի մէջ եփած էին բաղարջը, թանապուր, թթու թան, ժաժիկ (լու) բերին: զրին կլօրիկ սեղանի վերաց: Բանտից ազատւած կարիճը կորեկ հացը թանի մէջ պըրթելով (մանրել) մի խոշոր գդալով, որ մեզանում կարելի է իբրև շերեփ գործածել, սկսեց բռունցքի նման պըթօններ գլորել իւր որկորից:

Վարդան, Պետօ երեք ամիս մնացին բանդը: Բոլորովին փարատելով կասկածներ, մուերմացան բանտապահի հետ, երբեմն ծխախոտ, ուտեստ և այլն շնորհելով: Առանց վերահասու լինելու Ասունոյ աւազների որոշմանց, մի օր, առևտ տկարութիւնը պատրւակ բւնելով, Վարդան համոզեց քրդին գուրս հանել մաքուր օդ շնչելու: Պետօ լնկերացաւ հիւանդին: Երկուսի էլ ձեռները, ոտների ծանր շղթաներով կաշկանդւած էին, բայց՝ կասկածում էր բանտապահը, Վարդան միջադէսի առաջն առնելու մոտք սկսում է մի շատ հետաքրքրական քաջապործութիւն պատմել Բագրանցիների կեանքից և բոլորովին գրաւում նորա ու շագրութիւնը:

Երբ մի քիչ հեռանում են գիւղից, Պետօ յանկարծ՝ իւր ձեռքը կաշկանդող շղթաներով մի ահազին հարւած է իջեցնում քրդի զլիին, որ անմիջապէս մնաեալի նման լնինում է, զիշերը դուրսը մնում, ութ օր հիւանդ, անլեզու մնալուց յետոյ վչում ոգին:

Երկու հարազատները անմիջապէս խոյս կը տան ասպատաժոս ձորերի մէջ: Քարերի զարնելով փշրում են ձեռների, ոտների շղթաները, իբրև աւար կամ զէնք ուսերն առած՝ զարտուզի շաւիկները հեռանում:

Գիշերացին մթութիւնը բաւական նպաստում է փախստական ներին, անօթի, ծարաւ, հազմեալով նոյն գիշեր մի աւուր ճանապարհ են դնում, սակայն՝ բանտի մէջ մնելի նւազութեան բերմամբ մաշւած, նիհարացած լինելով՝ չեն կարող ժուժկալել, տոկալ անօթութեան, ուստի՝ ակամացից մտնում են մի քրդական գիւղ:

Աւում են կերակուր, մի քիչ էլ հանգստանում և խսկոյն ուղի ընկնում: Հիւրասիրող քուրդը կասկածում է, մանաւանդ մահապարտի ցատուկ Վալէ-փաշա շղթաները իրարանայնում են իւր կառկածը: Անմիջապէս տասը զինուած քրգերով դուրս է ոլանում զիւզից նայա ձերբակալելու:

Վարդան, Պետօ զէնք չունէին, թշնամին զինուած էր, անձնատուր լինելն ամօթ հային,—միթէ քարը զէնք չէ, մտածում էր Պէտօ: Երկաթի պէս ամուր մասներով սկսեց պոկել ժայռից ահագին բեկորներ, կարիուտի նման ահզալ նոցա զլիխին: Վարդան յողնած լինելով չէ կարող դիմագրել, ակարութիւնը արգելում է նորան իւր հարազատին մասնակցելուց, ուստի հանդարտորէն ասում է եղբօրը:

—Անձնատուր եղիր, Պէտօ, իդուր ես աշխատում...:

Հրացան, թուր, նաճագ յաղթեցին քաջասիրո Պետօին, կէս ժամ՝ կուելուց յետոց անձնատուր եղաւ:

Այս միջոցին մի տըրէ (խածառող, այս ածականով են որոշում քուրդ հարսները կիներից) մանտուկը շալակած, ձութը ծամելով, բուրդ մասնելով, արգահատանօք Պէտօի երեսը նայելով անցաւ, ճանաչեց և աճապարեց գէպի Վալէ-Կուզան:

Թան, հաց ուտելու, մի ինչ որ բան գողանալու մտօք, զիմեց Միրին, սբառմեց եղելութիւնը մանրամասնաբար: Սատո խսկոյն 200 կարիճներ յանձնեց սէս—Մարտօի և ողի հանեց:

Փախառականները տարւեղան նոյն զիւզը, նոյն տունը, ուր մի ժամ՝ առաջ ընդունած էին իբրև հիւր:

Քրգերը անգժամաբար գանակոծեցին, մանաւանդ Պետօին, մի քանի զլուխներ խորտակած լինելուն համար խիստ ծեծեցին և իւր գանգն էլ ջախջախեցին մի քանի տեղով:

Կէս գիշերին՝ երբ քրգերը հաւաքւած գանակոծում, չարշարում էին երկու կալանաւորներին, յանկարծ տան երթնկալը վերացաւ, երթից մի մերկ սուր կախւելով, առկայծեալ ճրագի խիստ լուսով դալիկափայլ սկսեց շողալ, ած ու ահեակ տասանել, ահ ու սոսկում ազգելով:

Մինչդեռ քրգական ամբոխը ահաբեկ, ապշած աշերով դիտում էր մահազէնի զժողոյն փայլատակւելը, խղի դրան ձայնը

ամենի ուշագրութիւնն է գրաւում, իսկոյն հարւածի վերաց հազորդելով խորտակւում, ընկնում է նա, փալփլում են լուսնի լուսով նիզավների մերկ սրերի ծացրեր, նորաձև հրացանների փողեր մի տեսակ մահաճոտ անտառ. հիւսելով զարհուրած ամբոխի աչքին առաջ: Այս տեսարան զսպում է զիւղացու քաջութիւնը:

Վարդան և Պետօ նախ կարծեցին թէ միւտիրի մարդիքն են, իրենց աղանելու կամ ձերբակալելու համար ուղարկած:

—Վարդան,—հառաջելով ասաց Պետօ, —վատաբար պիտի մեռնենք այս գաղանների ձեռօք... եթէ ինձ լսէիր...:

—Ոչ, Պետօ, —պատասխանեց տանիքից ոհս-Մարտօի ձայնը: Պետօի գլուխը խորտակազ քուրդը աճապարեց փախտական դառնալ իւր ընկերներին ձայնելով—կրակը մարեցէք, փախէք: Բաց չկարողացաւ, Պետօ զօրացած և մի մահացու հարւածով դլրեց խուճապելու ժամանակ:

Գոռում, գոչում, աղաղակ լաց, հոնչիւն յաջորդեցին միմեանց, մարան հրազենոց որոտման մէջ: Ճրագը մարելով խաւարը ծածկեց ամեն ինչ:

Տան զիբքին ծանօթ չէին հայք, երկու գոներ ունէր հիւղը, մինչդեռ մի կողմից քաջերի գերանդազէն հեղեղը հորդան կը տար մահ տալով, միւսից կը փախէին քրդերը:

Մի բշիրեկցի օտարական հայ, որ հիւր էր միւնոյն յարկի տակ, անծանօթ լինելով չէր կարող քրդերի հետ փախչել, խարխափելով սպատէպատ ի փախուստ աճապարած ժամանակ կը տանի մի թրի հարւած:

—Լօ, մալի միրըթնիր, —աղաղակում է նա, —իս ժխո հայ իմ, միրն է ինչ կուզիք, զձրը նացլընիր Գէօ փախուկին:

—Վաւլեր... ըծօ, —աղաղակում է հայոց խումբը, —ճրագ, ճրագ... հըյուը խղճուկ հայի էղի:

Ճրագ վասելով ստուգում են նորա հայ լինելը: Պետօ իրբե Սամոյ գնդին վիրաբուժը (զարմանլի կերպով ուսումնասիրած է առանց զիստութիւն ունենալու) անմիջապէս իւր ճարտարութիւնն ի գործն է զնում: Քաջերը թշնամի չփոնելով՝ բացի մի քանի անշուն: զիսկներից գնումեն զիւղն աւերելու: Մի ժամ՝ չէ տեսում, զիւղն կողուպտել, ալրել, հանդիսողը ծեծել, ոմանց վիրաւորել և

ուզի լնկնել երկու կալանաւորը և վիրաւոր բշերիկցին իրենց հետ առած: Արշալուսին հետ միրին են լնծայում իւր անձնազո՞ն եղբայրները ողջ, առողջ: Այնու հետեւ Հաճի աղա չափագնեցաւ ջնջելու ձեռնարկել հայ Միքերի ազգեցութիւնը, շատացաւ խիստ մասնաւոր տուրք ստանալով՝ չարգել Աւտալ-բէկի ֆէրմէնը իբրև ներկայացուցիչ օսմ: կառավարութեան:

Մինչև 1876 թ. Սատո բիւրաւոր արկածների մասնակցեցաւ միշտ յաղթական հանդիսանալով: Հաճի-աղա յանկարծ պաշտօնից ընկաւ... անծանօթ սրով խողխողւեցաւ, կտրաւուեցաւ իւր բոլոր ընտանեօք... մինչև 1887 թ. քրգեր աշխատում էին անծանօթ սպանիչը գանել:

Մինչդեռ ալեկոծ Տաճկասահնը պատրաստում էր արևելեան պատերազմին, վախճանեցաւ Սասնոյ սիրելին Սատո ՚ի խոր սուդ համակրելով իւր բարեկամներն ու ժողովուրդը: Խիստ շքեղ եղաւ նորա թաղումը:

Գալէ-Կուզան խմբեցան 20—30 զիւզի ժողովուրդ:

Միր-Աւէ, Գալէ անցան յուզարկաւոր գնդի գլուխը: Գոնից մինչև եկեղեցի երկու կարգ շարւեցան զինավառ Սասնեացնք, երբ երեւեցան սզազգեաց կիները, որ թափորի առջեւից դնում էին հանգուցեալի քաջութիւնքը երգելով. իսկոյն Միքերը նշան տւին զենքերը պարպելու, մի քանի հազար հրացան որոտալով կարծես ապաւաժներին զուժեցին առիւծասիրա իշխանի մահը:

Սգածիր կիների ետևելից գալիս էր հանգուցեալի սէգ երիվարր, ճարտուկ կենդանին ծածկւած էր իւր տիրոջ զէնքերով: Երկու օրիորդ կրում էին Սատօի կապան վեր բարցրացրած: Հանդիսադիրն էր սպիներով ծածկւած ալեւոր քահանացն Տէր-Քաջէ:

Սասուն չունէր զագաղ, չունէր բարակ պատանեք իւր գիւցազնը թալիլու, այլ պատասած հաստ կաւառվ կրում էին ճազբով (մի տեսակ հանրային զագաղ):

Տէր-Քաջէ չէր երգում շարական, այլ ողբերգակ կիներ երգում էին քաջին արկածները: Երբ վերջանում էր մի հատւած, արձագանգում էր ամբոխը, թահու թահու:

Թաղւած է Գալէ-Կուզանի անփառունակ եկեղեցւոյ դրան առաջ, իբրև ազգային բարերար, որ անշուք մենարանն այցելելով

գիտեցի անարձանազիր, անստաշ ժայռի թեկորը, որի տակ թաղւած  
էր մի մեծ սիրտ, մեծ զէնք, արկածներով ու ցիշառակներով փա-  
ռաւորւած քաջանուն հայ, որի անունը ուստանում է ասսնցի մա-  
նուկը իւր մօր կաթը ծծելու ժամանակ:

Սատօից յեաոց միբութիւնը վերջանում է կառավարութեան  
հրամանաւ, բացց հաստատ է մնում սասնցոց մէջ: Նորան յաջոր-  
դում են Գետօ, Մարտօ, Յարօ ոչ թէ միր, այլ ուս տիտղոսով:  
Արևելեան պատերազմը բարձրացնում է սասնցի հայի անունը:  
Աւստի այդ եղելութիւնն առանձին հատորով, պարագլխի անունը  
միայն այլակերպած, ամփոփած եմ Գորակէ գործիս մէջ իբրև վէպ  
Գոցում եմ ալեքցոց պատմութեան էջը և սկսում Դալւորիկի անց-  
քերը, որշափ կարաղացայ ժողովել:

(Շարունակելի)

## ՊԱՏԱՍԽԱՆ ԶԿԱՅ

Խ. ԱՐՄԵՆԻ

Սաստիկ հաղածւած և արհամարւած,  
Մութ կասկածներով ճնշւած և տանջւած,  
Տառանում էի մենակ աշխարհում,  
Ներման տենչալի օրին էի սպասում;  
Լալով հարց տալով նախախնամութեան:  
Սակայն ինձ Ասուած չուեց պատասխան:

Բորբոք ցանկութիւնս կրկին ինձ յաղթեց,  
Մեծ թագտորին զիմելու ատիպեց.  
«Արդեօք իմ տանջանք կը տեէ երկար»:  
Նա նայեց լուռ և ցաւակցաբար:  
Ես ուրախ էի զիմելով նորան:  
Սակայն նա երս չուեց պատասխան:

Տեսայ շնորհալի մեծ մարդարէին.  
«Ասում են թէ գու շնորհ տառւածազին  
Ունիս՝ ծածուկ բան ծիշդ հասկանալու:  
Արդեօք ինձ Ասուած շնուռ է ներելու:  
Մարդարէն յուղւած սրաով ինձ նայեց.  
—Այդ ես չգիտեմ— պատասխան տևեց:

Վերջը զիմեցի ես ժամանակին.  
«Դու էիր բերում խեղճ թշւառ աղդին  
Գերութիւն, աքսոր, տանջանք ինանիր—  
Անգութ ժամանակ, դէն պատասխանիր—  
Սորկութեան, խաչին պիտի գմչ վախճանու:  
Բայց ժամանակը չունի պատասխան:

# ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՍԻՃԱԱՆԵՐԸ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՏԵՐ-ՄԻՐԱՔԵԱՆԻ

(Շարունակութիւն<sup>1)</sup>)

## ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՍԻՃԱԱՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆԻՒԹԵՐԸ

Ա. ՆԱԽԱՊԱՏՄԱԿԱՆ ՇՐՋԱՆ

1. Առասպել

Հիմա համառօտակի ներկալացնենք քաղաքակրթութեան այն արտազրութիւնները, որոնք սաների զարգացման իւրաքանչիւր աստիճանի գերակշիռ ձգտումներին նն համապատասխան:

Մենք առաջին տարում 6—7 ամեադ մանկան վոխանակ հրէական ու ազգային նահապետական դարու պատմութեանց՝ առաջարկում ենք իր կենտրոնական բարուակրթիչ նիւթ հեքիաթները, որովհետե նրանք այդ հասակում այս նիւթերի համար աւելի հարցասիրութիւն կ'առնենան՝ քան առարածութեամբ, ժամանակով ու հոգերանական երեսով թներով նրանց որտից ու մաքից հեռու պատմութիւններ, նա որ նախաղպրոցական հասակում անշոնչ առարկաները իր վառ ու ստեղծադործ երիակալութեամբ կենդանացրել էր, սիրում է զեռ մնալ այդ դիւթական աշխարհում: Նա նախնական մարդու պիս ոչ թէ, զիտմամբ է բանաստեղծում հեքիաթներ ու դիւցազներգութիւններ, այլ համաձայն ժողովուրդների հոգերանու-

1) Տես «Մոբձ» 1895 թ. № 1:

թեան՝ նրա հոգին ալլ շրջանում ուղղակի իւրացուցման ազդ ձեռվն է գործում: Յւ ահա ժողովրդական բանաստեղծութեանց մէջ դեռ սազմակին զրութեամբ նիրառում է աղքավին բանաստեղծութիւնը իր բազմազան ճիւղաւորութիւններով: այս հեքիաթների մէջ է որ ժողովրդական լեզուն, պատմութիւնը, հաւատալիքը, օրէնք ու սովորութիւններն իրանց ծիլերն արձակում են: Հեքիաթներն ունենաչով մանկական պատմութեան բոլոր զլիսաւոր առանձնաչափութիւնները՝ պարզութիւն ու հարուստ բանաստեղծութիւն, բարուական հանգամանքներ, հրահանգիչ բովանդակութիւն, մնացուն արժեք և ձղումների ու իրէալների միութիւն, ամեն նիւթերից աւելի նպատակալարմար են: Հեքիաթները ժողովրդական կեանքի չարատեսութեան համար մեծ ոչ են համարում նաև եւրոպական կեանքում, հասպա որքմն ես առաւել կարեոր են նրանց հաստատուն բազմահիւզ արմատները մեր նախնական կեանքի ոչենքի կեանգուն պահելու համար, այն արմատները, որոնք տակաւին այնքան գթառատ կերպով սնուցանում են մեր զիւղական ամբողջ հասարակութեանց, մեր աղքութեան մեծամասնութեան մոտաւոր ու բարուական կեանքը, Ով ներկաւ է եղել հայ շինականների երեկոյթին, երբ հեքեաթը թէ վէպի, թէ թատրոնի տեղ է բռնում իր պատմական ու քնարերգական ճիւղաւորութիւններով, ով միւսկողմից տեսել է հալունիքի սրտից ու մոքից հեռուց ալս բանաստեղծութիւններից, զուրկ դաղթական հային՝ նա կարող է զգացած լինել այս հիանալի բանահիւսութեանց ոչն և հասկացած նրանց խորհուրդը:

## 2. Որարդական կամ Ոորբինզոնեան շրջան:

Երբ մանուկն ոկոսում է կասկածանքով վերաբերւել երեակալական կեանքի երեսութիւններին, ազդ նշանակում է ժամանակը հասած է նրան մոտցնել քնական երեսութիւն երի պատճառական ու միենողն ժամանակ գրաւիչ կերպով նիրկալացնել նախնական մարդու մաքառութեան հետ օրէնքները հաշուի առնելու: Ոորբինզոնի պատմութիւնը հեքեաթի պէս պարզ ու մանկական է, սակայն այն առասպելներում երեակալութիւնը մինչդեռ հազիւ ու անզգալի կերպով է իրականութեամբ սահմանական ճարշագույն արձակում, անստեղ գործնական երեակալաւութիւնը չարունակ պէտք ունի բնական օրէնքները հաշուի առնելու: Ոորբինզոնի կեանքը կուսուցանէ, որ, քնական օրէնքների ստիպողական բնաւորութիւնը մի կողմից մարդուն գէտի գործունէուն է ութիւն ու չառաջադիմութիւն է մղում, միւս կողմից սահմանափակում է պատմական զարգացման ընթացքը: Մանուկները երեակալութեամբ մասնակիւց են լինում սովորական մարդու ճիղերին ու ջան-

քերին, աշխատելով թէ մտաւորապէս ու թէ գործնականապէս որքան հնարաւոր է մտնել նրա արամազը բաւթեան մէջ, տոգորել նրա կրօնական առաջացմունքներով, նրան վշտակից և ուրախակից լինել, Աքաղիսով Ռոբինզոնի կեանքի նկարագիրը կարող է կրօնագիտութեան, բնական գիտութեանց պատմութեան նախշաւիզ գառնալ Այս վեպը կրթական տեսակէտից աւելի արդիւնաւոր կացուցանելու համար աւելի մշակման պէտք ունի: Ռոբինզոնին խկապէս պէտք է զրկել քաղաքակրթութեան բռնոր միջոցներից, աստա նաև ընդարձակել նրա չարաբերութիւնները ընտանեկան կեանքի շրջանով ու վերջապէս մշակել ազգային տեսակէտից: Այս վերջին կետն աւելի զգալի է նրա սկզբներում և վերջերում, այսինքն՝ իր ընտանիքում վարած կեանքի երևով: Նելում:

### Յիւցազնական դար:

Մարդկութեան սննդամերն, ընտանեկան ու հասարակական կեանք մտնելուց առաջ, զես անցնում են մի շրջանից որ կիսապատմական ու կիսաառասպելական լինելով՝ այդ երկուսի միացուցիչ օպակն է կազմում: Դիւցազներութիւնը բնական հետեանք է վայրենի կեանքի: «Քաղել առանց ցանելու», — ասում է Հոգէն, մարդկութեան բնական ու նախնական կեանքի նուանակն է: Բնութիւնից հասարակ կերպով օդումն ալես բաւարարութիւն չէր տալիս, իսկ հոգատար, կերպարանափոխի ու արտադրիչ աշխատութիւնը, որ պահանջում էր համբերութիւն, զրկանքներ ու չարատեսութիւն, երկար ժամանակ արհամարտում էր աւելի աշխատութեան առաջ, որ սրորդութեամբ, կողոպուտով և կուռով պատրաստի արտազրութիւններն իրա վաճելքին, էր ծառակեցնում: Բնական (վայրենի) զրութեանը հստեսց դիւցազնական դարը, դիշատիչ կենդանիների կեանքի նմանողութեամբ, որով մարդկալին զգածումը ոչ երբէք չպիտի դադարի հիանալուց: Ազոպէս շարունակելով նա դիտում է, թէ ինչպէս նուն իսկ հելլենական կեանքի նորն շրջանում, Հոմերեան բանաստեղծութեանց մէջ աշխատաւորները մի մութ խաւ են ներկայացնում, որի վրայ հասաւուում է աղնւականների զւարթ ու վաճելու կեանքը և թէ ինչպէս աշխատանքը ողու ազատութեան հակառակորդ է համարում: Անշուշտ այս կեանքի իդէալական երևութեալովն է որ մենք ցանկանում ենք ոգեսրել մատաղ սերունդը և նրանց կարաբերութեանց շրջանն աքաղիսով ընդարձակելու... Սանը պէտք է, դիտում Ռայնը, զիտենաւ այն համամանքների ծննդ նաև անութիւնը, որոց մէջ նա դրւած է իր ծագումով և անհաստականութեամբ: Սանը պէտք է իր ազգային քաղաքակրթութեան զիսաւոր զարձականիւրն ուսանի: Տարբական զպքագակրւած է բաւակաղբւած և բաւականանալ ակաքանալ, իսկ մեր ժողովրդական

դպրոցների ու մաճաւանդ միջնակարգ հաստատութիւններն ի՞նարկէ շատ աւելի պէտք ունեն եւրոպական քաղաքակրթութեան պատմութեան՝ քան այս երկրների կրթական հաստատութիւնները որովհետեւ իւրաքանչիւրի ազգակին պատմութիւնը կատած լինելով իր պէս լուսաւորւած գրացիների անցեալի հետ՝ ինքն ըստ ինքեան կարող էր բաւարարութիւն տալ:

Դերմանական Հերբարո-Ցիլերեան շկոլան նիրելունգների գիւցազներգութիւնը, որ ազդերի անդիր բանահիւսութեանց մէջ հոմերական-ներից լեսոց առաջինն է համարւում, վերապահում է չորրորդ տարւաչ գասընթացին հրէական զատաւորների զարու հետ, թէի ալդ դիւցազներգութիւնը իւր բավանդակութեամբ աւելի հեռու է բուն պատմութիւնից: Այս «ընդհանուր գերմանական զրոցը» որ զուտ հերսութիւն է ներկայացնում, առաւմ է Խանը, Թիւրինգեան-Վարաբուրգեան զրոցներին հետեւելով պէտք է միանաւ նրանց հետո: Հրէական զատաւորների հերոսական կեանքի երևովմներն են որ կապում են նիրէլունգներն ալդ շրջանի հետ: Խակ հրէական նահապետական զարուն զարգընթաց աւանդում են Թիւրին-զեան զրոցները, սակայն ինչպէս Schuljahr-ների հեղինակներն էլ խոստավանում են, այս աշխարհի այն նախնական ժամանակների ոչ պարապմունքները և ոչ էլ բարուական տեսակէտները համապատասխանում են նահապետականին.... Այնուամենահանիւ առաջարկւում են ալդ զրոցները, որովհետեւ ինչպէս որ կրօնական զարգացման շրջանի համար հրէական նահապետներն են սկզբնաւորութիւն կազմում, այնպէս էլ աշխարհական պատմութեան համար Թիւրինգեան լանգգրաֆները: Այս աեսակէտից մեր գիւցափնակուն զարն ու նահապետականը աւելի են համապատասխանում հրէական ու համամարգիկային տիստարներին, թէի մեզ հասած նիւթերը զեռ թերի ու անմշտկ են:

Հաչկական դիւցազնուական դար Մեր հնաւանդ գիւցազներգութիւններից տարաբազուար գողթան հիանալի երգերի միան խղձնուկ հստակտորներն են մեզ հասել, չին հին դարերի սիրելի միացորդներ, որոնք պատմում են մեր ժողովրդական բանահիւսութեան փառքը: Արդէն 1850 թւականից բոլոր հաչ և օտարադպի հաւագէտները սկսեալ էմինից, և Յոլիսի Գամբանանից, «Բազմալիպի» 1850 - 51 թ. յօդածագրից, մինչեւ Պալտաւանեան, որոնց ձախնակցում է Վ. Լանդլոււան, ալդ երգերի մասին ան կարծիքն են լաւտնել, որ նրանք կազմած պէտք է լինեն մի լի ակատար դիւցազն երգութիւն պարսկական Շահ-Նամէների նման, ուր պատմում է Հաւասաւանի հին ժողովրդների ամբողջ պատմութիւնը: Նունը վկազում են, ինչպէս Զարբանական լիշում է, Ագաթանգեղոս, Բիգանդ, Եղիշէ և Մագիստրոս ժամանակակիցների ամառամբ լսել է ալդ երգերից մի հատւած: Աերջերս Հանդէս Ամսորեալի» 1894 թ. 5—8

համարներում լուս տեսաւ գերմանացի Ֆեթթէրի նոր ուսումնասիրութիւնը Հ. Ա. Ա. -ի գիտողութիւններով, Գերմանացի հայագէտը չի կարծում՝ հակառակ վերոլիշեալ ուսումնասիրութեանց, որ Կողթան երգերն ի հոռամի պամբողջ զիւցազներդութիւններ կազմած լինէին, այլ Դիւլորիէի հետ նաև նութեադրում է, որ Նրանք սպանիական Ռոմանսներուի և գաղղիական Տրուրագուրների նման բանաստեղծութիւններ եղած լինէին: Ֆէթթէրի բերած փաստերը սական տակաւին անքան համոզեցուցիչ չեն, մեր կարծիքն այս մասին փոխելու համար: Հ. Ա. ասում է... «կընանք ապահովագէս հաւասառել, թէ մեր վիպասանքն այն էին, ինչ որ տաճաց հագններգուք (rapsodes). ասոնք Հոմերոսի եղիական վիպասանութիւնը կ'երգէին, իսկ հայ վիպասանները Արտաշևսի քաջագործութիւնները»: Վերջը Ֆէթթէրը, շատ բարձր արժանիքներ գանելով այս երգերի մէջ, հետեւալ կերպով է նրանց բնորոշում... «Օկաւ կտոր մը որ հասարակ իմաստ ու ասացւած ունենալ, ամենն ալ մէկըզմէկէ գեղեցիկ են և եթէ ամրող վիպասանութիւնը պահւած ըլլար, ամեն ակիրթ աղդաց վիպասան ու թեանց հետ ապահովագէս ալիտի մրցէրու»:

Գողթան երգերից լետոն՝ սկսեցինք «Սասունցի Դաւթին» ու «Սասունակ ծոերն» ուսումնասիրել մանկավարժական տեսակէտից: Հենց աշխատութեան սկզբներում շատ սննդամ մեր միտքը հակւում էր այս կողմը, թէ աչս երկու զիւցազներ զութեանց մէջ կարող էին կապեր եղած լինել: Գողթան երգերը, որ նախնիք վիպասանութիւն, զէպք և թւելեաց երգեր էին կոչում, շատ հաւասական է, որ իրանց մէջ և իրանց չաստոկ չափական թղթով պարունակած լինէին նաև Սասունցի Դաւթի (Սամակ ծոերի, Դաւթիթ և Մհերի) նիւթերը որոնց պատմական անցքերը առաջիններից 400 տարի առաջ պէտք է չափառանում տեղի ունեցած լինէին: Եւ միւս կողմից քանի որ Աժատահակի (Շահ-Նամէկի Զօնակի ըստ Օպէկտափի և Լմինի) և Տիգրան մեծի մէջ կապեր կան ու Գողթան երգերը մինչև ժամանել հետքեր են թողիվ պէտքէ ենթադրել, որ Սասունցի Դաւթին էլ այդ երկու բանահիւսութեանց հետ առնչութիւններ ունեցած լինէր: Սական այս կարծիքն անքան հիմնաւոր չէր լինի, եթէ Շահ-Նամէկների և Սասունցի Դաւթի մէջ բազմաթիւ նմանութիւնները ու զսրծողութեան վայրերը այդ ակներն չափացուցանէին: Շահ-Նամէկների հոչակաւոր գերման թարգմանիչ ֆոն Շաքն ասում է, որ այս դիւցազներգութիւններն իրանց ազգեցութիւնն ունեցել են Պարսկաստանի սահամաններից դուրս դէպի արեմուտք: Նա ապացուցանելու համար, որ այդ բանահիւսութեան էական մասերն եւ դարտամ արդէն այդ ձեռվ դալութիւն էին ունեցել, իշում է Մ. Խորենաց: վիպատքիւնները և նրա բռնած արհամարական գիրքն այս առարջինակ առասպելներից վերաբերութեամբ: Շաքը համեմատելով գերմանական

Նիբէլունգները պարսկական Շահ-Նամիների հետ նրանց ողին նոյն է համարում, իբր քնական հետեանք միենուն հին ցեղակցական երեսի Ների. Մենք մտաբերեցինք այս առիթով նաև Շահ-Նամիների հաջ թարգամանից պ. Ս. Գիւլզատեանցի խօսուումը «Մուլճում» մի օր հրատարակել այս դիւցազներութիւնը և մեր Կողման երկերի մէջից կտած կառնչութիւնները, որին մենք մեծ հետաքրքրութեամբ սպասում ենք: Ինարկ է մեծ պէտք է լիներ մեր ուրախութիւնը, երբ պ. Ս. Արեգեանի «Դարիթ և Մհերի» լառաջարանում կարգացինք հետեանալ առղերը, ... սկզբում ուստանառութ էր, այլ միշտ երգում մի առանձին եղանակով... լաւ ուշագրութիւն զարձնողը կը տեսնի, որ արդի ժողովրդական վէպի աչս ձաչս ական տողաչափութիւնը, որ բոլորովին նոր է մեր բանահիւսութեան մէջ, շատ նման է մեր հին հին հիթանսական վէպերի չափին (երկնէր երկին, և միւս հաստածները Խորհնացու մէջ)։ Եւ օրինակներով ցոլց է տալիս պ. Արեգեանցը: Արեգեանի գրի առած վարիանտից, ինչպէս տեղեկացանք, նրան պատմող մոկացին Վենեկանց գիւղից Կովկաս և այլ տեղեր երկար ժամանակ թափառած ծերունին ի միջի ալլոց ասել էր, որ այս պատմութիւնը քառասուն ձիւղ ունի, որ ամբողջը գիտեցողները շատ հազւագիւտ են և որ իւր կեանքի մէջ նա միան մէկ ազգպիսի մարդու է հանդիպել, երբ լինքը դեռ երիտասարդ էր եղել... Այս բոլորից լետոյ մենք ի հարկէ պէտք է այն եղրակացութեանը գանք, որ այդ բոլոր վարիանտները մի ընդարձակ դիւցազներութիւնն թանգագին միացորդներն են: Արդէն մինչև հիմա հաւաքւած վարիանտները բաւականին ամբողջացնում են միմեանց, հերոսների պատկերները բնորոշում աւելի պարզ գոներով: Ժամ է արգէն կորսարից գրիկելու նաև այլ միացորդները և ի մի հաւաքելով անմահացնելու տղ տիտանների վշատակները: Նաև ելով ժողովրդական դիւցազներութիւնն զարգացմանը ընդհանուր օրինքներին՝ նա արձակ ձեխից վերածւած պէտք է լինէր ոսանաւորի աշումների (բասողների) ձեռքով: Խակ հիմա, երբ այս թանկագին դիւցազներութիւնը ժողովրդի վիշտութիւնից հետղնետէ անհետանալով դէպի վերջնական քակբարումն է, դիմում ու արդէն իր հերոսներից շատերին անդառնալի կերպով կորցրել է, բայց երբ նա ժողովրդի բերանում գէթ մասամբ դեռ կենդանի է, պէտք է վերակենդառնանաց: Նոր շոնչ ստանակ մի անսպիսի բանատուեղծի երևակալութեամբ, որ ներշընչւած է «իւր ազգի ամբողջ երիտասարդական դիւցազնական ովտով», ինչպէս Ֆ. Շաբն է ասում: Թող գուրս դաէ Աղավեանցը կամ նրա պէս մին ու «Ճորք Անդեղի» պէս հիմանալի կերպով վերարտադրէ այս աւանդութիւնները և այն ժամանակ մենք մեծ գրական հարստութեան կը տիրապես առաջ արթիրան անք, մեր նախնիքների քաղաքական

մի ամբողջ շրջանը բնորոշող թաց ի հարկէ Շահ-Նամիների ողակը էլ պէտք է ներչնչւած լինի ալդ վերաբազրիչ հայ բանաստեղծը Առ ժամանակ մանկավարժներս չատ և չատ չնսրհակալ կը լինէինք, եթէ բոլոր վարիանաները մինն չանձն առնէր համեմատել և արձակ ձևով մի մշակւած նիւթ պատրաստէր՝ իբր ուսումնարանի երրորդ տարւակ ուսուց- ման կամ ընթերցասիրութեան նիւթ:

Աղակեանցի «Տորք-Անգեղը» Ակս «Հին-զրոցի» գործողութեանց գըլ- խաւոր վարերից մէկը, Գուգարք (Լոռի), նաև «Սասմակ ծուերի» գլխաւոր վազրերից մինն է: Տորք-Անգեղի հերոսները ոչ միայն էնա չեն մնում այն հերոսներից, նրանց Տորքը ոչ թէ հսկաչ ալլ ավել է: Տորքի Հայկանուժն էլ ոչինչ բանով պահառ չէ Խանդաւ Խաթունից, Ալդ դիւցազրւների պատկառանքը դէպի մեծները, հերոսութիւնները, երախտագիտութիւնը, հսկաչական ոչի հետ համեստութիւնը և հեղութիւնը, մեծանորութիւնը, հալրենասիրութիւնը—հին-հին դարերի քաղցր բուրմունքով ալնպիսի խոր տպաւորութիւն են զործում, աճնքան սիրելի են դառնում մեզ ազդ պատ- քամեան տիտանները, որ սրտի խորքերից հառաջում ենք «երանի այն աշխարհին ու մանկանց», Կառաջարկեինք սաներին նախ ալս զուտ արե- ապազտական աշխարհը ներկայացնել և ապա Սասունցի Դաւիթը, մինչի որ սա նոր մշակութեամբ լուս կը տեսնէր և հարկէ ամբողջ Տորք-Անգեղը անգիր անել տալ չի կարելի: Պէտք է արձակ ու աւելի պարզ ձեի վե- րածել և միայն տեղտեղ հերոսների որտասուչ արտազատութիւնները լինաղրի ձևով ուսուցանել: Ակս կամ այն հատւածը, եթէ իր ոգուն պատ- շաճ եղանակ զոննէր, ինչ ասելի կ'ուզի, որ աւելի գեղեցիկ ու մօտ կը լի- նէր բուն ժողովրդական ողուն: Աւելի ուշ, իբր ընթերցանութեան նիւթ, ալս դիւցազներզութիւնն իր բնադրի ձևով առանձին հրճանքով կը կար- դացւէր:

(Շարունակելի)

## Գ Բ Ա Խ Օ Ս Ո Ւ Ի Թ Վ Ի Կ Ն

ՃՈՒՂՈՒՐԵԱՆ Յ. ՍԱՐԿԱՒԱԳ. — «Մոռացւած աշխարհ» Ա. գիրք.  
Թիֆլիս. տպ. Շարաձեկի. 175 էջ. գինը 60 կուլ.

«Մոռացւած աշխարհ» վերնաւ-  
զրով սարկ. ձուղուրեանը ոկտել է  
հաստարակել մէկը միւսի ետնից իւր  
աշխատութիւնները. Երկու հասոր  
արդէն լոյս են տեսել. երրորդ և չոր-  
րորդ գրքերը, երեկի, շուառվ լոյս  
կը տեսնեն. Մենք կարդացել ենք մի-  
ան առաջին գիրքը և դորա արած  
տպաւորութիւնը շտապում ենք հա-  
զորդել մեր ընթերցողներին:

Վերովիշևալ ընդհանուր վերնա-  
զրի տակ բերւած են բազմաթիւ  
պատկերներ, որոնց նիւթը վերցրած  
է Պաղասի կողմի հաւ գիւղացիների  
կեանքից. Մենք չգիտենք, թէ որ-  
քան կը լաջողէին «Մոռացւած աշ-  
խարհ» հեղանակին մեծ վեպեր և  
կամ պատկերներ ոչ գիւղական կե-  
անքից. Բայց պատկերների ներկան  
արտաքին ձեր շատ լաջողւած է.

«Մոռացւած աշխարհ» կարդա-  
լուց իւտու մարդ չի պատուալ նորա  
վերակ կորցրած ժամանակը, այլ ու-  
րախ կը լինի, որ կարդացել է. Պատ-  
կերները հարուստ բոլանդակու-

թիւն ունեն. Աւելորդ նկարագրու-  
զրով սարկ. ձուղուրեաններ զըժ-  
հաստարակել մէկը միւսի ետնից իւր  
աշխատութիւնները. Երկու հասոր  
արդէն լոյս են տեսել. երրորդ և չոր-  
րորդ գրքերը, երեկի, շուառվ լոյս  
կը տեսնեն. Մենք կարդացել ենք մի-  
ան առաջին գիրքը և դորա արած  
տպաւորութիւնը շտապում ենք հա-  
զորդել մեր ընթերցողներին:

Եթիւն ունեն. Աւելորդ նկարագրու-  
զրով սարկ. ձուղուրեաններ զըժ-  
հաստարակել մէկը միւսի ետնից իւր  
աշխատութիւնները. Երկու հասոր  
արդէն լոյս են տեսել. երրորդ և չոր-  
րորդ գրքերը, երեկի, շուառվ լոյս  
կը տեսնեն. Մենք կարդացել ենք մի-  
ան առաջին գիրքը և դորա արած  
տպաւորութիւնը շտապում ենք հա-  
զորդել մեր ընթերցողներին:

Հայ գիւղացու ընտանեկան նիստ-  
ու կացը, գաշտափին և հասարակա-  
կան կեանքը իւր բոլոր արտակալ-  
տութիւններով հանդէս է գալիս  
«Մոռացւած աշխարհ» մէջ. Հայ  
գիւղացու լողէալը, հասկացողութեան-

չափը, բարուականութիւնը, սպուրութիւնը, նախապաշարմունքները, նորա լեզուն իւր հարուստ դարձւածներով, —այս ամենը կատարեալ ծշտութեամբ արտափազել է սարկ. ծուզուրեանի պատմութիւն ների մէջ: «Մոռացւած աշխարհի մարդիկը ասլրում են իրանց համար լաւ կամ վաստ Մի մասը հարստանարում է, ճնշում է, անհիմն գառաստան է կարում, բանտարկում, գրփում և ապրում անպակաս, միւս մասը քրտնաթոր աշխատում է, պարտքերի տակ հեծում է, լալիս է, և ապրում հաղար ու մէկ զրկանքների մէջ: Բայց մարդ պարզ տեսնում է, որ այդ աշխարհի վերաց հաւասարապէս սփոււած է աղիսութեան խաւարը, և լուսաւորութեան ձառագալթները չեն թափանցում ազգ խաւարի մէջ:

Հեղինակը ունի մի առանձնաւատկութիւն. իւր կողմից շատ չէ խօսում: Նա ետին զծի վերաց է կանգնած: Նա զսպում է իւր սեփական հաշեացքը և զգացմունքը այս կամ այն խնդրի նկատմամբ, այս կամ այն պատկերը նկարազմելիս: Մենք ականատես ենք միան այն տեսարաններին, որ բացւում են մեր առջե, մենք ունինք ենք միան գործող անձանց խօսակցութիւններին, և ինքներու եղակացութիւններ ենք անում, ինքներու գնահատում զիւղական կեանքի: Եւ շատ լաւ էլ անում է վիպատանը, որ օբեկտիւ է մնում, որովհետեւ, երբ նա երրեմն իւր կողմից խօսում է, չափնում է իւր կարծիքը, իւր համակրութիւնը կամ

հակակրութիւնը, ապաւորութիւնը թուլացնում է: Օրինակ, նա մի տեղ շար ծիծագում է այն բանի վերացոր մի գեղջկուհի «կորցնելալ գիւղական կնոջ լատուկ նահապետական համեստութիւնը և պարզ կեանքի հետ ամօթխածութիւնը, քանդել էր հաղար ու մի լաթոլ փաթաթած գլուխը և թանկագին բազգաղի ծածկել...» («Անդգոյր»): Նիթէ հայ կինը կորցրել էր իւր ամօթխածութիւնը արդ պախարակելի է. բայց միթէ պախարակելի է, որ նա քանդել էր հաղար ու մի լաթոլ փաթաթած գլուխը և թանկագին բազգաղի ծածկել? Յետո՞ւ «Հերիքը ամբող մարմնով զողում էր, ամեն մի հեկիկանքը նրա ան մէ զ սիրող կտոր կտոր էր անում», «Անմեղ բառը այստեղ բոլորին անտեղի և աւելորդ է: «Մոռացւած աշխարհի հեղինակը որքան օբեկտիւ լինի իւր պատմութիւնների մէջ, այնքան աւելի կը վաստակեն նորա դրածները գեղարւեստական տեսակէտից: Սորանուի ի հարկէ, մենք չենք կամ մենում ասել, թէ ամեն մի գրադի համար պարտաւորիչ է օբեկտիւ լինելը: Կան գրողներ, որոնց ոչը ոչ անքան չափանած զաղափարների մէջ, այլ տիպերի և երեսթների ճգլիք և գեղարւեստական նկարագրութիւնների մէջ: Աչպայս է Նէկոսիլը Բնդհակառակը, կան և աշնպիսիները որոնց ոչը կաչանում է, աւելի նոցա բուռն զգացմունքների մէջ նոցա անհաստական համակրութիւնների կամ հակակրութիւնների մէջ: Արդպէս է Քայլնը: Նէկոսիլի տիպը ընդունում է հեղինակը անտեսանելի է

Բալբնի երկասիրութիւնների մէջ հեղինակի ներկաչութիւնը ակներե է և զդալլի Շէկսպիրը կը թուլացնէր իւր տրավերդիանների տպաւորութիւնը, եթէ լաճախ մտցնէր նոցա մէջ իւր սեփական «ևուը», Բալբնը, ընդհակառակը, չէր կարող գառնալ Բայրն, եթէ իւր «ևուը» չմտցնէր իւր գրւուծների մէջ:

Բացի մի քանի արժանաւորութիւններից, սրոնք են՝ գիւղական կեանքի և տիպերի ճիշտ նկարագրութիւնը և ժողովրդական լեզվն վերաբերիալ կատարեալ հմտութիւնը, սարկ, ձուլուրեանը անի նաև մի զուտ գիւղարեւստական արժանիք—ճիշտ, բնական և զեղեցիկ համեմատութիւնները, «Հերիքը ճուռը կո ր ց ր ա ծ հ ա ւ ի ն մ ա ն ա լ ս ու ա ն կողմն ընկնելով, ուզում էր զոմի զուտը բաց անել» իւր բանտարկւած ամուսնուն տեսնելու:

Բաց մի խորհուրդ միր կողմից, «Մոռացւած աշխարհի» հեղինակը թող աշխատէ մշակել զբականական լիզուն աշնակիալ տեղերում, որտեղ խօսում է ինքը և թողաչխառնէ մա-

քուր զբականական լեզվի մէջ զուտ զաւառական աշնակի բառեր, որոնց համապատասխան բառերը դորձածական են դարձել մեր զբականութեանը թեան մէջ:

Հայ ժողովրդի կեանքը վաղուց է, ի հարկէ, հարուստ նիւթ է մատակարարում մեր գեղարւեստական զբականութեանը. Այդ կեանքը շարունակ նկարագրում է թէ մեծ վէպերի, թէ վէպիկների, թէ պօէմաների մէջ. Բաց սարկ. Հուզուրեանը առաջինն է, որ սիստեմատիկաբար բազմաթիւ մանր վէպիկների և պատկերների ձեռվ ներկացնում է մեր առջև հայ գիւղական ժողովրդի կեանքը իւր լաւ և վատ կողմնուի:

«Մոռացւած աշխարհը», մեր կարծիքով, հաստատուն անդ պիտի բանէ մեր զբականութեան մէջ և երկար ժամանակ նա չի մոռացւիլ:

### Լ. Մ.

Տէր-ԳրիգորԵԱՆՑ, Էմին.—«Բարեգործութեան դիմակի տակ». զբաման հինգ զործողութեամբ: Երևան, տպ. Էմին Տէր-Գրիգորեանցի,

186 էջ, գինն է 1 ռուբլի:

Մեր բանաստեղծութեան ոչ մի ձիւղը անքան աղքատ չէ, որքան գրամատիկականը, Ալիպական բանաստեղծութիւնը ունի մի քանի նկերկառացուցիչներ, քնարականը— նունակէս. զբամատիկական բանաստեղծութեան մէջ միակ Սունդուկեանցն է, և ուրիշ ոչ ոք. Այս երեսակառացուցիչները ավելի իւր բացարձի պատճառները. Սորա ընդհանուր պատ-

ճառը այն է, որ եւրոպական գրականութեան մէջ վէպը ներկալ դարու երկրորդ կիսում կլանել է բանաստեղծութեան միւս ձիւզերը և անհամեմատ աւելի զարգացել ի մեսա նոցաւ Հայոց նոր գրականութիւնը նոյն այդ հոսանքի մէջ է առաջ դնում: Խնչպէս Եւրոպակամ, Ռուսաստանում, նոյնպէս համերիս մէջ տաղանդները, ըստ միծի մասին, սպառում են վէպի վերակ: XIX դարու երկրորդ կիսի ամենալուսաւոր աստղերը գրեթէ բացառապէս վիպասաններ են: Այդ ժամանակամիջոցին վերաբերեալ նշանաւոր վիպասանների թիւը չափ մեծ է, մինչդեռ նշանաւոր ողբերգակներին կամքնարական բանաստեղծներին մատով կարելի է համարել Գալով վերտիչներ երեսութիւնուրի մասնաւոր պատճեն, այդ պատճառը մենք զանում ենք մեր հասարակական կեանքի ներկաւ պալմանների մէջ: առեմ աւելի պարզ մի կարեսոր հաստատութեան բացակալութեան մէջ: Այդ կարեսոր հասարակական հաստատութիւնը մեր ներկաւ քաղաքակրթութեան մատական կազմին է: Նրէ մենք ունենալին ընկանակ բայց իրավունք ունենալու մասին ընդունակ է համարել կողմից չեմ առում հաստացած, այլ նոյն խիթեթե հոգեբանական հմտութիւն Մարդու ներքին աշխարհը իւր շարժումներով անծանօթ է հեղինակին:

Դրամակի նիւթը վերցրած է իր թէ գաւառական համի կեանքից, Բայց իրօք համի կեանքի միայն սուսերն է այստեղ, այն էլ հազլու նշանակները: Տիպեր չկան: Դործող անձինք համերիս կազմում է այս պարագաների մարդկանց տեղաւորութիւնն չեն գործում: Դրաման մկուսում է մի պարունկ և մի օրիորդի ձանձրակի զատողութիւններով բարեկարգութեան մասին և վերջանակ մի անպիսի խաչառակութեամբ որպիսին, գուցէ, պատահում է հերքաթների մէջ, բայց ոչ չոչ կեանքում, այն է հաջ աղջիկը եկեղեցում պատի ժամանակութեամբ կողքին կանդնած մի երիտասարդի կերպ զարգաւեսական թէ հասարակական բայց ունենալութեան մասին և վերջանակ մի անպիսի առաջանակ թէ անունում է անքարին, թէ անունում է անքարին:

Խմուղում և ուրիշութեամբ, և հայի քահանան, միամստաբար թէ ինքնավատահութեամբ, պատկռում է հարախ ալն զարոնի հետ, ասելով, թէ «Ակեղեցին էլ պահանջում է, որ ես սրանց պատկեմու ֆեսի քիթը, ի հարկէ, յրկարում է, զարացած գալիս է հարանքատուն, սրակու զի հարախ հօր երեսովը տակ, որ նա «այնպիսի անգատկառ ազջիկ է պահել, մեծացրել» Խեղճ հապրը ալս անբախտութեան վերակ, հեղինակի խօսքով՝ «անթահար» է լինում և սրտապատառ ընկնում է գետին. Յետող նորդապսակ հայ պարոնը և հայ ազջիկը գալիս են ժառանգելու հանգուցեալի հարատութիւնը.

Դրաման արժանի չէ մանրամասն զերածութեան. Մենք կը չեցունք միան նորա խոշոր թերութիւնները. Ազ թերութիւնները զլիսառապիս զերաբերում են տիպերին. Ահա ձեզ Անդեքեանը, զրամալի հերոսը. Դամի չարազործ է, որ ամենայն սառնարատութեամբ պատրաստ է լուչարդել վարձկան սպանչին եղեւնագործութեան կերպը, որ ահագին տոկոսներ է ասնուում զիւղացիներից, իբրև մի վաշխառու, որ գիտէ զանազան խարդախութիւններ անել Աչեռքի մէջ; Իբրև մի ստոր արարած, որ կարող է ուրիշ շատ կեղաստ, խարդախ գործեր կատարել մի խօսքով, կատարեալ սրիկաք Եւ միենոն ալդ սրիկան զաւանի է իւր բարե գործութիւններով, աչ ու ձախ թափէ տալիս իւր հարիւրանոցները բարեգործական նախատակներով. պղպարցներ, վանքեր, բարեգործական հաստատութիւններ, մատնատոր անձ-

նաւորութիւններ և խեղճ ընտանիքներ վակելում են նորա ջերմ կարեկցւութիւնը, օգտում նորա առատաձեռնութիւնից»—Երբ նորանից փող են խնդրում բարեգործական նախատակով, նա զաղղողալով չէ ձեռքը տանում զրալանը մի քանի մանէթ հանելու համար, ինչպէս բնականաբար կ'անէլ նորա նման սրիկան, այլ ուղղափի հարիւրներից է, խփում։ Նորան ասում են՝ «որքան էլ նւիրելու լինէք, մնեծ երախտագիտութեամբ կ'ընդունւի», նա պատասխանում է «հարիւր կամ հարիւր վիտոն մանէթ բաւական է?» նորան զաղցնում են թէ բաւական է, բաց սրիկան բարեգործութիւն անելու հիւանդութիւն ունի, և նա աւելացնում է. «եթէ քիչ է, կարելի է և երկու հարիւր տար»:

Բաց ինչի համար է ալդ սրիկան բարեգործութիւններ անում? Պատճառը չեցուած չէ. Երեի նորա համար, որ ալդպիսի բարերարին գովաբանում են լրադրում. Ուրեմն մեզաւոր են լրադիրները, որոնք սնունդ են տալիս նորա փառասիրութեանը. «Քէփս է զալիս, ասում է նա մի բարեգործութիւն անելուց հետ, թէ ինչպէս աջողում է ինձ... Աչ հիմա զարձեալ զողւած լրագրում. զարձեալ Կեղեքեանը փալլում է լուսատու ասողի նման իւր առատաձեռնութեամբ. զարձեալ թարմանում է բարեգործութեան ազգեցութիւնը հասարակութեան մէջ, Աւրեմն, եթէ Կեղեքեանը բարեգործութիւններ է անում փառասիրութեան համար, նորա բնաւորութեան ալդ կողմը թան-

ձըր զբչով պիտի չեշտուեր պիեսալի մէջ: Բայց դարձեալ բան չէր դուրս գալ. Կեղեքեանի անձնաւորութիւնը չէ համասլատասխանում իրականութեան և հակասում է հոգեբանութեան: Մեր ոչ մի դասակարդի մէջ չկան այնպիսի հաւեր, որոնք, Կեղեքեանի պէս, բարեգործութիւններ անելու հիւանդութեամբ բռնւած լինեն:

Մեր մէջ աւելի խոշոր բարեգործութիւններ անում են կտակով, սառութեան Կեղեքեանին չէ վերաբերում: Բարեգործութիւններ անում են հաև շատ ուրիշները, բայց նոցա բարեգործութիւնները պամահական բնաւորութիւն ունեն, և ազդ պատահական բարեգործիւնների մտսին փողեր չեն հնչեցնում լրացիբների մէջ: — Լրագիրները երբէք աշնպիսի մեծ սնունդ չեն տալիս Կեղեքեանի նման սրիկանների փառասիրութեանը, ինչպիս ուղում է հաւատացնել մեզ դրամալի հեղինակը: Միւս կողմից Կեղեքեանի սննձնաւորութիւնը մի հոգեբանական սիրալ է ամբողջապես: Կեղեքեանը գոտութիւն չունի ոչ հայերիս մէջ, ոչ մի ուրիշ ազգի մէջ: Կեղեքեանը կինդանի մարդ չէ, ալ երեակալութեան մի անձունի արդինք: Կեղեքեանը—ստոր ահսակի սրիկալ է, և ալդափիսի սրիկան չէ կարող լինել փառասէր այն աստիճանի, որ հարիւրանոցները աջ ու ձախ թափ տաք: Եազօն սրիկալ է, և փառասէր չէ, Մակրէթը փառասէր է և չարագործ, և սրիկալ չէ, նուն իսկ, մի որոշ չափով, խղճի տէր է, աղնիւ և պարտած մեաչ—գոնէ սկզբում: Հասարակուան փառասի-

րութիւնը այն չափով, որչափ պէտք է հնթաղրնք Կեղեքեանի մէջ, չէ կարող միացած լինել այնպիսի ստորութեան և սրիկաւութեան հետ, որոնք կազմում են Կեղեքեանի բնաւորութեան մեծագոյն մասը:

Մարդ կարող է լինել Կեղեքեանի պէս սրիկալ գուցէ և աւելի, բայց ոչ այնքան փառասէր և բարեգործ, որքան Կեղեքեանը: Մարդ կարող է լինել փառասէր և բարեգործ, որքան Կեղեքեանը, բայց ոչ այնքան սրիկալ ինչպիս Կեղեքեանն է, Կեղեքեանի անձնաւորութիւնը դրամալի մէջ մի աբուրդ է: Ահա ձեզ դրամալի հերոսը:

Դրամալի մէջ նկարագրուած անձնաւորութիւններից է և Կեղեքեանի աղջիկը, Հեղինէն: Սորա բնաւորութիւնը վերցրած չէ իրականութիւնից, ալ ծնունդ է դարձեալ հեղինակի, երեակալութեան: Հեղինէի նման աղջկերք գուցութիւն չունեն մեր մէջ: Բայց նաևնք զորա վերադարձիկուց, Հեղինէն զիմնավիան տարածելուց չետ դատնում է աղջական սկսում է հետամուս լինել մարինի լեզեի ուսումնասիրութեան, վարձում է ուսուցիչ (Ռուբէն): Ազդ Ռուբէնը բաւականին սահմանափակ գըլիսի տէր մարդ է երեսում: Գիմնավիան աւարտած օրիտրդին հայերին սովորցնելու ամենալաւ միջոցը կը լինէր հաչ հեղինակների բնթերցանութիւնը: բայց նաև ո սուրէ է քերականութիւնից (երեկի աշխարհաբար): Մի երկու ամսում վերջնում է քերականութիւնը, և կարծում է թէ առավես զի լեղւագիտութեան միջ կստարեալ լինել, ան-

հրաժեշտ է ծանօթանալ մեր մատե, սադիրների հետո, ուսումնասիրել լեզվի գեղեցիկ ձևերը, նորա ճոխաբա նութիւնը, ոճաբանութիւնը, ստուգաբանութիւնը, և ալն, որոնց մենք մի բառով ճարասառութիւն ենք անւանում: Ել ինչ գարդ, մի հարուստ կալւածատէր որիկավի աղջիկ, որ աւարտել է գիմնազիա և երբեմն իւր անձի վերակ առանձին ուշագրութիւն է զարձրած եղելոյ յանկարծ, չը գիտենք, ինչ պատճառով, ուսուցիչ է փարձում, որպէս զի հայերէն սովորի անցնում է մի երկու ամսում քերականութիւնը և ասկա, ուսուցչի խորհրդով, կամհնում է անցնել նաև ճարտասանութիւնը (!) Այդ պարոնը շատ տհաս մտքեր է քարոզում իւր աշակերտունուն: Օրինակ, նա հաւատացնում է խեղճ աղջկան, թէ մեր մէջ բարեկործութեան դիմակի տակ զրիթէ ամենքը իւր թէ «իրանց մութ և կելպոտ նպատակներն են առաջ տանում», միենուն ժամանակ իւր թէ «փակական լարեկործութիւնը, որ օժտւած է սուրբ սիրով զէպի մերձաւորը, զէպի հասարակութիւնը, զէպի ազգը, զէպի բովանդակ աշխարհը մենք համարեա թէ չինք տեսնում: Շնորհիւ քերականութեան և Ռուբէնի փիլիսոփականութիւնների, աղջիկը զարգանում է, և ինչպէս է զարգանում, Ասուած աղասի! Զբաղւած լինելով մայրէնի լիզի ուսումնասիրութեամբ, նա սկսում է աշասակա, նւազել զաշնամուրի վերաբուրովական վերջին տարազով կարծ հաղուստը հանում է, և նորա տեղ հաղնում հասարակ ձևով չիթ:

Հիւանդ գիւղացիներին բժշկում է, առանց բժիշկ լինելու: Հետամուտ է վնասում հօր վաշխառութեանը, խառնուում է հօր և ուրիշների դորձերի և հաշխաների մէջ, երեսովն է տալիս նորա խարզախութիւնը, ամենանպատկառ լեզով ասում է հօրը»:

«Հիմա էլի չանդգնում ես խեղճ Մելքոխն աքսորել տալու... ալմինան խունկի տեղ ազը կը ծիւեն քո առաջը... Լաւ մտածիր թէ ինչ ես անում: Խղճմտանք ունեցիր: Դիմակդ միշտ երեսիդ չի մնալու...» Նա դեռ աւելի է զարդանում: Հարսանիքի գիշերը, երբ կեղեքեանի տանը թնդում է զինւորական օրկեստրի նւազածութեամբ, զարդացած օրիորդը ընկնում է իւր սիրելի ուսուցչի գիրկը: Փեսոցաւն զալիս է և տեսնում իւր հարսնացուին և երիտասարդին սիրոյ արբեցման մէջ: Այդ տեսարանից չետող փեսոցն հրաւիրում է հարսին եկեղեցի: Եկեղեցումն էլ զարդացած աղջիկը կատարում է այն քաջագործութիւնը, որ նորաբուրու քաջագործութիւնների զլուխործոցն է: Այդ քաջագործութիւնն մասին խօսք եղել է արդէն գրախութեան սութեանս սկզբում:

Մենք աւելորդ ենք համարում կանգ առնել միւս անձանց վերլուծութեան և զրամակի միւս թերութիւնների վերաբ:

Ալսաճն էլ բաւական է, եթէ շատ չէ:

## Ն Ի Ւ Թ Ե Բ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴՐԻ ՆՈՐԱԳՈՅՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ՊԱՏՄՈՒԹԵՍՆ ՀԱՄԱՐ

«Մուրճ»-ի անցած երկու համարներում (1894 թ. գեկտ. և 1895 թ. յունշ.) մենք աւինք հնարաւոր եղածին չափ ընդարձակ տեսութիւններ հայկական խնդրի նորագոյն զարգացման մասին: Վերջին յօդւածում մենք յոյս էինք յայտնել թէ մինչ փերաւարի վերջը խնդիրը աւելի որոշ կերպարանք կը ստանայ: Այդ յոյսը չարգարացաւ, որովհետեւ դրութիւնը ներկայ բողէում ճիշգ նոյնն է, ինչ կար մի ամիս առաջ: Գործելու գլխաւոր ասպարէզը այդ ամում մնացել էր քննիչ յանձնաժողովին: Խայց քննիչ յանձնաժողովի գործունէութեան և առացւած արդիւնքների մասին աեղեկութիւնները գեռ ևս շատ կցկոտուր են և եղածները ստուգութեան կարօս: Այդ գործունէութեան ամփոփումը տալու համար մենք պիտի սպասենք մի առժամանակ. բազդաւոր կը լինենք, եթէ հնարինի այդ ամփոփումը տալ «Մուրճ»-ի մարտի համարում: Առաջմի քանի որ դրութեան փոփոխութիւններ չկատարւեցին մեր վերջին յօդւածից յետոյ, մենք բաւականանում ենք այս անդամ հրատարակելով մի քանի նիւթեր, որոնք վերաբերութիւն ունեն մեր անցեալ յօդւածին: Նիւթերի տպագրութիւնը մենք կը շարունակենք որքան այդ հնարաւոր և մեղնից կախած կը լինի:

ԱԻԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ

## ԳԼՈՒԽԸՆԸ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ

(«The Daily News» 31 դեկտ.)

Դեկտեմբերի 29-ին միստր Գլագոլյանը վերին առաջին ինքնուրովն կերպով տօնեց իւր ծննդեան 85 տարեգարձի օրը: Նա ընդունեց մի պատգամաւորութիւն և ուղարձ գտնւած հայրի կողմից, որ սպասում էր նրան Հովարդէնի ծխականների ժողովում, և մի ձառ ասաց, որ խորին ուշադրութեամբ կը կարդացի քաղաքակրթւած աշխարհի ամեն մի անկիւնում: Մենք կարիք չունինք երկարաբանելու միստր Գլագոլյանի գերազանց հանձարի վրայ, որով նա շօշափում է իւր նիւթը: Նա դարձեալ նոյն հաւատարի բարեկամն է տաճկական լուծի ներքեւ ընկճւած քրիստոնեաց հոգատակների համար, ինչպէս որ առաջ էր, — այն բարեկամը, որին նրանք սովոր են յուսալիր աչքով նայել իրենց նեղութեան ժամանակ: Եւ իրաւունք ունին այդպէս անելու: «Ճշմարիտ է», նկատեց իրաւացի հոգարտութեամբ միստր Գլագոլյանը շաբաթ օր, ճշմարիտ է՝ մեծ համարձակութիւն էր իմ կողմից ասել, թէ ժամանակ է որ թիւրքը հեռանայ Բուլղարիացից, իւր բոլոր ունիմ չունիմը հետո առնելով: Տորիները հեգնում էին և ծաղրելով ասում: «Միստր Գլագոլյանը թէև շատ ճարտար ատենաբան է, բայց ոչ գործնական պետական անձն»: Սակայն թիւրքը հաւաքեց փէշերն և անհետացաւ: Միստր Գլագոլյանի արածը մի փառաւոր պատերազմ՝ էր անիրաւութեան զէմ, և այն ժամանակւաց սուլթանն և սուլթանի բարեկամ՝ լորդ Բիկոնսֆիլդը փոթորկահար ծառերի նման տապալւեցան նրա առջեւ: Երբ որ Բերլինի դաշնարքութիւնը կնքեցին, այն ժամանակ ամենաբժամիշ տորին անգում հասկացաւ, — թէ ով էր գործնական պետական անձն և ով՝ դաստիք բարբանջողը: Արգեօք Հայաստանի թիւրքն աւելի՛ լաւ է քան թէ Բուլղարիացի թիւրքը, — այդ կ'իմանանք, երբ որ կոմիսիան անդեկագիր կը տայ և օտար պետութեանց հիւպատոսներն այդ տեղեկագրի մասին իրենց կարծիքը կը յայտնեն: Եթէ կար որ և է հնարաւորութիւն ծածկելու կամ մոռացութեան տալու հայկական խնդիրը, միստր Գլագոլյանը նրան ի չիք դարձեց: Մենք չիսենք մի ուրիշ կենդանի անձն, որի ձայնը նրանի չափ լսելի

լինէր։ Թէև նա մենակեցիկ կեանք է վարում՝ իւր գրքերով շըջապատւած և գիտութեան մէջ խորասուզւած, սակայն հերիք է որ ձայն հանէ, որպէս զի ամբողջ մարդկութիւնն ականջ զնէ նրա խօսքին։ Երբ որ մենք 1876 թ. բուլղարական կոտորածների իսկական պատմութիւնը հրատարակեցինք, միտոք Գլազուռնը իւր միջամտութիւնը նրանով բացատրեց, թէ պատասխանատու է Նրիփ պատերազմի համար։ Նրան յաջողակ և ազգու կերպով աջակից եղաւ Արջիլի դուքսը որ 1854 թւականի մինհստրութեան միւս կենդանի անգամն էր։

Այժմ միտոք Գլազուռնն աւելի մեծ հեղինակութիւն ունի քան թէ այն ժամանակ։ Նա էր որ լիովին ըմբոնեց բուլղարական նախճիների նշանակութիւնը, նա էր որ ելք գտաւ և դարման առաջարկեց։ Նա էր որ հակագիր կուսակցութեան պարագլուխ լինելով վերահսկում էր կառավարութեան քայլերին։ Նա էր որ հերլինի դաշնագրութեան ազատարար չօգուածների հեղինակը հանգիստացաւ, այլ ոչ թէ լորդ Ֆիկոնսֆիլին և կամ լորդ Սոլիսրին։ Արդուլ Ազիզը ապահնած էր տօրիների գահինին։ Սակայն տօրիների գահինիը մի եղեցն էր։ Առւլթանը բանեց նրան և խոցեց։ Եթէ փաշաները կարող են զգուշացնել Բ. Դուան, նրանց պարագն է զգուշացնել։ Եթէ նրանք մերկացնեն և հրապարակ հանեն ճըշմարտութիւնը, եթէ նրանք առն Հայաստանին մի ազատ սահմանադրութիւն և մի քրիստոնեայ կառս վարչապետ, —շատ լաւ։ Իսկ ֆակտերը թագցնելով և կամ ազաւազելով և կամ թէ անհրաժեշտ ու է վորմները յետ ձգելով, նրանք կը նապաստեն միայն ազատել Հայաստանը։ Կ. Պոլսից և աւելի կը դիւրացնեն Տաճկաստանի կատարեալ քոյքացումը։

Միտոք Գլազուռնը բացատրում է իւր զգուշութիւնն ու լուսութիւնն այնպիսի հիմքերով, որոնք ամենառեանդուն մարդուն անգամ ստիպում են սառն դատել բանի հանդամանքը։ Նա չի ամսարկում իւր ալեւոր հասակի վրայ։ Նրա սրտագին ու կորովի ճառի մէջ մի նշան անգամ չէք գտնիլ, որ ցոյց տար թէ խօսողը ծերունի է։ Եթէ նա լոել է, այժմ էլ զգուշութեամբ է արտայացում իւր միտքը, պատճառն այն է, «որ այսպիսի ծանր ճգնաժամն իւրաքանչիւր ազգ ամենից լաւ ու յարմար կերպով կարող է

ներկայացւիլ իւր իսկ կառավարութեամբ, որ ազգի բերանն է, հետևաբար և իրաւունք ունի ազգի հեղինակութեան անունով խօսելու; Երբ որ սրանից 18 տարի առաջ միստր Գլադառընը քաղաքագիտական տակարիզի վրաց ձայն արձակեց Բուլղարիային օդանելու համար, լորդ Էթկոնսֆիլդն այնպիսի կոպիտ ազիտութեամբ և անվայել թեմեկութեամբ էր վերաբերում՝ այդ հարցին, որ ոչինչ չէր կարելի սպասել Վեհափառ թագուհու պաշտօնեաներից: Լորդ Ռոսբէրին և լորդ Կիմբերլէյն բոլորովին ուրիշ լեզու են բանցնում և շատ տարբեր Ընթացք բանում: Լորդ Կիմբերլէյն պընդում է՝ միմիայն լորդ Պալմերատոնին յասուկ հաստատամութեամբ և փութով, թէ անհրաժեշտ է քննութիւն անել, և քննութիւնը կը լինի: Նա ձեսք է բերում Ֆրանսիայի և Առևտառանի աջակցութիւնը, և ոչ ոք չէ կարող մեզաղիր լինել նրան, թէ նա անձնական և կամ անարժան շահերի համար է հայերի գատը ոլաշտապանում: Մենք յաւում ենք որ կոմմիսիան տաճկական է, այլ ոչ թէ միջազդացին: Սակայն երեք համերաշխ ողեառ թիւններ ունին երեք արթուն զիտողներ, որ անշուշտ վկաների պէս կը հսկին կոմմիսիայի ամեն մի քայլին:

Միստր Գլադառընը խօսելով այն գաղափարի մասին, թէ իւրաքանչիւր ազգ անվախ է, պարզ և ազդու լեզով շեշտում է, քթէ կան ամբողջ մարդկութեան համար սրբազն սկզբունքներ, որոնց բանաբարումը կարող է, պէտք եղած ըստէին, նոյն իսկ ամենահամեստ մարդու բերան էլ բանալու: Սակայն չմուանանք, որ հայկական խնդրի մէջ ուրիշ մասնաւոր կէտեր էլ կան, որ անհրաժեշտ է ի նկատ առնել: Հայերն իրենց անջնջելի իրաւունքից զատ, որ ունին իբրև մարդկացին էակներ, իբրև ապրելու իրաւունքի տէրեր, ունին նաև մի առանձին և գործնական իրաւունք հովանաւորութիւն պահանջելու Եւրոպացից, և մանաւանդ Անգլիացից: Կարելի չէ վերացական թէօրիաներ կամ տեսութիւններ համարել Կիպրոսի պայմանագիրն և Էերլինի դաշնադրութիւնը: Դրանցով սուլթանն երաշխաւորել է և Եւրոպան պարաւ որւ ել՝ մի ապահով դրութիւն տալու Տաճկաստանի քրիստոնեայ հպատակներին: Միստր Գլադառընը մեծ կշիռ է տալիս միաբան գործակցութեան: «Անգլիան չի կարող», ասում է նա, «մենակ համօրէն մարդկութեան

ներկայացուցիչ հանդիսանալ։ Մեր ստորագրած և կնքած պարտա-  
տրութիւնը մասամբ հասարակաց է, մասամբ էլ ուրոցն։ Սակայն  
առանց Ֆրանսիայի և Ուստաստանի աջակցութեան զործելլ մի  
սիալ քայլ կը լինէր, դա օգուտ չէր տալ հայերին և միայն Եւրո-  
պայի ներդաշնակութիւնը կը խանգարէր։ Միացեալ-Նահանգները  
կամեցան մի ներկայացուցիչ ունենալ կոմմիսիայի մէջ. բայց սուլ-  
թանը, որ սկզբում մտադիր էր հայ պատգամաւոր հրաւիրել, յե-  
տոյ գմւարութիւններ յառաջ բերեց, և նահանգների նախագահը  
յետ կանգնեց։ Եթէ քննութիւնը հրապարակացին և անաշառ չլինի,  
այն ժամանակ մէկ ուրիշը կը կարգւի, որ արդէն բացառապէս օտար  
պետութիւնների հրահանգներով կ'առաջնորդւի։

Ֆուադ փաշան, որ յատուկ ուղարկւած է սուլթանի կողմից  
ոռուսաց կայսրին շնորհաւորութիւն մտառցանելու, փորձել է,  
ասում են, հաւատացնել Նորին Մեծութեան, թէ հայոց կոտորած-  
ների հեղինակները խիստ պատժւելու են։ Մենք չենք կասկածում,  
որ մէկն ու մէկը կը պատճի, ինչպէս որ Ֆուադ փաշան էլ չ  
կասկածում, թէ աշխարհազոյչ ոմիլիներ են գործւած։ Յ. Դուռը  
միշտ պատրաստ է կախաղան հանել մի քանի թշւառ արարածներ,  
որոնք որքան էլ վնասակար և ատելի լինին, դարձեալ ուրիշ բան  
չեն, բայց եթէ աւելի վատթար և բարձրաւոխճան սրիկաների  
գործիքներ։ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի հիւպատոս-  
ների պարագը կը լինի հսկել որ ճշմարտութիւնը երեան գայ, որ  
աշառութիւն չլինի և սոսկալի դէպքերի բուն հեղինակները  
յարուեին։

«Թօրով», ասաց միստր Գլադստընը, «Թիւրքաց պետութեան  
Եւրոպական մասը կէսից աւելի պակսեց, քան ինչ որ էր իմ  
ծննդեան ժամանակ, և ինչու։ Պարզ—իւր յանցանքների պատճա-  
ռով։» Միստր Գլադստընը կարող է մտաքերել Նաւարինի դէպքը:  
որ ազատեց յոյներին, և որ մի տորի մինիստրի ասելով «մի անա-  
խորժ պատահար էր»։ Եզիսուսուն իրօք անկախ է այժմ, անկախ են  
և Ռումինիան և Բուլղարիան, մինչդեռ Բունիան ու Հերցիղովինը  
Աւստրիայի հովանաւորութեան տակ են։ Թիւրքիայի Եւրոպական և  
աֆրիկական մասերում տեղի գտած այս օգտակար քայլայումը  
կարող է տարածւիլ և ասիսկան նահանգների վրայ։ Մեր Օդէսսակի

թղթակիցը մի քանի խորհրդաւոր քաղւածներ է անում «Մոսկվայի գաղետից», որոնք ցոյց են տալիս թէ Խուսաստանի համբերութիւնը շատ երկար չափակի տեկի: Այդ թերթը որոշակի յառաջ է բերում Բերլինի գաշնազրութեան 61 յօդւածը: Արդէն տասնութեց տարիներից աւելի է, որ այդ յօդւածն պարունակող զաշնազիրը տարրագրւած է, և գարձեալ ո: մի բան չէ արւած դրա իրագործութեան համար. Ընդհակառակն՝ հայերի կրած հալածանքը վայրենի ու խուժդուժ քիւրզերի ձեռքից սասակացել է, քաջալերութիւն գտնելով պաշտօնապէս թութքերի կողմից, որոնք պարտաւոր էին այդ չարիքների առաջն առնել: Զարմանալի չէ ուրեմն, որ «Մոսկվայի գաղետը» խորհուրդ է տալիս սպահանջել Թիւթքիայից, որ նա անմիջապէս կատարէ գաշնազրութեան այդ պարզ յօդւածը: Միստր Գլազուրն աւելի չափաւորէ: Նա առաջարիւմ է համբերել և առժամանակ յետաձգել գատավճիռը: Նրա ճառը նշանաւոր է իւր ինքնուրոցն հանդարտութեամբ ու խոհեմութեամբ. սակայն ճառի վերջաբանում մի քանի շատ խորհրդաւոր ակնարկներ կան: Միստր Գլազուրնը ուզում է սպասել, մինչեւ որ ճշմարտութիւնը լիովին յաջտնեի: Սակայն նա երկար չի սպասել և չի թողնիլ հայերին:

### ՄԱՆՐԱԾԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԼՈՆԴՈՆՈՒՄ ՆՈՐ ՏՈՄԱՐՈՎ. ԴԵԿ. 17-Ի ԿԱՅԱՑԱԾ ԱՆԳԼ.Օ.ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵԾ ՄԻՏԻՆԳԻ

Ամենից առաջ մենք արձանագրենք սրահի մէջ աշքի ընկնող մի քանի անձնաւորութիւնների անունները.—Ֆ. Ս. Ստեւենսոն Պարլամենտի անդամ, Հալտսիրաց ընկերութեան տանհասպետ, Ալբերտ Պատուչը, անդամ պարլամենտի և ութի չափ պաշտօնակիցներ: Կանանց կողմից ամենապատշաճ ներկայացուցիչներ կարող էին համարել ամեկին Պատենտոն, ամեկին նոովիկովս և ամեկին Ալբերտ Պատուչը: Դր Կլիֆորդ, կանոն Մակ-Կոլ և այլք կարող էին ներկայանալ իրենք քրիստոնեան Անգլիակի ներկայացուցիչներ: Ա. Հայր Պարոնեանը իր պաշտօնական հանգերձներով Անգլիան հարցում գործադրութիւնը ներկայացնելուց առաջ էլ չեմ իշում բժիշկ Քալանթարեանցը, պրոֆ. Մ. Զերազը, պ. Յակոբեանը և պրոֆ. Թումանեանը: Պարիզի Հայկական ընկերութիւնն էլ իր ներկայացուցիչն ունէր լանձին պ. Խակէնդէրի:

Ատենաբանները հրապարակ գտլուց առաջ Mr. E. Atkin կարդաց ընկերութեան սպղւած նամակներից մի քանիսները, որոց ամեն մէկը ջերմ համակրութիւնն էր ցոց տալի դէպի ժողովի աղջիւ նպատակը և ցաւ չալտնում որ հանգամանքներն արդելում են ժողովին ներկայանալու հաճուքը վաճելել: Համակրական նամակադիրների ցանկի մէջ էին պ. Փ. Ստէնսֆէլդ, կարդինալ Վոնան, զուքս օֆ Արջալ, զուքս օֆ Վեստմինստէր, Քարքէտ—Ժողովական միութեան ատենապետը, Ժողով Պարկէր, տանից աւելի պարզամնուականներ և Գլադտոն, որի նամակի ընթերցումը մասնաւորապէս ամենաչերմ ծափահարութիւնների տեղի տւեց:

Ահա Գլադտոտնի նամակը.

«Ո ի րելի Ա տի վէ ն ս ո ն. Հալաստանին վերաբերեալ սարսափելի տեղեկութիւնները զրաւեցին ամբողջ աշխարհի ուշադրութիւնը և ես ի սրտէ ցանկանում եմ ամեն տեսակ աշխատութիւն ձեզ և ձեր ցանկութեանը՝ պարզելու ճշմարտութիւնը: Եթէ ադ կառուածների լուրիը կը ճշգրւն, այն ժամանակ նրանք կը դրուեն քաղաքական աշխարհին հարց զարթեցնել: Թէ մինչեւ երբ պէտք է շարունակի մի ալգախիս դրութիւն եւախօրօք չեմ կարող նախադուչակել քննութեան հետևանքը, բայց ես համոզւած եմ, որ կառավարութիւնը չի լավագի հնարաւորութեան չափ մանրամասն կերպով քննուել գործը, զէսի որը, մննք, Կիսպրոսի դաշնագրի հիման վրա, պէտք է վերաբերենք խորին և լուրջ ուշադրութեամբ: Պարտաւորութիւնս եմ համարում լուս չալտնել, որ օտանինան կառավարութիւնը, իր սեփական պատիւը պահպաննելու տեսակիտից, անկեղծ օդութիւն ցոց կը տաւ զործի մանրամասն և լուրջ քննութեանց:»

Ազդ նամակները կարգալուց լիտու ժողովը միաձայն ընդունեց մի շարք վճիռներ, որոնցով կառավարութիւնը հրաւիրում է նախաձեւնութիւն լանձն առնել պնդելու, որպէս զի անկազարդ բէֆորմներ մտցնեն Հալաստանում: Բայց դրանից, ժողովը լաւանեց, որ պետութիւններից եռանդուն միջամտութիւն է պահանջում հակական գործերում, և ցաւակցութիւն է լավանուում, որ հաջոց զործերին վերաբերեալ հիւապառական հաշիւնները զարգարել են և չեն ներկայացւում պարզամնախին: 1889 թւից սկսած:

Անուհետեւ տասներկուսից աւելի տասնախօսներ լաջորդաբար սկսեցին խօսել Հակական խնդրի վերաբերութեամբ՝ բացատրելով նրա քաղաքական, կրօնական և պարզ ընկերական կողմերը:

Ժողովի ատենապետը ծափահարութիւնների մէջ հրապարակ եկաւ և տիսրութիւնով լալտնեց թէ, ոչ-հակական և կիսա-պաշտօնական ազգիւններից ընկերութեան ուղղած նասակները հաստատում են Աստունի մէջ կատարւած ահարկու դէպքերը: Աւ պնդում է թէ բոլղարական կոտորած-

Խերից լետով մինչև ալսօր ալսքան աղեխարշ դէպք չէր տեղեկագրւած արևելքից: Նա պնդում է թէ ալս չարիքներն ընդհանրակը ընդհանուր երեսթներ են որ կատարւում են Հույասոսանի ամեն մասում և ամենատապք լեզով հրաւիրում է Անդլիալին կատարել իր պարաւականութիւնը, որին լանձնառու եղաւ Ամեն-Աթէֆանուի գայնազրի 61-րդ լոգւածի փոխնորդ: Նա համարում է Դերկայն ամենից լարմար ժամանակը որ եւրոպական ազգերը վերջ դնէին Հայաստանում իրերի ներկաւ կացութեանը և գործազրէին Բերլինի զանագրութեան 61-րդ լոգւածը: Վաճաւանդուրափ կը լինէր տեսնել Անդլիալի և Անուսիալի մերձեցման իբրև երախարի պատուզ որ այդ երկու տերութիւնները նոլասաէին արդէն լիտածւած բարենորոգումները մացնել Հայաստան:

Rev. Canon Mac-Coll բան մահմեդական օրինագրքերից վկանութիւններ բերելով ուզում էր հասաւատել թէ մահմեդականութիւնը նացում է քրիստոնեաւ հպատակների վրաւ իբրև տարուկների, քրիստոնեան պարական է՝ ապլ ելու, թագւելու, ամուսնանալու, տուրքել վճարել, իսկ մահմեդականը ոչ, ասածինը պարաւաւոր է երեք օր մահմեդականին հրւասիրել, հոդալով նրա բոլոր պէտքերը, նուն իսկ անբարուական պահանջները, իսկ վերջինը ոչ: Եւ այս ամենը Պուրանի և ալլ կրօնական գրքերի միջոցով հասոսատելուց վերջը՝ կոչում արաւ հաւասարութիւն լարգող ժողովրդին: ուշագրութիւն գարձնել այն ժողովրդի վրայ, որ իր թըշնամիի իշխանութեան տակն է ապաւում: Անուշնեան առաջարկեց Տեսնեալը.

«Թէ այս ժողովը թէն ցանկանում է որ միջազգացին նւիրականութիւն լատաջ տանէ Աստուն գաւուի և ալլուր կատարւած նման դէպքերի կատարեալ քննութիւնը, և այն ինչ անգամ էլ որ պատշաճ նախազգուցութիւններ ձեսք առնեն բոլոր վկանների ներկաւ և ապագաէ ապահովութիւնը վտանգից ազատ պահել, անուստենիւ այն գաղտնաբան ունի, թէ լոկ մի քանի տանձերի պատժւիլը, որոնք շատ թէ քիչ պատասխանատու են, ընդհանուր գրութիւնը անփոփոխ կը թողնէ: Եւ թէ ինչ որ ճշմարտապէս պահանջում է, տէրութիւնների համեստչին և աղդու գործունեութիւնն է, որ զիստուրապէս կը վերաբերի մարդկութեան, արդարութեան և խաղաղութեան շահներին, կէտ նպատակ ունենալով նաև Հայաստանի գրութեան մեջ մտցնել լարատի զարդացում, և առաջ քրիստոնեաւ բնակիչներին հաւատքի, կեանքի, պատիւի և տառցւածքի ապահովութիւնը».

Rev. Canon Gore երկրաբեց այս առաջարկութիւնը՝ Պէտք է առել թէ լարգելի առենախօսը բարձր հիացում էր լայտնում հաչ մոքի կարողութիւնների մասին: Նրա համար հալը ընդունակ է ամեն մի գործնական շրջանի, ընտար վաճառականներ են, ժրաջան երկրագործներ, չալող գիտական մարդիկ: Եւ այս ամենից լիտու հարցնում է ժողովին:

միթէ ամօթ չէ Աւրոպակին որ ազ կարողաթիւններ ունեցագ մի ժայռ-փարդ տաճիկի ճնշումներին տուայլակ լինի: Աւ վերջապէս հրաւիրելով Անգլիակին հարեան ազգերի զարգացման նախանձախնդիր լինել, հարկա-որ է համարում հասարակութեան համակրութիւնը իբրև ամենից մեծ ոչը, որ կարող է լառաջ մղել քաղաքագէտներին ուելի զոհացուցիչ գործունէութեան:

Պէտք է ասել թէ առաջարկութիւնը եղած ժամանակ մի տաճիկ և երկու տաճկասէր անգլիացիներ ուզու մ էին ժողովի մէջ շփոթութիւն լառաջ բերել, բրա համար էլ զուրսի խաւարը սպասում էր, ուր կարող էին առամեները ազատ կերպով կրծուի: Անգլիական միտքը անորան զըր-գըռաւած էր այս կէտին որ գուցե այդ տաճիկ մնացողները աւելի խեղ բազդի արժանանակին, եթէ շուալ զուրս չհանւէին: Բայց վերջապէս անգլիացինները միայն արտօնութիւն տվին որ իր առաջարկութիւններն անէ ամբիոնիցը, երբ կարզը իրան կը դաւ Աթէ ևս լինէի խեղ մարդի տեղը, հաւատացէք որ ամբիոն չի ենի մի անդամ էլ ծագրի առարկա լինելու: Կա իր ամբողջ ուժովը կանչում էր մի բան հանկացնել հասա-րակութեան, բայց վրդուված հասարակութիւնը նրան պատասխանում է սուլելով, հեզնելով, և ամեն բան: Մարզը վերջապէս համոզւեց թէ բան ցաւորը պաշտպանել զուր ձեռնարկութիւն և և վերջ տվեց խօսքերին:

Rev. R. F. Horton զարմանաւմ է - որ Անգլիակի մէջ կը լինի մի մարդ, որ տարակուայի ձախ բարձրացնել այն ոճիրների գէմ, որ հրասա-րակուում են ամեն օս Ասում է՝ մենք մեր զիսարկները վեր գցելով ուրախ կը մեկնէինք այս ժողովիցը, եթէ հասաւատին թէ ուռա է 10,000 հազերի կոտորածը, թէ ուռա է այն լուրը, որպէս թէ հաւ կիները բռնա-րարւած են, թէ Տաճիկ կառավարութիւնը տվել է հայերին անձի և կազքի ապահովութիւն: Բայց բանի որ այս ազգէս չի և ուրիմն Անգլիակի ժո-ղովուրզը կը զատապարտի իրերի այս կարգի վիճակը:

Պ. Ատենարանին լաջորգեց պ. Խոկենդէրը. իբրև Պարիզի Հայ ազգա-սիրաց ընկերութեան ներկայացուցիչ չնորհակալութիւն լայտնելով աեղիս հակառէրներին իրանց վառ զործունէութեան համար և անցնելով թ. Պատի կազմած մասնախմբին, ամեննեին կարեռութիւն չի տալիս նրանց կաշ-մակերպութեան, որովհետեւ նրա համար դա նշանակում է զատաւել բռն դաւաճանների ձեռքով: Զարանելով իրան ներկայացրած ընկերութեան փափագը զէպի Բերլինի զաշնագրի գործադրութիւնը, ցաւով էր նկա-տում թէ այս կորուստները չէին պատահ Հային, եթէ զաշնակից պի-տութիւնները զանց արած չինէին իրանց պարտականութիւնը: Պ. Խոկէն-դէրը խօսում էր ֆրանսէրէն:

Mr. Albert Spicer M. P. մի երկրորդ առաջարկութիւն արաւ, որպէս պահանջում էր հրասարակել այն բոլոր դեսպանական տեղեկագրութիւն-

ները որ 1889 թվոց մինչեւ ապօր չեն հրատարակւել, մանաւանդ հրատարակել այն տեղեկագրութիւնները, որ վերաբերում են եպիսկոպոսների, քահանաների, երիցների, ուսուցիչների, որ առանց պատճառի բանտարկութեան և կամ աքսորի են գասապարուած,

Rev. Newman Hall երկրորդեց առաջարկը և ժողովի նպատակը պարզեց ակնարկելով թէ նա յարանւանական խնդիր չէ, ալ մի ընդհանուր խնդիր, որին պէսք է համակրի ամեն առուածավախ մարդ։ Ասում են թէ, աւելացրեց ատենախոսը, հարկուոր չ որիշ պետութիւնների գործին խառնւել, որովհետի ազդպիսի հանդամանքներում հարկ կը լինի վահանով պաշտպանել մեր առաջարկները. լաւ, ես առաներազմի համակր չեմ, բայց պարագաներ կան, որոց մէջ պատերազմը արդարանում է։ Անցեալ ժամանակներում շատ ենք աշխատել տաճիկ կառավարութեան անկախութիւնը և ամբողջութիւնը ապահովել չեմ կարծում թէ ալ ես աղքան իմար կր լինինք։ Մինչև որ չլսենք թէ տաճիկ կառավարութեան ամբողջ սիստեմը փոխւած է քրիստոնեաների նկատմամբ, մի զին. ևս, մի հրացան, նույն խոկ մի հատ շիլինգ նպաստ չենք անիկ պաշտպանել մի անհաւասա, անգութ, բարբարոս բւնակալութիւն, որպիսին է թուրքը (սրահը թնդում է ծափահարութիւններով)։

Ի միջի ազու պրոֆ. Թումանանը իր անձնական փորձառութիւնները պատմեց տաճկական բանաերի ներքին կիանքից, իսկ պրոֆ. Զերաղը պատմեց Սասունցի անվախ կարիքների և մանաւանդ կանանց քաղութեամբ նորհատակւելը։

Փողովը ամբողջ երեք ժամ տեսից, անուամենախիւ ժողովուրդը տակաւին լսել էր ուղում։

## ԱՄԵՐԻԿԱՆ ԵՒ ՔՆՆԻՉ ՑԱՆՁՆԺՈՂՈՎԻ ԽՆԴԻՐԸ

(Մի արտասահմանեան թերթից)

Հեռագիրներն արդէն լայտնիցին որ վաշինգտոնի կառավարութիւնը հրաման է զրկել իր հիւսպատոսին Սըւազում մասնակցելու Սասունի գործերի քննիչ լանձնաժողովին. իսկ եթէ Բ. Դուռը չարտօնէ նրա մասնակցութիւնը, այն ժամանակ ամերիկան հիւսպատոսն ինքն անձամբ պիտի գնաւ և քննութիւն կատարէ, և եթէ որ և է զժբազութիւն պատահի նրան զազանաբարու թուրքերի և քուրդերի կողմից՝ պատասխանատուն թուրք կառավարութիւնը պիտի մնավ Սրան աւելացնենք և այն որ ալսօր մասնաւոր նամակով մենք իմացանք վաշինգտունից, թէ Միացեալ նահանգների կոնգրեսում ընդունել է մի առաջարկ, որով կառավարութիւնը պիտի գործունեալ կերպով մասնակցէ Հայկական գործերին, այն

ծրագրով, որ Հայաստանին ինքնավարութիւն տրեի Բերլինի դաշնապաղ պետութիւնների միացեալ հսկողութեան տակ: Այս նպատակի համար գործում է Վաշինգտոնում մի պատգամաւորութիւն, որ զրկւած է The United Friends of Armenia (Հայաստանի միացեալ բարեկամներ) ընկերութեան կողմից, և կազմւած էՄիտոր Սամուէլ Բարբոռախց և Դր. Հենրի Քլակուէլից: Երանց միացած է նաև Պր. Գիւլէզեան:

Պարզ է որ Միացեալ-Նահանդների կառավարութիւնն որոշել է աղջու մասնակցութիւնը ունենալ Հայաստանի գործերի մէջ: Այս բանն երրորդական զիալոմատիան դժւար կարող է ըմբռնել: Ի՞նչ շահ ունի Ամերիկան, որ ծովի ան երեսից գլուխ է ցաւեցնում հեռաւոր Ասիաի գործերի համար... հարցնում են Փրանսիական և անգլիական թերթերը, և իրանք էլ պատասխանում, թէ անջուշ Մ. Ն. կառավարութիւնն ուզում է օգտել հաճղամաճքներից Արեելքում ազգեցութիւն ձեռք բերելու համար Այս բանն ի հարկէ նպաստաւոր չէ ոչ Ֆրանսիավին, ոչ էլ Անգլիավին:

Պարփղի Տեմբը լ խորհրդածելով այս մասին՝ ասում է թէ Միտոր Կլիւելէնդ փոփոխամիտ է իւր արտաքին քաղաքականութեան մէջ. սրանից ոչ շատ առաջ չալանեց որ ինքը չպիտի խառնւի և լորպացի ներքին գործերին, իսկ այժմ պահանջում է որ չառուկ քննիչ զրկի իւր կառավարութեան կողմից զեպի Խասուն:

Լոնդոնի Տիմես ը իւր վերջին համարներից մէկում «խորհրդաւոր է» համարում Միացեալ-Նահանդների վարմունքն և սպասում է որ Վաշինգտոնից պաշտօնական բացարութիւն տրվի այս մասին: Յամենացն դէպս այս միջամառութեան վրայ լաւ աշքով չի նայում:

Գերմանական թերթերն այն միուքնեն լաւանում, թէ Միացեալ-Նահանդների մասնակցելը Ուուսիացին և Ֆրանսիային ուղղած է Անգլիայի զէմ, նպատակ ունենալով նրա ազգեցութիւնը կատրել արեմուեան Ասիայուն:

Սակայն այս ենթագրութիւններից և ոչ մին ուղիղ է: Եւ սխան առաջանում է նրանից որ եւրոպական զիալոմատիայի բառարանում «մարդկակին անշահասէր զուտ համակրութիւն» առած բանը չկար: Ամեն համակրական արտակարութիւն, նրա համոզմունքով, իրեն ասասող պիտի ունենայ անձնական պետական շահերը: Զէ որ քաղաքական աշխարհում անշահասէր համակրութիւնը համարում է գեութիւն: Ուուսիան միշամբառում է հալոց գործերին: Ամենքը զիսեն որ նա իւր շահն է տեսնում ացգ բանի մէջ: Անգլիան իւր շահն ունէր որ հալոց հարցը քնացրած էր պահում, և այժմ էլ իւր շահներն ունի արծարծելու, Ֆրանսիան շահն ունի Արեելքում և կապւած է Ուուսիալի հետ: Գերմանիան և Աւստրիան ձեռնպահ են մեռմ, վախենալով մէկ կամ միւս կողմը բռնելուց: Երէկ մի գերմանացի, որ կապեր ունի բարձր շրջանների հետ և աշխատով հետևում է Արեելքի գործերին, առում էր որ հայկական զործերում Գերմանիայի

բռնած զիրքը յառաջ է զալիս նրա թուլաթիւնից և նուսիակի երկիւղից: Դիցուք թէ նա միացաւ քննիչ լանձնաժողովին. խնդիրը երբ գործի գաւ նա ուժ կողմը պիտի պահէ: Ուստիակի թէ Անգլիակի, որովհետեւ երկուան էլ Հայաստանի վրաէ աչք ունեն: Նա կ'ուզէր բնականաբար Անգլիակի կողմը բոնել հայոց խնդրում, բայց վախճանում է դրանով իւր բարեկամութիւնը քանդել Ռուսիակի հետ: Այս խօսքերը բաւական բացատրում են Գերմանիակի անհամակիր զիրքը թշւառ Հայաստանի նկատմամբ:

Միացեալ Նահանդների միջամտութիւնը բղիսում է ոչ թէ զիւանագլուական շահերի տեսակէտից, այլ բուն մարդասիրական, քրիստոնէական զգացմունքից: Այս ինչպէս կարող է հասկանալ Եւրոպան: Բանն եթէ Միասր կլիւըլէնդին իրան մնար, նա ամեններն չէր խառնւիլ գործի մէջ, կամ եթէ խառնւէր, ոչ չօգուատ հայերի կը լինէր աչն: Ապացոյց սրան այն տեմրդի օրէնքը, որ երկու տարի առաջ Միասր կլիւըլէնդի ձեռքով զօրութիւն ստացաւ, և որով ամերիկեան քաղաքացիութիւն ստացած հայերը Թուրքիա դառնաւու տնկարող են լինում:

Քայց Ամերիկակայում կաէ հասարակաց կարծիք, որ գործում է մարդկափն բարձր շարժութիւններով: Այս հասարամաց խիզն էր, որ շարժեց Բոստոնից սկսած մինչև Սան Ֆրանցիսկօ, և շարժել աւեց Միացեալ Նահանդների Առնգրիսը: Այս շարժումը գերազդ Հայաստանի օգտին կատարում է մի կազմակերպւած մարմինի ձեռքով, որ կոչւում է United Friends of Armenia: Այս ընկերութեան կենդրոնը Բոստոնն է, ճիւղերն՝ ուրիշ մեծ քաղաքներում: Գործող անձերի թւում կան ականաւոր անձեր, որպիսիք են Զուլիա Ռուրդ Հառու, հռչակաւոր ամերիկոնին, Միասր Սամուէլ Բարոուս, խմբագիր, Միասր Բլաքուէլ խմբագիր, Միասր Բարոուս, խմբագիր, միստ Բլաքուէլ, բանաստեղծ, հրապարակախոս և խմբագիր (թարգմանիչ հայ քերթածների), նաև բազմաթիւ պատուօններ, պրոֆեսորներ և առեւրականներ: Այս մարդիկը, որոնց մարդասիրական մեծ ողու վրա մինչք հիանում ենք, չեն ինստրում ոչ ժամանակի, ոչ վող և ոչ զրիչ ու խօսք՝ շահելու համար հասարակաց համակրութիւնը Հայաստանի վրա: Faneil Hall-ի միտինգը, որ խօսել է մասաշուլեցի Նահանգապետն և որ վճռական աղջկեցութիւն արաւ լուզելու համար թէ սենատը և թէ հանրապին կարծիքն Ամերիկայում, որ կազմակերպւեց այս ընկերութեան ձեռքով: Վերև վշշած պատգամաւորութիւնը կազմւած է U. F. Armenia-ի Նախագահներից: Իրեն վերջին տեղեկութիւն, կարող ենք հազորդել մեր ընթերցողներին, որ որոշած է Ամերիկեան աղքի կողմից մի պատգամաւորութիւն զրկել Անգլիակի և Եւրոպակի կառավարութիւններին: Պատգամաւորութեան գլուխ կ'անցնի Զուլիա Ռուրդ Հառու, որին կ'ուղեկցէն Դր. Բլաքուէլ և մի հայ, որ տակաւին չէ անւանւած: Պատգամաւորութիւնն կ'ալցել նաև Պիտերըուրդ:

Մենք երախտագիտ ենք այն բոլոր աղջիւ ազատառէր ամերիկացիներին, որոնք համակրութեան և օգնութեան ձեռք են կարկառում մեզ մեր նեղութեան միջոցին։ Մնում է ցանկալ որ Ամերիկակի մեր պահպուխտ եղբայրներն աշակցեն հայասէր օտարներին բարուական ձեռնատառութեամբ, բայց ամենից առելի իրանց կ ե ա ն ք ո վ։

Յ. Գ. Նամակս վերջացրած էի, երբ Վաշինգտոնից տեղեկութիւն ստացաէ թէ Ս. F. A. Պատգամաւորութիւնը տեսակցել է նախագահ Ալվարէնդի հետ, համոզելու համար, որ Ամերիկակից մի բասուկ քննիչ դրկի Սասուն մի հաջ թարքմանի հետ միասին։ Ծուսանք թէ այս ծրագիրը բաջողութիւն կը գտնէ։

# ՊԱՏՐԻԱՐքԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

S. ՄԱՍԹԵՈՍ Ա. ԻԶՄԻՐԼԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ

S. ՄԱՍԹԵՈՍ ԵՊԻՍԿ. ԻԶՄԻՐԼԵԱՆ, Քարոզիչ Խւսկիւտարի Ա. Կա-  
րապետ Եկեղ. և նախորդ Առաջն. Եղիսաբոսի Հայոց, ղեկա. 7-ին 1894թ.  
Թուրքիու Հայոց Պատրիարք ընտրւեցաւ՝ 76 քուէտարկուներու 67 քուէով:

Ժ Ո Ղ Ո Վ Ը

Նախնական գործողութիւններ

Ի նիստ հրաւիրւած ժողովը գումարւեցաւ ժամը 6<sup>1</sup>/<sub>2</sub>ին Մազր-եկեղ-  
եկացի կանանց լատուկ տաճարին մէջ, նախադահութեամբ Պատրիարքա-  
կան Տեղապահ Տ. Հմայեակ եպիսկոպոսի, Ներկաւ էին 75 ժողովական,  
որոնց ցանկը կը ներկայացնենք ի սոորիք.

Եկեղեցական անդամներէն՝

S. Սիմեոն Աէֆէ թեան և Տ. Գրիգորիս Աէէտաթեան եպիսկոպոսները,  
Տ. Յովհաննէս Արշարունի, Տ. Վահան Յակոբեան, Տ. Յակոբ Փափաղեան,  
Տ. Գարեգին Թաթարեան վարդապետները. Տ. Յովհաննէս Մկրեան, Տ.  
Մահակ Տ. Սարգսեան, Տ. Արիստակէս Մամբրէեան, Տ. Գաբրիէլ Խան-  
նեան, Տ. Արիստակէս Ճիզմէնեան և Տ. Յովհաննէս Շահպաղեան քահա-  
նաները.

Պոլսէն ընտրւածներէն՝

Տեարք

Անտոն Հածեան, Բարսեղ Աւետիսեան, Բարսեղ Հալածեան, Բարսեղ  
Խոամպօլուեան, Գաբրիէլ Գաբրիէլեան, Գաբրիէլ Նորատունկեան, Դէ-  
սրդ Թօփալեան, Գրիգոր Ալեանաքեան, Եղիս Տէմիրճիպաշեան, Երւանդ  
Ռոկան, Ելիսա Ջայեան, Կարապետ Բապուճճեան, Կարապետ Էդնացեան,  
Ղազար Հովուեան, Մարուքէ Ֆրէնկեան, Մագսուտ Խիւտաւերտեան,  
Մազսուտ Հարէնց, Միհրան Յովակիմեան, Միհրան Սէթեան, Միհրան  
Նիրինեան, Մկրտիչ Ասասեան, Մկրտիչ Մանուկեան, Մկրտիչ Մէզպուրեան,  
Յակոբ Պօջնաքեան, Յակոբ Ոսկան, Յակոբ Պէնկեան, Յակոբ Ֆրէնկեան,

Յարութիւն, Նորաստունկեան, Յարութիւն Արաֆեան, Յարութիւն Մոստիչեան, Յարութիւն Ն. Մոստիչեան, Յարութիւն Մէրեէմյուլի, Յովակիլմ Յովակիլմեան, Յովիաննէս Կրծիկեան, Յովիաննէս Խորոսեան, Յովիաննէս Աղնաւորեան, Նասիպ Գարակաշեան, Նշան Փափաղեան, Նշան Ճիշանեան, Պաղտասար Նէվլուտզ, Պատրիկ Կիւլպինկեան, Պարգև Փափաղեան, Պօլոս Էնքսէրճեան, Ոէթէսս Պէրպէրեան, Ռուբէն Պուլկուրեան, Սիմոն Սեղբասեան, (տ.քթ.), Տիգրան Բարտղամեան, Տիգրան Յուսուցեան, Տիրան Նաղարեան, Դաւառներէն ընտրւածներէն՝

Աղէքսանդր Արքահամեան, Կարապետ Խթիւձեան, Կարապետ Մուրատեան, Համբարձում Ալաճաճեան, Մարկոս Աղաբեկեանց, Մելքոն Կիւրծեան, Միհրան Զօպանեան, Մկրտիչ Յ. Մելիքեան, Մկրտիչ Խաչիկեան, Յակոբ Խթիւձեան, Յեսու Շամտանճեան, Նշան Գարագաշեան, Յովիաննէս Կիւմշեան, Յովիաննէս Պուլամեան, Պօլոս Աւգէր:

Նախազահ Մրբազանին առաջարկութեամբ, ըստ սովորութեան, առժամկալ սոտենազետ կարդւեցաւ Ներկաչ ժողովականներէն երիցազո՞ց Յովիաննէս էֆէնզի Կիւմշեան և կրտուերազո՞ց անդամներէն Յարութիւն էֆէնտի Մոստիչեան (տնօրէն Կեղրոնական վարժարանի):

Ենաով Նախազահ Մրբազանը ժողովին բացման առժիւ մէկ քանի խօսք զրուցելով, հասաատ տաս չափանց թէ ժողովականները խզճի կատարեալ գիտակցութեամբ պիտի տան իրենց քւէն պատրիարքին և վարչական ժողովներուն ընտրութեան համար, չափարար ելով միանգամանց թէ ինք հրաժարած ըլլալով որ եէ թեկնածութենէ պատրիարքական աթոռին համար, կը խնդրէ քէ չտալ իր անւան: Միանգամանց իր խորին շնորհակալութիւնը չափանց վեհ: սուլթանին, որ վաերացուցած էր իր տեղապահական ընտրութիւնը:

Այս բանախօսութիւնին լետով, ժողովը վաւերացուց հեանեալ ընտրութիւնները սրոնք կատարւած էին իր վերջին նիստէն ի վեր և որոնք ներկայացւեցան վարչութեան տեղեկազրով:

Այդ նորընտիր ժողովականներն են.

Զմշկածաղէն՝

Կրպտ. էֆ. Մուրատեան

Քէօթահնեալէն՝

Զէնոր » Տէրուենց

Մուշէն՝

Մկրտիչ » Խաչիկեան

Արաբկիրէն՝

Վառմշապուհ էֆ. Մանուկեան

Լատիրնէն՝

Յեսու էֆ. Շամտանճեան

Պէշիկթաշէն՝

Ալիքսան էֆ. Խօրասահնեան (Վահանէնէս)

Պէշիկթաշէն՝

Յարութիւն էֆ. Մէրեէմկուլի

Պօլաճըդիւզէն՝

Յակոբ էֆ. Ֆրէնկեան

Պէօլիւքտէրէ. Աէնիդիւդ-

Կարապետ էֆ. Էգնալեան

Վթէնիա միաց. Բաղերէն՝

Գառղվիւզէն՝

Գուգկունճուգ. Խճատիէ-

Գանտիլի միաց. թաղերէն՝ Աահակ էֆ. Գարաեան

Միհրան էֆ. Շիրինեան

Գուգկունճուգ. Խճատիէ-

Գանտիլի միաց. թաղերէն՝ Աահակ էֆ. Գարաեան

Ժօղովը, հաւատալով վարչութեան խօսքին որ իր տեղեկադրին մէջ կ'ըսէր թէ ալս ընտրութեանց մէջ ինք ոնէ ապօրինի բան գտած չէ, հարկ չդատեց կարգալ ընտրութեան տեղեկագիրները և ամենքը մէկէն վաւերացուց. Արդէն նորընտիրները բազմած էին իրենց տեղը, բացի Մէրիէմգուլի Յարութիւն էֆէնտիէն որ, օրէնքները դիացողի պշրողու. թեամբ մը դասէն դուրս կեցած է և իր ընտրութեան վաւերացումէն ետքն է որ եկաւ ժողովականի աթոռը բազմելու. Խնչ օրինապահ մարդ.

## ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ՄԱՅՐ-ԴԻՒԱՆԻՆ

Գարրիէլ էֆ. Նորատունկեան՝ Ատենապետ

Կարգը եկաւ ձեռնարկելու ժողովին զիւանին ընտրութեան. Քըւէ-համարին քննիչ կարգւեցան՝ վիճակի՝ տեարք Մէրտիչ Մէլիքեան, Յովհաննէս Թորոսեան, Միհրան Շիրինեան և Կարապետ Բապուճեան.

Նախ կատարւեցաւ առաջին ատենապետի ընտրութիւնը. քուէարկուներու թիւն էր 76 (75 ժողովական և տեղապահ սրբազնը), Քըւէները բաժանւեցան հետեւալ կերպով.

## Քւէ

Գարրիէլ էֆ. Նորատունկեան	55
Ռէթէսս » Պէրպէրիեան	10
Բարսեղ » Ստամոլոլուեան	3
Ստեփան վաշա Արտանեան	3
Սահակ էֆ. Ղաղարսեան	3
Էլիաս » Զայեան	1
Յովհաննէս » Կիւմշեան	1

Հետեւաբար քւէներու բացարձակ առաւելութեամբ ժողովին Ա. Ատենապետ հոչակւեցաւ. Գարրիէլ էֆէնտի Նորատունկեան:

Երկրորդ ատենապետի ընտրութեան արդիւնքը եղաւ.

## Քւէ

Ռէթէսս էֆէնդի Պէրպէրիեան	49
Մէրտիչ » Ասամեան	11
Ստեփան վաշա Արտանեան	6
Էլիաս էֆէնտի Զայեան	3
Տիգրան » Եսուտիքեան	3
Յարութիւն » Մէրիէմգուլի	2

Յովինանէս » Թորոսեան, . . . . 2  
Եղիազար » Մէլիքեան, . . . . 1

Հետեաբար Բ. Ատենապետ հոչակւեցաւ Ռէթէսո էֆ. Պէրսի, թէան,  
Ա. Ատենապիր ընտրւեցաւ Յարութիւն էֆ. Մոտիչեան (տհորէն  
Դէդր, վարժարանի) 74 քուէով և երկրորդ առենապպիր՝ Յովակիմ Լիքնար  
Յովակիմեան 19 քուէով:

Նորընտիր զիւանը եկու բազմնեցաւ իր տեղը:

Ատենապետ Դարրիէլ էֆէնդի Նորասաունկեան խօսք առնելով, բառ  
որ չորհակալութեամբ կ'ընդունի իրեն լանձնւած պաշտօնը, հակառակ  
իր վատառողջորթեան որ իրեն պիտի արգիլէ ներկաւ գոմնւիլ ժողովին  
ամեն չաջորդ նիստերուն: «Ժաղովը զի՞նքը ընտրելով՝ անշուշտ լարդանք  
մը տպից ընծակէլ իր օրինասիրութեանը և օրինապահութեանը, ու ինքն  
ալ փոխադարձաբար ժողովին կը սպառէ եւն ցազազի տութիւնն  
օրինասութիւն և կանոնաւորութիւնն, ու միանգամայն կարծ ու ամփոփ  
ատենաբանութիւններ՝ ժամավաճառ չընելու համար ժողովը: Ան ատեն  
միան զիւանը պիտի կրնաէ ժողովին հետ ըլլալ: Դիւանը ժողովին կը  
սպառէ ձեռնտութիւնն և օժանդակութիւնն:

Դիւանին կողմէ կարդացւեցաւ լետոյ վարչութեան տեղեկադիրը՝  
պատրիարքական ընտրութեան համար, հանդերձ համագումար ժողովին  
ու քաղաքական ժողովին ընտրելիներու ցանկերով, զորս արգէն հրատա-  
րակած ենք:

Կարդացւեցաւ Պատրիարքական Տեղապահին հետեւալ նամակի,  
ուղղած ժողովին ատենապետին:

«Ա.շըկեան Տ. Խորէն Ա. արքեպիսկոպոս իր անձնական անբաւա-  
կանութեան պատճառաւ հրաժարելով Կոստանդնուպոլսու Պատրիարքու-  
թենէն, կախսերական կառավարութեան կողմէ հրաժարականն ընդունւած  
և հրաման եղած էր ընտրելու Պատրիարքական Տեղապահն: Այս բարձրա-  
դուն հրամանին համաձայն Ազգակին Կենդրոնական Վարչութեան խառն  
ժողովը կատարելով նոյն ընտրութիւնը, կոչած էր զիս ի սպաշտօն տեղա-  
պահութեան, չորս հրաւիրւեցաւ կախսերական կառավարութեան հաստա-  
տութեամբ:

«Թէի անձնապէս վատառողջ և նոյն իսկ անձնուննաս՝ կատարելու  
այս պաշտօնին չասուկ պարտականութիւնները, որք մանաւանդ փա-  
փուկ հանգամանք մ'առած էին պարագալից բերմամբ, ոտկան նոյն իսկ  
իրաց այդ վիճակին պատճառաւ պարտաւոր զգալով զիս մասուցանելու  
պահանջւած ծառալութիւնը եկեղեցւու և ազգիս, վԱստւած ապաստան,  
ստանձնեցի զան, և առաջին օրէն հետամուտ լինելով կատարելու պաշ-  
տօնս, զոր օրէնքը կը սահմանէր բացորոշ, ստացակ պատրիարքական  
ընտրութիւնն հրամակող կախսերական Խրատէն, և ձեռնարկեցի, ըստ 2 դ

քուածոց, ընտրական նախապատրաստութեանց, որով նախ՝ Եկեղեցական Համագումար ժողովով և ի հոտով՝ Քաղաքական ժողովով կողմէ՝ պատրաստացան պատրիարքական ընտրելիաց ընդհանուր և հնգանուն դույցակներն:

ԱՅՆ որովհետեւ Կենդրանական վարչութեան Կրօնական և Քաղաքական ժողովաց պաշտօնավարութեան շրջանն ուր լրացած էր արդէն և հարկ էր որ անոնց անդ ըստ օրինի նոր ընտրութիւն կատարուէր, պատրաստացաւ Համագումար ժողովով կողմէ նաև Կրօնական ժողովով ընտրելեաց եռապատիկ ցանկն:

Յետ աւարտման ալս ամեն զործողութեանց, ժողովդ հրաւիրւած է այսօր իր քւեռնելու ընտրելու Կ. Պոլսու պատրիարքն, ինչպէս նաև ի նորու կազմելու Կրօնական ու Քաղաքական ժողովներն. Հարկ ի վերակ կաէ որոշակի ջատարարին թէ ներկաւ պարագալին մէջ ալս կրկին ընտրութիւնք են միան ժողովոդ օրակարգի խնդիրներն, և չկրնար անոնցմէ դուրս՝ ուրիշ ո և է խնդիր լուղարի, և կամ որ և է առաջարկութիւն և հարցում մատուցւիլ, ինչ որ լինի նիւթն ու նպատակն. և հարկէ ժողովդ օրինօք սահմանւած պարագանութիւններ ու աշխատութիւններ ունի կատարելիք, աղջակին գործոց մատակարարութեանը վերաբերեալ, և օրինական պէտք մէ որ զբաղի ալտ զործերով, և սակայն՝ ի դէպ ժամանակին Հետեարար ալս կէան յանձնելով մասնաւրսուպէս ձեր իմաստոն շրջանափցութեան կը խնդրեմ պատշառելի ժողովէզ որ բարեհածի առանց երեք չեղմլու օրակարգի ալս խնդիրներէն՝ ձեռնարկել ընտրութեանց, կը մաղթենք որ Հոգին Սուրբ Աստւած՝ ալս հանդիսաւոր ժամուն՝ տռաջնորդէ ժողովուի կոչելու կարողն և արժանաւորն Աթոռ Պատրիարքութեան:

«Ե վերծու անօգուտ չեմ համարիր յաւանել նաև որ ժամանակին արդի պարագայից առ չե ինձ բանաւոր կը թւի վարչական ժողովոց ընտրութիւնն նախապէս ի կատար ածել, և կը յանձնեմ ալս կէտն ձեր խոհական անօրէնութեան,

«Ո՞նդ դրսու կը մատուցանում ձեզ պատրիարքական ընտրութեան վերաբերեալ բարձրագուն պաշտօնագրերն և ընտրելիաց ալլ և ալլ ցանկերն իրենց լատուկ չակապը բովու:

### Մնամ աղօթարար

ՀՄԱՅՆԱԿ ԵՊԻՍԿ. ԴԻՄԱԲՍԵԱՆ,

Կարդացւեցաւ պատրիարքական ընտրութեան կանոնական որամադրութիւնը (2-րդ չուած):

Իսկ պաշտօնագրերն ու ալլ և ալլ ցանկերն արդէն կը բարձրացած ըլլալով, ուրիշ բան չմնաց կարգավիք բացց եթէ միան Տ. Մատթէոս եպ, իղմիրլեանի, Գրիգոր էֆինդի Շամունձեանի, Սակիան վաշա Արսլանեանի, Տ. Խաչատուր քէ. Տ. Գարրիէլեանի, Համբարձում էփ. Մագպու-

լեանի նամակները, որով կը ծանուցանէին թէ հարկադրւած ևն ժողովքն բացակաչ մնալ օրինական պատճառներով:

### ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Այս ամեն զործողութիւնները լրանալէ ետքը, ձեռնարկեցաւ պատրիարքական ընտրութեան:

Ա կ ւ ր ճ ե ա ն Մ կ լ ք ո ն է Փ. — Տեղապահ սրբազնը իր նամակին մէջ կը կարծէ թէ բանաւոր է որ ժողովս նախ վարչական ժողովներուն և շատոց պատրիարքին ընտրութեան ձևուարկէ: Ասիկա հակառակ է 25-դ և 30-դ լոգւածներուն, ուստի պէտք է նախադասութիւնը տալ պատրիարքին ընտրութեան:

Ոէթէոս էֆէնդի Պէրալիքնեան և իրեն հետ բազմաթիւ ժողովական ներ լայտարարեցին թէ օրէնքը անքան բացորոշ է, որ այդ մասին պլնդելու բակ հարկ չի կայ:

Նախ պատրիարքին ընտրութիւնը ուրեմն:

Ատենապետ էֆէնդիին առաջարկութեամբ, ըստ հնաւանդ սովորութեան, տեղապահ սրբազնը և իրեն հետ բոլոր ներկայ եկեղեցականները սկսան եղանակել «Որ և չնորհու հայկական շարականը, Անրինապին շնորհ» բերելու համար ժողովականներուն վրակ, պատրիարքական հանդիսաւոր ընտրութեան ձևուարկելէ առաջ: Դաշն, մեծ վաճիկուչ ու պատկառարկու աղօթքը խոր տպաւորութիւն թողուց բոլոր ներկաններուն վրաբ

Ցեսոց, ըստ օրինի, պատրիարքական ընտրութեան քէհնամարի քննիչ կարգւեցան վիճակաւ՝

Գարեգին վարդապետ Թաթարեան

Յակոբ վարդապետ Աշոտ

Յովհաննէս քահանակ Մկրեան

Գաբրիէլ քահանակ Խանճեան

Կարապետ էֆէնդի Լոնտեան

Մկրտիչ էֆէնդի Մանուկիսան

Յարութիւն էֆէնդի Մէրեմզուլի

Նշան էֆէնդի Ճիվաննեան

Քւետուփը մէջտեղն է, շրջապատւած ութ քննիչներէն, և իւրաքանչիւր ժողովական, անունը արւելուն, կը չանձնէ իր քւէն, զոց: Ցեսոց տ. Յավհաննէս քահանակ Մկրեան բարձր ածան մէկի կ մէկի կ կը կարդաքւները և միւսները կը նշանակեն: Ենդհուով կը տեսնվի թէ բոլոր ժողովականները միացած են մէկ անւան վրաէ: — Տ. Մատթէոս եպիսկոպոս Եղմիրլեան: Երկու ժողովական, կախելով ընտրութեանց արդիւնքը, զրած ևն իրենց քուէին վրաէ Պատրիարք և զմիրլեան, իսկ մին ալ ո ն է շփոթութեան տեղի չլողլու համար՝ Տ. Մատթէոս եպիսկոպոս

Կպմի բլետն, քարոզիչ Խւսկիւտարի Ա. Կարապետ եկեղեցին։ Ուրիշ մը գրած էր, հատիկ հատիկ։ «Ես քէտս Սատթէռու կպիսկոպոսին կուտամ»։

Ընտրութեան արդիւնքն է 76 քէտարկուի մասնակցութամբ։

### Քէ

Տ. ՄԱՏԹԵՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ . . . . .	67
Տ. Բարթովիմէոս Եպիսկոպոս . . . . .	3
Տ. Ղեռնդ Եպիսկ. Շիշմանեան . . . . .	2
Տ. Հմայեակ Եպիսկ. Դիմաքսեան . . . . .	2
Տ. Պետրոս » Սըլվաղի . . . . .	1
Սպիտակ քուէ . . . . .	1

76

Հետեաբար, քէներու բացարձակ առաւելութեամբ, Թուրքիու հայոց պատրիարք հռչակեցաւ Տ. ՄԱՏԹԵՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԻԶՄԻՐԼԵԱՆ, որուն անունը ողջունեցաւ ներկաներուն խանդավառ ծափահարութեամբ։

Այս ընտրութիւնը, ժողովին նոյն օրւան գործունէութեան համար բաւ համարելով, որոշւեցաւ լաջորդ նոտին թողով կրօնական և քաղաքական ժողովներու ընտրութիւնը։—Ո՞ւրի Կանանց տաճարը շատ ցուրտ դառնեցաւ, —իրաւ է որ ամէն մարդ կը մրսէր, —պատրիարքարանի որահը շատ անծուկ։ Շատեր Պալաթիու սրահը առաջարկեցին։ Վերջապէս դիւանը պիտի որոշէ։ Յաջորդ նիստը պիտի գումարւի լառաջիկաէ շաբաթւան ուրբաթ օրը, 10 օրէն։

Ժողովին որոշմամբ, ժողովականներէն Սիմէոն Եպիսկոպոս Աէֆէրեան ու Յովհաննէս վարդապետ Արշարունի և Յովհաննէս էֆէնտի Կիւմշան ու Բարսեղ էֆէնտի Ստամպոլուեան, իրենց ընկեր առնելով վարչութեան անդամներէն մէկ քանին, ալսօր իսկ Խւսկիւտար պիտի երթան։ Տ. Մատթէոս Սրբազանի զեկուցանելու իր ընտրութիւնը և չնորհաւորելու զինքը։

Դիւանին առաջարկութեամբ, ժողովը չնորհակալութիւն բարտնեց Տ. Հմայեակ Եպիսկոպոսի՝ իր տեղապահական պաշտոնավարութեան համար, ու իր խորին ցաւը այն ինը երեսփոխաններուն համար որոնք վախճանած են ժողովին վերջին նիստէն ի վեր Նախագահ Սրբազանը «հոգոցն հանգուցելոց» ազօթքը կարդաց, որուն ունինդրեցին ժողովականները սաքի վրաէ և զլսաբաց։

Նախագահ Սրբազանը ժողովին ծանուց Սիսի Տ. Մկրտիչ կաթողիկոսի մահը, և ըստ որ ժողովը անշուշտ իր լաջորդ նիստերուն մէջ պիտի զբաղի ալդ գործով։

Կարդացւեցաւ պատրիարքական ընտրութեան արդիւնքը ծանու-

ցանող Մազպաթան որ Բ. Դուռը պիտի դրկւի, և զոր իւրաքանչիւր ժողովական ստորագրեց, Մազպաթան երէկ իրիկուընէ արդէն դրկւեցաւ Բ. Դուռը:

Ժողովը ցրւեցաւ ժամը 8<sup>1</sup>/<sub>2</sub>-ին:

### ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՈՒԽՏԸ

Մայրեկեղեցիին մէջ է որ կը միտի ալս մեծ օրւան մեծագուն դրւագը Ընդհանուր ժողովը գումարւած էր արդէն, և միւչև ո. պատրիարքին զալուստը, կարդացեցան զանազան պաշտօնագրեր որոնք կը հազորդէին կրօնական և Քաղաքական ժողովներուն ընտրութեանց արդիւնքը: Ներկայ էին իբր 90 երեսիոխան, — ալսինքն ժողովին դրեթէ բոլոր անդամները:

Բայց ահա սննուն ազմուկ մը կը թնդացնէ հկեղեցիին լայն կամարները: Ս. Պատրիարքն է որ կուգայ:

Կարելի չէ բացատրել այն զգացումը որ ալս պահուն կ'ելեկտրացնէ հոն հաւաքւած ամբոխը: Բազմութիւնը, եկեղեցիին մէջ թէ դուրս 8—10,000 հոգի կը հաշւի: Պատուհաններուն մէջ երկու կողմէն ամփիթատրոնի պէս լեցւած է ժողովուրդը:

Մէկն, կեցչ մըն է որ կը պոռթեալ ալդ ահագին բազմութեան կուրծքէն, ու կը կրկնվի, կ'երեքնւուի, կը բազմապատկի անսահման: «Ակեցչ» «կեցչ» Ս. Պատրիարքը, ու ծավերը կը լաջորդէն ալդ աղաղակներուն, ու ցնծութեան աղաղակները՝ ալդ ծափերուն: Դուլ ու գագրում չունեցող խանդավառութիւն մըն է ասիկա որ հաւատքի նվիրած ալդ լարիին տակ կը տարածի, կ'ոլորտանակ, կը բարձրանայ և որուն նեղ կուգան կամարները: Դասէն, ուր հաւաքւած են երեսիոխանները, ձախներ կը բարձրանան լուսութիւն խնդրող ժողովրդէն, ու ժողովուրդը կը պատասխանէ միշտ կէցցէններով ու ծափերով: Յուղումը կը հանդարափ քիչ քիչ, ու Ա. Պատրիարք հայրը խորանին առջև կ'ելլէ իր Ուխտը ընելու:

Խորանը ամբաղջ լուսազարդւած է: Լուսով բիւրաւոր ցուքեր կը պաշարեն ։ Սրբազնութիւնը որուն գէմքը անոնց մէջն կ'երեխ որբազան պատկերի մը հանգունատիպ: Խորանին վրաէ կեցած է ուղիղ: Սկ վեղարը իր ստւերը ձգած ալդ դէմքին վրաէ, կը սաստկացնէ այն միանձնի ու հաւատացեալի աննիւթակունութիւնը զոր ունի իր կերպարանքը: Ցաւին ու խոտամբեր կեանքէն կարկամած դիմագերը, խոնուն ու զիտակից ախրութիւնը որ իր աչքերուն մէջ կենդրոնացած է, տրտմական ծալքը իր շրթունքներուն, այն ամբողջ զառն ու ինքնամկուփ զգացողութիւնը

որ իր զիմագծութիւնը կը սրբացնէ, պատկառանք կը հեղուն չորս դիմացն ու հանդիսաւոր ձախով մը կը խօսի, խորունկէն եկող ձախով մը, և ի տև այն ազգեցութեան զոր իր խօսքերը կը բերեն հաւատացեալ ժողովրդին վրայ, տրամութիւնը ու զառնութիւնը պահ մը կ'անհետին աշքերէն և երանութիւն մը կը սփռվի իր զիմագծերուն վրա:

Խօսքը կ'ուզգէ երեսովիսաններուն:

Ա'ըսէ թէ ժողովուրգը զեկունմբեր 7-ի նխատին մէջ կատարւած ընտրութեամբը կոչեց զիմագը պատրիարքութեան, պաշտօնն որչափ փափուկ և դժւարին, անչափ և առաւել ևս անարժէք էր իմ անձն, և հեռի աղդ պաշտօնին պարտականութիւնները կատարելու թէ մատաւրական և թէ ֆիզիքական կարողութիւններէն, բայց մէկ կողմէ եկեղեցական կոչումն կը պարտաւորէր զիս համակերպիլ սպատկառելի ժողովիդ որոշման, և միւս կողմէ այն մեծ վատահութիւնը և համակրութիւնը զոր իր կատարած ընտրութեամբը ցուց կուտար պատկառելի ժողովդ, որ օրինաւորապէս կը ներ կացացնէր ազգը, համարձակութիւն տւին ինձի ընդունիլ, առանց ի հաշիւ առնելու ֆիզիքական քողքակիալ վիճակս, որ ամենուն լազմի է, Ուստի չնորհակալութիւն առ պատկառելի ժողովդ լանձին իմ կատարած անարդամնեաբ ընտրութեան համար, նոյնակու չնորհակալութիւն առ ինքնակալ միահեծան կալսրն որ հաճեցաւ վաւերացնել իմ ընտրութիւնս, և արդ կը կատարեմ Պատրիարքական Ռւխար, զոր կը զծէ Ազգային Սահմանադրութիւնը:

Այդ միջոցին Ա. Պատրիարք Հօր տվին Սահմանադրութեան տեսրակը, և ն., Սրբազնութիւնը, զայն բանալով, զարձաւ դէպի խորանը և կարգաց Ռւխար, ամուր ձախով.

### Ո Խ Խ Ը Ը

Առաջի Ասուն ծոյ և ի ներկայութեան Ազգային ժողովոյս՝ հրապարակաւ ուխուեմ հաւատարիմ մնալ Տէրութեան և Ազգիս, և ճշմարտապէս հսկել Ազգային Սահմանադրութեան անթերի գործադրութեանը:

Բատ օրինի, այդ վայրիկանէն է որ պատրիարքը կը տիրանակ իր իշխանութեան, Տէրութեան պատրիարք Տ. Մատթէոս Պատրիարքին լանձնելով Պատրիարքական գաւագանը, այդ վայրիկանէն դադրած եղաւ իր պաշտօնէն:

Ա. Պատրիարք Հայրը, Ռւխտէն լիտու խոր զդածմամբ բացարեց թէ ինք ինչ կերպով կ'ըմբռնէ իր Ռւխար և Պատրիարքական բարձր պաշտօնը:

Երեսովիսան ու ժողովուրդ եռանդագին կեցցէներով ու ծափահարութիւններով ընդունեցին այս լավագարութեան իւրաքանչիւր պար-

բերութիւնները։ Պէտք է նորէն սպասել որ հանդարտով ողեսրութիւնը որ հիմակ այդ խիտ ամբոխին կարգերը կը լուզէ նոչն զգացումներով։

Եկեղեցականներու և զպիրներու համաճակ ձանն է որ կը բարձ րանակ հիմա, աղօթքներով որոնք սրտէ բզիսած թռիչներ են զէպի Աստւած։ «Լուսով Ատուածութեան քո, Քրիստոս, որ լուսաւորեցիր Սուրբ Եկեղեցիս, պահեա զսա անշարժ լաւիտեան», Այս շարականէն ետքը «Արք Աստւած հարցն մերցց-ը և լսուու «Տէր ողորմեան», զսր ամբողջ ժողովուրդը միաբերան կերգէ, տապաւորութեանց ամենէն խորինը ու ամենէն աղղականը լսուած բերելով, սրբերէ բզխող հառաջն է որ կը կրկնի, «Տէր ողորմեա» «Տէր ողորմեա» և այլ սրտագին աղերսը խոր հաւատքի անկեղծ ու ջերմեա անդ շեշտ մը կ'առնէ ժողովրդին բերնին մէջ։

Աղօթքներէն ետքը, նորէն կեցցէններու և ծափահարութեանց մէջ տեղ է որ Ս. Պատրիարքը կ'ելլէ Պատրիարքաբարձրան։ Ժողովուրդը իրարու ելլելով կը ջանակ հիմակ ալ, ինչպէս առաջ, համբուրին Ն. Սրբազնութեան ձեռքը, սիրու և համակրութեան խոր զգացումով մը։

### ՊԱՏՐԻԱՐՔԱՅՆԻՆ ՄԵԶ

Պատրիարքարին մեծ սրահը առաջնորդեցաւ Պատրիարքը, ուր հաւաքւեցան բոլոր երեսփոխանները և համբուրեցին իր ձեռքը։ Յետու անցաւ իր սենեկակը, ուր հաւաքնեաէ եկան իրենց չնորհաւորութիւնները լայտնել իսումբ-խումբ աղղակիններ, հաչ մամուլին ներկայացուցիչները։ Միացեալ ընկերութեանց տնօրին ժողովը, Կենդրունական վարժարանին աշակերտները որոնց ուսուցիչը եղած է Ն. Սրբազնութիւնը, մազու եկեղեցին քահանաներուն դասը և թաղական խորհուրդը, Պատրիարքաբարձրանի պաշտօնէութիւնը, որուն կողմէ հակերէնի դիւնապետ Տարթող էֆ. Թէ. լեան զգածեալ բանախօսութիւն մը ըրաւ, իրենց չնորհաւորութիւնը և սրտագին բարեմաղթութիւնները մատւցանելով և ընդհանուր աղքին ուրախութեան և գոհութեան զգացմանց լծորդելով իրը, և միանդաման վատահութիւն լաւտունելով որ Եկեղեցին և Ազգին պէտքերն ու կարօտութիւնները, որոնց քաջ ծանօթ է Ն. Սրբազնութիւնը, գոհացում պիտի գտնեն չնորհիւ իր ողջմտութեան և փորձառութեան։

Ս. Պատրիարքը, որ վարչական գործերու խոր հմտութիւն ունի Երկարօրէն պատասխանեց ալս բանախօսութեան։ Նոյն պերճախօս շեշտ էր որ կը հրահրէր իր ամեն խօսքերը, և ամեն չնորհաւորութեանց իրը պատասխան իր արտասանած հինգ վեց բանախօսութիւնները մէկ մէկ գոհար են Եկեղեցական պերճախօսութեան, ամենքն ալ ողեսրուած նոյն անկեղծ հաւատքով։

Ա. Պատրիարքը պաշտօնին զլուխը անցաւ,

(«Հայունիք»)։

## ՎԵՑԱՄՄԵԱՅ ԳՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒԽԵՐԻ ԱՌԻԹՌՎ

Անցեալ համարում խոսացել էինք մեր կարծիքը չակտնել մեղա-  
նում հրասարակւող վեցամսեակ ժողովածուների կամ, ինչպէս նաև  
ասում են՝ հանդէսների մասին։ Դոցա թւի տարիցարի աւելանալը շա-  
տերին դրդել է մտածելու, թէ ինչ նպատակի են նոքա ծառալուն, քանի  
որ նոքա մեծ մասամբ շատ աննշան բաժանողներ են ունենում և ընթեր-  
ցող հասարակութեան մէջ չեն կարողանում զարիթեցնել հարկաւոր չափավ  
չետաքրքրութիւն դէսի իրածոց։ Ալգափիսի վեցամսեակ և կամ յանկացող-  
ներ վեցամսեակ լինելու ներկազում Որուստ-Համերի մէջ կան հինգ հասա  
Արաքս, Հանդէս գրականական և պատմական, Թատրոն, Հորիզոն և չափ-  
արարւած «Խօսք» հրատարակութիւնը։ Եւ անա հրատարակութիւնների  
ալդ թւի առիթով՝ մտածութիւնը մէջ կարծիք է չալտնուում որ, քան թէ թւով  
շատ բաց վատ խմբագրւած վեցամսեակ հանդէսներ լինեն, աւելի լաւ  
կը լինէր եթէ գրական բովանդակութիւն ունեցող ժողովածուները միա-  
նալին «Մուրճ»-ի հետ, իսկ եթէ ոչ նոքա իրանց հետ միանալին, ընդ-  
հանուր ոչերով լաւ խմբագրելով մի հատ ժողովածու։

Նթէ մենք արժանի ենք համարում քննել ալդ հաւեացքը, ալդ նրա-  
նից է, որ ազգպէս մտածողներ շատ կան մեղանում և մենք ինքներա  
սուիթ ենք ունեցել ազգիսի ցանկութիւններ չալանողներին ունկնդնելու-  
նւ, սական, մենք համարում ենք ազգիսի մի խորհուրդ լաւ չմտածւած,  
աննպատակացարմար։

Նախ որ ոչերի մի առանձին կարեւորութիւն ունեցող ջլատումն  
չենք տեսնում վեցամսեակ ժողովածուների շատանալու մէջ, եթէ հաշւի  
առնելու լինենք միան նոցա, որոնք աչժմ հրատարակում են, ինչո՞ւ? Որովհետեւ աչժմ գուտթիւն ունեցողները չեն պաշտպանուում նշանաւոր  
գրական և խմբագրական ոչերով, կոնկրէտ կ'րսով խօսենք, ինչը պիտի  
աւելանար «Մուրճ»-ին, եթէ չլինէր «Հանդէս գրականական և պատմական»։  
Միթէ կամ ոչերի որ և մի խումբ, որը իւր լուսերով ապաւինած լինէր  
ալդ հրատարակութեանը, և որը հետեապէս, ալդ հանդէսի չլինելու դէսի-  
քուու՞ կ'անցնէր «Մուրճ»-ին և կամ որ և է ուրիշ թերթի? Վատահանում-  
ենք կարծել որ ոչերի մի ազգիսի խումբ լինաւ չկաչ լիշեալ հանդէսում։

Վերցնենք «Հորիզոն»ը։ Սա ինչ ուժերի խումբ է ներկայացնում։ դա ինչով է կապւած որ և է, չենք ասում սելտնդի, այդ արդէն չափանց կը լինէր, այլ նոյն իսկ մի չկողայի կամ նոյն իսկ մի որ և և իմբի ձդտումների հետ? Աւելին ասենք. դա, այդ հրատարակութիւնը՝ ոչ մի բանի հետ կապւած չլինելով, ոչ մի ուղղութիւն չունենալով, գուցէ հրատարակում է միմիայն բողոքելու համար եղած օրգանների գէմ? գուցէ դա՝ դժգոհների մի օրգան է, դժգոհներ, որոնք իրար հետ մտաւոր և բարուական կապ չունեն, բայց կապ ունեն միմիայն իրանց դժգոհութիւնով հղած թերթերից? Բնաւ ոչ, Դորա մէջ համոզւելու համար բաւական է աչքի անցնել «Հորիզոն»-ի տուածին զիրքը և տեսնել նորա մէջ զրոյների անունները։ Հրատարակութեան սիւնը, ըստ երեսութիւն, ալէտք է կաղմում լինի պ. Յովհաննէս Թումաննեանց, որը տպիլ է ալղաևի տար ստանաւոր, մի նկարագիր Բորչալուի և Խորենացու մի տողի բացատրութիւնը (Տեղակար Սաթենիկ և ալին)։ Արդ, ինչ է նշանակում պ. Թումաննեանցի երեալը այդ հրատարակութեան մէջ. բողոք «Մուրճ»-ի գէմ, որի չարատե աշխատակիցներիցն էր նա մընչև 1893 թւականի սեպտեմբերը? Ինչի՞ն է շողոքը, քանի որ իւր աշխատակիցութեան սկզբի օրից մինչ լիշեալ ամիսը-ամբողջ տարիներ - նորա և մեր մէջ տեղի չէ ունեցել որ և է անբաւականութիւն և քանի որ գնալով աւելի ու աւելի սերտ ևն եղել կամ սերտ ևն թւացել նորա թէ աշխատակիցական և թէ անձնական լարաքերութիւնները? Բանաստեղծ-աշխատակից էր նա «Մուրճ»-ում, որին նա դիմել էր զես նախ քան որ և իցէ տեղ երեցած լինէր և մնաց հաւատարիմ իւր ընտրած օրգանին տարիներ շարունակ - տուանց որ դժգոհութեան նշով անգամ արտակաւած լինէր նորա կողմից։ Մենք զո՞ւ, մինչ վերջը միայն ջերմ համակրութեան արտակաւառութիւններ ենք լույն նորա կողմից։ Եւ նոյն իսկ նորա յօդածը Բորչալուի մասին նշանակած էր «Մուրճ»-ի համար, թէն զեռ չէր լանձնւած, գուցէ և չէր զրւած։ Եւ սակայն, նա կապւեց մի հրատարակիչ պարոնի հետ, որը նորան ապահովում էր մի այլ բանով, որ ոչ մի կապ չունի զրականութեան հետ, հետեապէս և ոչ մի կապ «Մուրճ»-ի հետ, բայց որը, ով զիտէ, նորա համար գուցէ ամեն բանից քաղցր էր ալդ ժամանակ։

Ուրիմն պ. Թումաննեանցի երեալը մի անպիսի հրատարակութեան մէջ, ինչպիսին «Հորիզոն» է, ոչ մի կերպ չէր կարող լինել հետեանք դժգոհութեան «Մուրճ»-ից։

Մի ալդ զրոյ ալդ հրատարակութեան մէջ պ. Շիրվանզադէն է, նա տպել է ալղաևի մի վետ՝ Ցաւադարը՝ և Տաֆֆիից լիշողութիւններ։ Տաֆֆիի մասին կենուազբական յօդւած պ. Շիրվանզադէն խոստացել էր մեր զեռ մօտ չորս ապարի առաջ, ասելով, որ, թէն Բաքիից մի խումբ երեսաւարդներ ալդ զրւածքը տպագրելու համար նորան տաւիս են 300 ու

վարձատրութիւն, բայց նա կը տակ «Մուրճ»-ին, ուղիլով որ նա «ԱՌԱՐՃԱ-ԱՄ-  
ՊՈՐԻ» Յօդածը չարւեց, և իրր սպատճառ առաջ բերւեց այն, թէ յօդածը կազ-  
մելու համար այրի տիկին Բաֆֆիի մօտ գտնած կարեսը թղթերից  
չխարդացաւ օգտելու Աւրեմն Բաֆֆիի մասին այն կենսադրական  
յօդածը ոչ միայն «Մուրճ»-ից ամփո՞ք շինուելու պատճառով է լուս տևաել  
ոչ «Մուրճ»-ում, այլ, եթէ կամենաք, երեսի իրբ «Մուրճ»-ում առվելու արժա-  
նիքը չունեցող մի գրւածք, քանի որ «Մուրճ»-ին խստացածը Բաֆֆիի  
թղթերի վրայ հիմնած մի ուսումնասիրութիւն պէտք է լիներ:

Նոյն պ. Շիրվանզադէն մի-երկու տարի զորանից չեսաց ներկազացքեց  
մեզ «Արակն Դիմաքսիան», որ և ընդունեց ու տպւեց որոշ վարձատրու-  
թեան պացմանով: Վէսլը վերջացաւ լուսնիսին 1893 թւականի, և նոյն հե-  
ղինակը լաջորդ ամիսներին խոստանում էր մեզ 1894 թւականի լունա-  
րից սկսած տալ մի շարք վեպիկներ: Այդ խոստումը նա անում էր գեռ  
և նոդեմբերին, կրկնելով աւելի առաջ տւած խոստումը: Ճիշտ է, այդ  
նոյն ժամանակը նա առաջարկում էր իր աշխատակցութիւնը ամսագրի  
աճապիսի բաժինների համար ևս (Գրախօսութիւն, Ֆելիչտոն), որոնց հա-  
մար մենք երբէք կարօտութիւն չենք զգացել պ. Շիրվանզադէի ոչխն-  
քանի որ այդ բաժինների համար «Տարազ»-ի լուսը հենց նորա նմանների  
համար է սահղուած: Եւ զեռ այն ժամանակ նա աշխատակցում էր «Տա-  
րազ»-ի այդ բաժիններում, և մի աճապիսի լաջողութեամբ, որ, իհարկե,  
ով չը նախանձիլ «Տարազ»-ին...

Բայց ինչ և է, խոմ «Հորիզոն»ի մէջ նա չտպազրեց այն, ինչ կը կա-  
մենար նա «Մուրճ»-ում տպագրել, զորանով միայն լոզոք կ'արտավազուէր:  
չէ թէ «Հորիզոն»-ի մէջ նա տպագրեց մի վէպիկ, որը կամ որի նման-  
ները նա «Մուրճ»-ին էր խոստացել, այն էլ լունւարից 1894 թւականի,  
այն է վերջին խոստումն տալուց մի կամ ամիս ու կէս առաջ, երբ ար-  
դէն մեր նոտարական լընկերը թողել էր «Մուրճ»-ը ու հեռացել: Բայց և  
աճապէս նա տարաւ ու «Մուրճ»-ին խոստացածը տեսց «Հորիզոն»-ին,  
առանց նոյն իսկ որ և է խօսք ասելու «Մուրճ»-ի խմբագրութեանը,  
սուսիկ-վուսիկ: Դու ինչ էր, բողոք? ում դէմ, ինչի դէմ? Ոչ, զա երկրպա-  
գութիւն էր ոսկուն: Որ. Շիրվանզադէն իրաւամբ ենթաղրել էր, որ իւր  
գրւածքը աւելի թանկ կը գնահատեր: «Հորիզոն»-ում քան «Մուրճ»-ում.  
չէ որ մի անը՝ անփողութիւն կար, միւսում՝ ոնդուկի զընդ-զընդպոց...

Աճապիսով ուրինն երկու զրոյների երեսով «Հորիզոն»-ի մէջ կապ-  
ւած է այլ հանգամանքների հետ, որոնք կապ չունին «Մուրճ»-ի բավան-  
դակութեան և ուղղութեան հետ:

Բայց այդ երկու զրոյներից միայն մէկն էր «Մուրճ»-ի խմկական  
աշխատակից, պ. Թաւամանեանը, աճապէս որ, եթէ ուժերի ջատման մասին  
է խօսքը, «Հորիզոն»-ի զրոյներից միայն պ. Թաւամանեանը կարող է ակ-

նարկւելու Միւսը «Մուրճ» ի ուժերից չէրո Բայց գտահցէք ինքներդ, կարելի է արդեօք լրջութեամբ խօսել մի երեսթի մասին, երբ նա սպառում է մի միակ գրագէտով, որի բացակալութիւնը «Մուրճ»-ից ոչ մի ինդղիր չէր կարող լարուցանել, որպէս և չլարուցեց էլ?

Ա՞յդ է ջլատումը?

Պարզ է, որ ոչ «Գրականական» և Պատմական Հանդէսով» ոչ «Թատրոնի» և ոչ «Հորիզոն»-ով գրական ուժերի ջլատումն չառաջանալ չը կարող:

Երբ ազգպիտիներին ալծմ, թէկտող բարեկամաբար, գալիս են և առաջարկում մի ան ալ «Մուրճ»-ի հետ, իսկապէս ինչ են առաջարկում? Քանի որ մի ացնելու իմբեր չկան, մնամ էն մեջ տեղում իրանք հրատարակիչները, ինչ գաղափար է, սական, դալ առաջարկել գիցուք «Հորիզոն» հանդէսի հրատարակչին, որ սա մի ան ալ «Մուրճ»-ի հետ? Անպիսի անձեր, որոնք իրանց առանձին հրատարակութիւնը ունենալու վճռողականութիւնն ունեն, երբէք ազ կերպ չեն ըմբռնիլ մի ան ալ խօսքը, քան եթէ փոխադարձ զիջումն երով համաձայնութիւն կապացնելու իմաստով, Բայց ազգպիտի լեզու բանեցնելը անպիսի հրատարակիչների գիմաց, ինչպիսիք են «Հորիզոն»-ի, «Թատրոն»-ի հրատարակիչները, ազդ պարզ կը նշանակէր նրանց երես տալ: Որովհետեւ վայ այն հրատարակութեանը, որը զիջողութիւններով պիտի գրաւի անպիսի ամօթ չլինի ասելը՝ աննպիսի գրական և մտաւոր ուժեր, ինչպիսիք հն Թարխանեաններ, Վարդագարեաններ et tutti quanti...

Ալդպէս է բանը, ինչ վերաբերում է գրական վեցամսեալ հրատարակութիւնների «Մուրճ»-ի հետ մի ան ալու առաջարկութեանը: Նոցա հրատարակիչները, եթէ ամենքն էլ ուղինան մեզ հետ միանալ «Մուրճ»-ին չեն կարող ոչինչ առաջարկել, եթէ ոչ մի աշխատավից, այն էլ անպիսին, որի լինել կամ չլինելը «Մուրճ»-ում՝ ամսագրիս ընթերցողների համար խնդիր չի կարող, լինել բայց որի գարգացումը մասնաւորապէս մեզ համար մի ինդիր կը լինէր, իբրև «Մուրճ»-ում՝ իւր առաջին գրական չկոլան անցկացածի, եթէ նա ալսոն էլ շարունակուծ լինէր իւր աշխատակցութիւնը:

Իբրև առաջարկութիւն «Մուրճ»-ին մի քանի հանդէսների կողմից—դա, այդ առաջարկութեան դուզն ու ծուծը, հաւասար է զէրօխ:

Անպիսով «Մուրճ»-ը իւր բալանզակութեան համար գրեթէ ոչինչ չէր վաստակիլ ալժմ գոլութիւն ունեցող վեցամսեալ հանդէսների հրատարակիչների մեզ հետ միանալուց. բայց ահազին կը լինէր այն բարու ական վնասը, որ նոքա կը բերէին իրանց հետ, երբ կը ոկտէին երեակակել թէ որ և է բան և ն դոհել մեզ հետ միանալով, որի հիման վրակ դեռ կը լամառէին մեզ հետ սակարգութիւններ անել «Մուրճ»-ի խմբագրու-

թեան դործում ձաշն վաստակելու համար, անաջող դէպքում ամեն տեսակ սկանդալներ սարքելու պատրաստականութեամբ: Եւ ապահով եղէք, որ, միան թէ «Մուրճ»-ի դէմ լինի՝ «Մշակն» էլ, «Արձագանքն» էլ իրանց ձեռքը կը մեկնէին ազգային բին... Անցեալ տարւակ փորձը այդ ցուց տեց բաւականին աշկարա կերպով:

Երբեմն, ընդհակառակը, աշդպիսի հարատարակութիւններ հարկաւոր են խառուկնրա համար, որ նոքա, որոնք խօսքով չեն ուղում համոզւել թէ ինչ են իրանք, իրանց ապիկարութիւնը փորձով տեսնեն, իսկ այն գրադարձը, որոնք նրանց խրախուսում են, մերկանան իրանց հարատարակիչների և հասարակութեան առաջ: Քէ որ երբ գտնւում է մի վառասէր, որը, փոխանակ եղածին համեստաբար օգնելու, իւր սեփականն է ուղում հիմնել, շողոքորթներ են դուրս դալիս, որոնք թէ են տալիս ալգայիսիներին, մալորածին աւելի ես մոլորեցնելու համար, չւսալով թէ դրանով իրանց ձեռքը մի քանի շափ կ'ընկնի... Ողորմելիներ...

Խոկ կարծել թէ դոքա ոչ թէ այլ ես «Մուրճ»-ի՝ այլ իրար հետ միանալով կարգին բան կ'ստեղծեն—զա կատարեալ միամտութիւն է, միմիապին դրական ուժերի համերաշխ դործակցութիւնով կարելի է խելացի և կենսունակ բան ստեղծել, բայց ոչ երբէք ոգուց զուրկ անկապ մարմին կազմելով, ինչպիսին կը լինէր ալժմեան վեցամսեալ հանդէսների զկագալրմերի ծիծաղելի խումբը...

Հետեւում է մեր ասածից արդեօք թէ մենք առհասարակ դէմ ենք նոր պարբերական թերթերի երեան զալուն? Բնաւ ոչ: Բայց ամեն մի պարբերական հրատարակութիւն պէտք է մարմնացնի մի գաղափար, որը բաւականաչափ ուժ ունենալ թերթի հետ գնահատելի գործիչներ կապելու, դոցանից խումբ կազմելու և այդ խմբին ոգի տալու: Խակ դա՛ ամեն ցանկացած ըստէում կատարելու բան չէ և ոչ էլ ամեն մի չաւակնողի գործ է:

Ահեծիք ԱՐԱՄԽԱՆԵԱՆՑ:

## ԹԱՏՐՈՆԻ ՇՈՒՐՃԸ

Հ. ՍԵՒԵԱՆԻ

Մեր առաջին լողացի «Մուրճ»-ում լոկս տեսնելուց լեռով, (տես «Մուրճ» 1894 թ. № 9) թէև չկազմակերպեց հայ դերասանական խումբը, բաց թատրոնի շուրջը տեղի ունեցան աշնալիսի իրողութիւններ՝ որոնց չէ կարելի անակաս թողնել:

1894—95 թատերաշրջանի գեֆիցիտը ապահովելու համար դուր եկաւ մի հարուստ վաճառական, Խ. Արզումաննեան. խնդիրը մանրակրիստ քննութիւնների ենթարկելուց. և իւր ոչ մի վնաս չկրելուն ապահով լինելուց լիտու, առաջարկեց դերասաններին նրանց ամբողջ ուսմէկի կէսը միան ապահովել իսկ միւս կէսը, և միէ օգուստ մնար ներկայացումներից՝ դերասանները պիտի ստանալին: Յանուն հայ թարարոնի գաղափարի, ամբողջ խումբը համաձայնւեց կէս ուսմէկի պայմանին, բացի երկու դերասաններից, որոնք պահանջում էին ամբողջ ուսմէկները. Այդ պատճառով էլ առաջ եկաւ պառակտումը, և նորա հետեանք պ. Արէլեանի, իւր մի քանի ընկերներով դէպի Ռուսաստան կատարած ճանապարհորդութիւնը:

Պէտք է նաև լիշել որ 94—95 թ. թատերաշրջանի համար պիտի մասնակցէին ներկայացումներին օր. օր. Վարդիթեր և Մարի-Հրանու Ֆէլէկեանց քոլերը:

Համերաշխ կերպով ներկայացումները գլուխ չդալուց լեռով գերասաններից իւրաքանչիւրը սկսեց ներկայացումներ տալ իւր հաշվին ներկայացումներին սկիզբ գրեց օր. Վարդոհին իւր «Խանում»-ով, որ թարգմանած է վրացերէնից՝ չգիտենք ինչու համար: Ժամանակ է որ «Խանում» ի նման բեռներից հայ բեմը ազատ պահելու վերալ մտածեն մեր չարգելի դերասանները: Նպատակ չունէ և հայ բեմին որ և է ծառալութիւն չէ պատահական իւրաքանչիւր պիէս զնել բեմի վերալ: Նրան լայնորդեց պ. Պեարոսեանի «Օթէլլօ»-ն՝ որ ոչ մի ապաւրութիւն չմոդից անսամբլի պակասութեան պատճառով: Բարեխիղ դերասանը «Օթէլլօ»-ի

նման խոշոր գեղարւեստական տանդապորձութիւնը բեմի վերաէ դնելիս՝ լաւ պէտք է կչու թէ իր և թէ իրա շրջապատողների ուժը. ալւապէս գեղարւեստը, որին ծառակամ են գերասանները՝ ուսքի տակ կընկնի և հասարակութիւնը կը խրաչի թատրոնից:

«Օթէլօ»-ին շաջորդեց պ. պ. Սարդարեանի և Վ. բուրի Յ. Պարոնեանի գրւածքից բեմին լարմարեցրած «Բազմատար Աղբար» պիէսան, «Վեճապատիւ Մարտացկամներու-ի ներկալացւմից վտառ ինչպէս ընթերցող հասարակութիւն մէջ՝ նոյնպէս և թատրոն չաճախորդների շրջանում, Պարոնեան դարձաւ մի տմննասիրելի հնդինակ. այդ պատճառով էլ «Բազմատար ալլբար»-ի ներկալացմանը մնձ հետաքրքրութեամբ սպասում էր հասարակութիւնը. ներկալացումը կակացաւ խուռն բազմութեան ներկալութեամբ, որ իւր տեսակում մի նորօրինակ կեանք էր տեսնում: Անչափ գոհ հասարակութիւնը հետացաւ թատրոնից: Այդ պիէսան մի քանի օրից վտառ հասարակութիւն խնդրանքով երկրորդ անգամ ներկալացւեց միենողն լաջողութեամբ, որքան մենք լիշում ենք վերջին տարիների հաչ ներկալացումները, այդ առաջին դէպքն էր որ մի պիէս կարծ միջացում երկու մելքամ խաղացելու:

Խաղացեց և «Աւազակներ», պ. Լոռն Մանուէլեանցի մասնակցութեամբ: Պարոնի խաղը քննութեան շննթարկելով, կարող անք համարձակ ամել որ լաւ բէժիսէօրի հսկողութեան տակ նա կարող է օգտակար և լալողակ դերասան լինել: Պր. Մանուէլեանցին պատրաստութիւն է հարկաւր: Մասնաւորաբար կատարեց պր. Մ. ցը այն տեսարանը ուր առանձին մնում Ամալիաի հնու:

Պ. Պետրոսեանցի մասնակցութեամբ խաղացւեցին «Քին» և «Ուրիէլ Ակոսա»: «Քինը» անցաւ նոյնպէս առանց տպաւորութիւն թողնելու: խկ «Ուրիէլ Ակոսա» մասնաւոր հետաքրքրութիւն էր գրաւել, քանի որ ներկալացման մասնակցում էին պ. պ. Պ. Աղականց, Եիրվանովագէ և ուրիշներ: Մեզանում երբ սիրողները մասնակցում են մի որ և է ներկալացման, որքան էլ վաս խաղան, նորա իրանց խիզը հանդարտ են զգում: «Ամենք խօ դերասան չենք. » ահա նրանց պատասխանը, բայց մեծ միաւլ է ալդպէս դաշակի աէր անձը կը համաձանի իւր սենեակի պատից քաշ տալ մի սիրող-նկարչի վրձինի արտադրութիւնը՝ քանի որ այդ պատկերի տեսքը ամեն բոպէ իրան պէտք է վրդովեցնէ: Նոյն վարմունքը նկատում էր հասարակութեան մէջ, երբ մի ամենաուժիղ զրամատափիկական տեսարան վշանում էր ձախորդ գերակատարի մի անձով շարժումով և հասարակութեան մէջ ակամաչից անապին քրքիջ չարւցանում: Մենք այս նկատութիւնը անել բոլորովին աւելսրդ պէտք է համարէինք, եթէ լիշեալ թատրոնաւէրների մէջ չահսնէինք երկու անձնաւորութիւններ, որոնք բէց են զենա և են, և ալսպիսի տարրական ձըշ-

մարտութիւնները լաւ պէտք է ըստունած լինեն։ Կրկնում ենք, խրաքան, չիւր անչաջող ներկալացում մի-մի քավլ չեա է մզում։ այդ նուն բէցէն, զէնտներից փափաէւած հաչ թստրոնի գաղափարը։

Յաջողութեամբ կատարեցին իրանց դերերը պ. պ. Պ. Աղալեանց և Շիրվանդաղէ։

Դերասանական շրջաններից լսում ենք որ պ. պ. Սարդարեանի և Արուրի ջանքով պիհսամի է վերածւած Պլատոն Զուբովի «Արաբաղի աստղագէտը» վերնագրով վեպը, որ հանգուցեալ Բաֆֆին հակերէնի էր թարգմանած։ Աթէ, ինչպէս որ լիշեալ կարոնները բեմի կարմարեցրին «Բաղդասար աղբար»-ը, նուն ճարտարութեամբ կատարւած է և այս գրքածքի փոխադրութիւնը, այն ժամանակ պիհսամի յաջողութիւնը երաշխաւրւած կարելի է համարել։ «Արաբաղի աստղագէտը» փոխադրով պարոններից մէկն ու մէկը պիտի գնաւ Շուշի բառկապէս ուսումնասիրե։ Լու այն ժամանակւակ Պարաբաղի հաչ և թուրք ախրագետողների սովորութիւնները, նիստ ու կացը և տարագները։

Նուն պարոնները, ինչպէս լսում ենք, մտագիր են Թիֆլիսում հիմնել «Թատրոնական բիւրօ», նպատակ ունենալով դաւառներում թատրոնական գործը յաջողութեամբ առաջ տանել։ այն գաւառական քաղաք ները, որոնք կը կամնան կազմակերպել ներկալացումն, կարող պիտի լինեն զիմնել լիշեալ սպարոններին, ոտանաւլ մանրամասն տեղեկութիւններ թէ պիհսամների և թէ նրանց ինչ կերպով ներկալացնելու մասին Պիէսանները կարելի պիտի լինի ձեռք բերել մի որոշ գումարով։ Ուրախութեամբ հաղորդելով այս լուրը մեր դաւառաբնակ թատրոնասէրներին, չենք կարող չցանկանալ, որ ժամ առաջ իրազործէր պարոնների այս մտադրութիւնը, և մասսմբ թեթեանացին գաւառական ներկալացումների դժւարութիւնները, որ պատահում են ամեն մի ներկալացյան ժամանակի մասնաւանդ երբ հարցը թիւ պիհսամ ներկալացնելու մասին է։

Յաջողութիւն ենք ցանկանում։

# ԳԱԻԱՌԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

## ԱԽԱՐՏԻԱՅԻ ԳԱԻԱՌԻ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՅ ԳԻՒՂԵՐԸ

(Սիւլվիս, Մեծ-Պատաշ, Պղտի-Պատաշ, Պուլովիս, Օրալ, Խէկ, Սաղէկ, Ճալա)

### Յ. Մ Ո Ւ Ր Ա Տ Ե Ա Ն Ց Ի

Սրբնից մի չորս տարի առաջ, երբ ես ուսուցիչ էի Ախարտիալում, կամենալով մօտիկանց ծանօթանալ դաւառի հայալնակ զիւղերի և նրա բնակիչների անտեսական դրսութեան հետ, միտքս զրի երբեմն-երբեմն ապատ միջոցներիս այցելել գաւառի բոլոր մօտակալ հայ զիւղերին, լաւ համոդւած լինելով, որ մարդո իր ապրած ու գործած շրջանի հետ լաւ ու մօտիկ ծանօթ պիտի լինի: Դժբաղզաբար ինձ չաջողւեց տեսնել այն բոլոր զիւղերը, որոնց ևս մտքումս նշանակել էի: Դրանցից հազիւ միան ես կարողացաւ մի քանի ամենամօտիկները միախն գնալ ու տեսնել և տպաւորութիւններս զրի առնել: Յէկ այն օրից մինչև աւաօր մի քանի տարի է անցել, բայց կարծելով, որ զես էլի անօգուտ չեն լինի նրանք, աւելորդ չեմ համարում նրանց աւաօր լուս աշխարհ հանել:

Սիւխլիում—Ախարտիալի ամենամօտիկ զիւղն է: Դանուում է Սրբասթումանի ճանապարհի վրաց, քաղաքից Յ վերստից մի քիչ աւելի հեռու: Դիրքը՝ բարձր և քարքարոս, յալուրի տակին, ամֆիթէատրի ձեռվ շինածածք, Փողխով զետի աջ կալմք: Երկում էր, որ մի ժամանակ բաւական մեծ զիւղ է եղել, մինչև անգամ, ինչպէս մեզ պատմեցին, ալզսեղ տաճկաց փաշա է եղել նստելիս: Անցած փառքի մնացորդներից մինչև աւաօր էլ վկայ է մնացել զիւղի կիսաւեր, բայց փառաւոր ու կամարակալ մըզկիթը՝ լուսինը վրան: Հայերը զաղիթել են ազդանեղ 30-ական թւերին, Արդրումի նահանգի մի քանի զիւղերից (Արծթեցիք, Հնձեցիք): Պաշտօնապէս նրանք 44 տուն հայ էին, բայց իսկական զիւղի հաշւով նրանց տների թիւը 55-ի էր հասնում, բոլորն էլ հայ կաթողիկ: Հայերի հետ համարեա միատեղ միենան զիւղում մնում էին և 39 տուն թուրքեր, որոնցից 6 տունը բոլորովին զիւղի մէջ, հայերին մօտիկ, իսկ 33 տունը— զիւղից մի քիչ դուրս, ½ վերտառչափ հեռու, ճանապարհի վրա:

Հողից շատ գամնգատում էին, հոգաչին ինողիրը նրանց մօտ վաս վիճակի մէջ էր<sup>1)</sup>). հող քիչ ունեին. իրանց առելով՝ տան գլուխ մօտաւրապէս մինչեւ  $1\frac{1}{2}$  դեսետին. Հոգերի մի մասը պետական, երեք մասը կալւածական. կալւածատէրերը հայ կաթոլիկներն էին, իմ զնացած տարչն գիւղին մօտիկ մի վիճելի հող կար. ասում էին, թէ իրանցն է, բայց դու չէին ստացել և զործը մէջ էր. Հոգի կողմից չափից դուրս անհայտնձելի վիճակի մէջ էին. Հասկանալի է, թէ որքան խեղճ բան է—տան զլուխն  $1\frac{1}{2}$  դեսետին հողը. ակղքան տեղը գիւղացու որ մէկ կարիքին և ցանքին պիտի բաւականանար. Արօտատիզ հօ իսկի չկար համարեա, եթէ չաշենք գիւղի լետեն ընկած ժարուերը, որ համարեա չը ու մերկ քարեր էին. Հոգը, իրանց առելով, անքան բերբի չէր. 1—7 է տալիս եղել. կազմութիւնով՝ զլիաւորապէս աւագու:

Գլխաւոր բերքերն էին ցորեն, գարի, սիմինգը, «քիւշնա», վերջինս աւելի անառուների և մասամբ իրանց ուսիւլու համար:

Հնդկէններից աւելի շատ ցանում էին ոսպի Հացարուսերից ցորենը աւելի զործածական էր իրանց համար. խոկ սիմինգը ծախսելու համար էր, ծախսելիս են եղել աւելի թուրքերի վրա, որոնք հաներից աւելի են սիմինգը գործածում:

Գիւղի բոլոր բնակիչներից մօտ 10—հոգի միան ունեին իրանց համար սեփական պարտէղ, գետափի միացած բոլոր պարտէզները կալւածատէրերն էին:

Մեզւապահութիւնը՝ շատ տարածւած էր նրանց մէջ. 40 վերթակից աւելի ունեցող չկար, սովորաբար պահելիս են եղել 20—30 վերթակի Մեզրը ծախսելիս են եղել քաղաքում և գիւղերում:

Արհեստներից ամենից աւելի տարածւած էր նրանց մէջ կաւէ աման. ներ շինելը, Բրուսոները զլիաւորապէս կանաչք են:

Շատ քիչ պարապում էին և կտաւագործութիւնով (շալւար, կտաւ). բայց միծ մասը քաղաքից էին առնում:

Գիւղի ողը մաքուր էր, իրանց առելով՝ ձմեռը առաջւան պէս անքան դառնաշունչ չէ վինում. քաղաքից 5 աստիճանի չափ աւելի ցուրտ. Առաջ եղել է ջերմը. բայց իմ զնացած ժամանակին առնում էին որ էլ չէ վինում:

Տուրք վճարելիս են եղել վորով՝ թագաւորական («մախտօն»), տարէն 2 անգամ, մարտին և նոյեմբերին, ամեն անգամին 50—60 ոտրին և բերքով՝ կալւածատէրին («բահրան»)—27.ից 1-ը: Բանջարելինների և հողեղինների համար, իրանց առելով՝ չափ կտրւած չէր. սալիս են եղել

<sup>1)</sup> Այս լուրածում հեղինակը շարունակ Բակերի անցեալ և երբէ մեռու անցեալի եղանակով է խօսում, բայց աղ անցեալը 4 տարի լինելով՝ նաև ներկան պիտի հասկանալ:

անպէս, աչքի չափով, կալւածատիրոջ և հասարակութեան ներկայացուցիչների որոշման համաձայն։ Սկզբներում աէրութեան տուրքը շատ աւելի է եղել, իրանց ասելով՝ մի քանի հարուստ տներ («փամբա») վճարելիս են եղել տարեկան նուն իսկ մինչև 25 րուբլի։ բայց վերջերս իրանց խնդրքի վրա տուրքերը իշեցրել են։

Համարեա իւրաքանչիւր տուն ունէր կթան՝ մի-մի կով ու գոմեչ (ամառակ)։ շատերն ունէին և աւանակ՝ «բոստաններն» դնալ-դնալու և բանջարեղինները կրելու համար գլխաւորապէտ։

Ունէին մի կաթոլիկ վարդապետ։

Մեծ-Պամաջ—Ախալցիսակից 6 վերտանեուու 24 տուն, սրանք էլ առաջինների հետ միաժամանակ զաղթած են Սրբաւում Թորթում զաւառից։

Մօտաւորապէս 150 գեսհատնից աւելի հող ունէին իրանց ձեռքը։ զբանից 4 մասը պետական, 1 մասը՝ կալւածական։ Սրանք էլ էին հողի քչութիւնից գանդաւում։ Հողը ծանր ու քարքարոս կազմութիւն ունէր։

Բերքերն էին՝ ցորեն, գարի, սիմինդր ու կարտոֆիլ։ Պարապում էին և պարակապանութիւնով (գլխաւորապէս «ճանճուռ»), խնձոր և ասանձ) ու բանջարեղինների, մշակութիւնով։ Պարտէղները—գիւղացիների սեպհականութիւն էին։ իրանց փողով էին դնել։

Ամենքը մալ ունէին, ոչխար, կով, եղ։

Տուրք վճարում էին՝ պետական—մօս 300 րուբլի, իսկ կալւածատէրին՝ բերքով, 14-ից մէկը։ Անտառից փակար կրիելու համար էլ մասնաւոր կալւածատէրերին վճարում էին տարեկան տան զլուխ 5-ական րուբլի։ Պետական արօտատեղերի («եալւաղ») համար էլ տարէնը առանձին 50 րուբլի էին վճարում։

Գիւղի վրա հասարակական պարտք չկար մնացած, բայց ամեն մի գիւղացի քիչ թէ շատ մասնաւոր պարտք ունէր։

Առաջ ունեցել են ուսումնարան, բայց իմ գնացած ժամանակը՝ չունէին։ Փահանակ ունէին։

Նրանից մի  $\frac{3}{4}$  ժամի չափ հեռու մօս 100 տան չափ հայ կաթոլիկներ էին մնում, գժբաղղաբար ոչ դրանց կարողացաւ տեսնել և ոչ էլ դրանց գիւղը գնալ։

Պատի-Պամաջ, Ազգակը 25 տուն հայ էր մնում։ դրանք էլ Թորթումից էին գաղթել։ Հողի մեծը թագաւորական, մի մասը կալւածական։ Տուրք վճարում էին՝ տարեկան տան զլուխ—թաղաւորական 12 րուբլի, իսկ կալւածատէրին՝ 5-ից մէկը։ Սրանց թէ բերքերը և թէ տնտեսական միւս պալմանները միւսների պէս էին։ Սրանք էլ ունէին իրանց համար առանձին քահանակ։

Ղուլախիս։ Արդանդ ընդամենը 3 տուն հայ էր մնում, որոնցից 1-ը լուսաւորչական և 2-ը՝ կաթոլիկ։ Հողը պետական էր, որանց հողը ողական

չեր, Բերքերն ու պարագմունքը նոյնն էին, ինչ որ միւս գիւղերուն՝

Օրալ: Ակտակ 15 տուն հաչ կար, մի և տուն էլ թուրք: Հողը կալ-  
ւածական էր: Ակտակ նոխալէս կալւածատէրը հաչ կաթոլիկ էր: Բերքերն  
ու ժողովրդի կեանքի պահմանները նոյնն էին:

Խէկ: Յ տուն հաչ կար, մի քանի տուն էլ թուրք: Սրանց պահման-  
ներն էլ մինոյնն էին.

Սաղէլ: Ակտակ 30 տուն հաչ բնակիչ կար (պաշտոնապէ՞ 21 տուն):  
Գրանք էլ Արզուամի նահանդի Հինձք գիւղից էին: Սկզբում նրանք շատ  
են եղել, բայց վերջը նրանցից մի հատւած զնացել է Ախալքալաքի (Մեծ  
Խանչալ) կողմերը:

Հողը կալւածական: Գիրքը վատ էր. զտնւում էր չոր, քարքարոս  
ու անգետ աեղում: Խմելու լաւ ջուր չունէին, բայց օդը՝ իրանց ասելով  
լաւ էր ու բարեխառն: Հողը բերքի էր, միան ջրի պակասութիւնն էր  
վնասում:

Բերքերն էին՝ ցորեն և զարի զիխաւորապէս, ցանում էին և կար-  
տոֆիլ, բայց քիչ, աւելի իրանց համար: Ունէին և պարտէզներ: Մալ-  
ունէին ամենքը, բայց սրանց տնտեսական վիճակն էլ միւսների պէս ան-  
նախանձելի պահմանների մէջ էր: Կալւածատէրին վճարում էին 10-ից  
մէկը թէ երկրադործական բերքերից և թէ պտուղներից: Առաջ 6-ից  
մէկն է եղել:

Սրանք էլ առաջ ունեցել են ուսումնարան, բայց իմ զնացած տա-  
րին չունէին: Քահանակ ունէին: Նա էր հովտում և վերև կիշւած Դուլալիս  
Օրալ և Խէկ գիւղերի հայերին:

Ճալա—քաղաքից մօտ 4 վերստ հեռու, զէսի արեելք: Հողերի մի  
մասը պիտական, երկու մասը՝ կալւածական: Գիրքը բարձր էր և բաւա-  
կան գեղեցիկ: միւս բոլոր վիշտած գիւղերից ամենալաւ դիրք ունէր:

Սրանց բերքերն էլ նոյնն էին, ինչ որ միւսներինը, ցորեն, սիմինդր  
սկարամում էին և պարտէզանութիւնով ու բանջարեղինների մշակոթիւ  
նով: Գիւղացինների ասելով հողն աչնքան բերտղ չէր: Երբեմն եղել է, որ  
բոլորովին չէ բերել:

Կալւածատէրին վճարած տուրքն էր—15-ից մէկը՝ բերքով:  
Գիւղում քահանակ չունէին: Քաղաքի քահանան էր նրանց հովտում  
Սրանց վիճակն ու պահմաններն էլ միւսների պէս էին:

Կարագրւած բոլոր գիւղերն էլ զտնւում են քաղաքին (Ախալցիս)  
և իրար շատ մօտիկ: Բոլոր գիւղերն իրարից 4 վերատից աւելի հեռա-  
թիւն չեն ունենաւ: միայն ձալան է, որ աւելի հեռու է մնացել միւսներից:

Գիւղական բոլոր ճանապարհները շատ վատ էին: արսուս Ախալցի

խալից առն կող ը հաւարեա միան ձիով կարելի էր գնալ. սավավ շատ դժւար. ազնքան զառիվեր ու անհարթ էր. Ոչ մի տեղ գիւղացիները մի մարդապարի ճանապարհ չեն շնոր. Սավի տեղ ալդ անհարթ շափոներով բանեցնում էին սահնակածն սավեր առանց ակերի. Երեսում էր, որ ժողովուրդը բաւական անփոթ ու ծով էր իր սեփական բարեկեցութեան մասին:

Գիւղերի զիրքը բարձր էր քաղաքից. շատ աւելի բարձր նրանց մէջ էլի ամննից ցածրը Սիւխլիսն էր, բայց նա էլ քաղաքից բարձր զիրք ունէր. Համարեա բոլոր գիւղերի տեղը անհարթ ու խորդուբորդ էր. մի քիչ աւելի գեղեցիկ էին ձալան ու Սիւխլիսը. Մի քանիոը նրանցից շինւած էին ամֆիթէատրի ձեռով աստիճանաբար բարձրանում էին դէպի չետեսի կողմը. Դիւղերի տեսքը տիսոր էր և մի ճնշող տպաւորաթիւն էր թողնում ալցելով վրայ. աւերակների էին նմանւում, չոր և ցամաք, քարքարոտ, անմաքուր, աղբակոտներ տների առաջ. նեղ, ծուռ փողոցներ. Մի ծառ չկար գիւղերի մէջ. պարտէջներն գիւղերից դուրս էին. թէն ոչ անքան հեռու, մօտակայ ձորի կամ գետակի ափերում. Տներն իրար շատ մօտիկ. շինւած քար ու ցեխով (սալաքարերը ցեխով շաղախած). ցած ու կտուրով, որով և վիշեցնում էին Վրաստանի հին տները և նոյնպէս—իրանց պատմելով—Արգրումի հալքինական տները. Տներից մի քանիսը թէն պատուհաններ ունէին, բայց երեսում էր, որ նելուր շատ մութ էր:

Մի գիւղում մեղ տանում են քահանակի տունը. Մտնում ենք ներս՝ ծածկւած սրահի մէջ. Մեր ուղեցուցը առաջ է գնում, բայց չի երևում. Բաց է անում զուռը, ձանուը լսում է, բայց ինքը չի երևում. Վերջապէս քիչ լոց է երևում. մտնումնենք մի ուրիշ բաժանմունք, որ հիւրասենեակն է. Կարծիս մի անլուս գոմ լլնի. մութ անկիւնում նստել է անազին, երկար միրուքով մի վիթխարի մարդ, որ չնալած իր մեծ մարմնին, քիչ էր մնում, թէ աչքը չտեսնէր. Նախում ես վեր—մի փոքր երթիկն է միան լոյս տալիւ. ոչ մի պատուհան. լատակը գետին. թաց և խօնաւ բայց այդ բոլորը չե. մօտիկ լսում են հորթերի և մալերի փոնչոցն ու որոճալու ձաները նրանցից տարածող գարշանոտութեան հետ Նախում էք, որ սենեակը կցւած է ախտուին. միան մի թեթև փացտէ վանդակապատն է մեղ մալերից բաժանում. Մենեակի երկու կողմը ցածր թախտեր էին շարւած պատի ամրող երկանութիւնով. Թախտը տախտակէ մէջք ունէր և վրան մի քանի կարպեա ու ամինդարո փուած. Զիւրի համար գրանց վրայ ներինակ են զցում:

Ահա ծածկաստանի մեծ ու կլոր սեղանով բերում են և ուտելիքը. սեղանը ազնքան մեծ է և ծանր, որ մի մարդ հազիւ է զրկում. Ափսէի վրայ գրել են գոմէշի կարագ, բայց շատ մաքուր շինւած, թել-պանիր

(աճիւիլ) մաքուր, աղ զրած և համով. չորչած ու կտրտած սեր (աճնքան համով չէ լինում և առաջին անգամ դժւար է լինում իմանալ, թէ ինչ է). հացի տեղ էլ լոշ Այս կողմերում, ինչպէս երևում է, ամենքը լոշ են գործածում, քաղաքումն էլ շատերը զեռ աղդ են բանեցնում: Սեղանի վրայ բերում են իրանց ձեռագործ երևարքիչներ՝ իբրև անձեռնոցիկ: բաց լացւելու համար ջուր չքերին ոչ առաջ և ոչ էլ հացից վերջը: երեխ սրանց մօտ չկաէ արդ սովորութիւնը:

Գիւղերը, չնակելով որ լեռնալին դիրք ունէին, մեծ ձորերով կտրտած, բաց աճնքան ջրաբաշխ չէին: Դրա պատճառը, երեխ, անստառ չունենալն էր: Թէս մօտիկ մացաներ կան, բաց խկական անստառը հնուու սարերումն է: Զրերը ազբիւրներ են, բաց աճնքան համով չեն:

Հողը չորացած, անսապատի գոն էր կրում: Շատ տեղ թէ հողը և թէ յալուերը առանձին գոններ ունին—կարմիր, դեղին, մոխրագողն: Հողը տեղ տեղ քարերով, խճերով լիքն էր: Խոտ մինչև անգամ քիչ էր դուրս եկել:

Ասում էին, որ ձմեռը ձիւն շատ է գալիս: Խոկ ամառն էլ ինչ խօսք որ ալդքան բարձր տեղերում բաւական հով կը լինէր:

Տների բակում սալ չտեսակ, ճանապարհին միտին տեսակ սահնական սապեր, Գարնան ժամանակներ էին, մարդիկ դաշտերում վարում էին «ջղաներով»: «Ջղան» նրանց գութանն էր: արօրին շատ նման էր, միտին առաջը երկու ակ ունէր: Հայերն ու թուրքերը միտունակ «ջղան» էին բանացնում: Հերկելիս «ջղան» վրայ երեք կամ երկու հոգի էին լինում: մինը՝ մածկալ, միւսը՝ առաջին լուծվար, երրորդը՝ լիքաւոր: «ջղան» արօրի պէս մի լծով չի կարելի տանելու: Շորս զորդ եղ էին լծիւ Ունէին և արօր (իրանց բարբառով «աւարօր»): Արօր ը, իրանց ասելով բանեցնելու են եղալ աւելի աշխանացանի հերկերին, ան ինչ խմ զնացած ժամանակ, որ գալուն էր, համարեա ամեն տեղ «ջղանով» էին վարում:

Խմ ման եկած ժամանակը դիւղերում շատ քիչ աղամարդ էր պատահում: ամենքն էլ գաշտումն էին: Իրանք ակնարկում էին, որ գործի ժամանակ է, հիմա ոչ ոք չի լինում գիւղում: Մի գիւղում ինսք մի տիրացուից, որ մեղ տեղեկութիւններ տակ իրանց գիւղից ու կեանքից: Տիրացուն իր կողմից խնդրում է, որ մի ուրիշ ժամանակ, երբ աղամ կը լինի, ամեն բան կը պատմի, խոկ հիմա չէ կարող, շտապում է եղների մօտ: և իրաւ զաշտն էր զնում: Մի ուրիշ գիւղում զնում ենք քահանակի տունը: ասում են, որ ալդիւմ աշխատում է: Մի ալ գիւղի կաթօնիկ պատւելինո նոնպէս տանը չէր: նա էլ պարտէվից էր գալիս, մի խօսքով ամենքը բանի ու գործի վրայ էին: Գիւղերում աւելի կահագք էին երեւում: Նրանք խումբ-խումբ նստած մի տեղում՝ տանը կամ դուրս՝ աշխատում էին:

Երեխաններ քիչ էին երեսմ, ոչ մի տեղ չը տեսանք նրանց խաղալիս, շատերը տանն էին, թէն ժամանակը ցուրա չէր. մի քանի մեծ տղայք դաշտերում եղնափառ-առջևութիւն էին անում. մի-երկուս աղբիւրների զլիքն էին, մի քանիսն էլ հովտութիւն էին անում:

Հաւերը լաւ ու խաղաղ չարաբերութիւն ունէին իրանց դրացի թուրքերի հետ. Ազգ թէ իրանք էին ասում և թէ ազգէս էլ երեսմ էր, թէն թուրքի հովային ու միւս տնտեսական պալմանները հավերից վատ չէին, բայց և աճնպէս նրանք ոչ միան մոտոր և կուլտուրական տեսա կէտից, այլ և զուս տնտեսական կողմից բաւական լիտ էին մնացել հաւերից: Հաւերը նրանցից թէ աւելի աշխատասէր էին և թէ աւելի աչքաբաց, իսկո՞ն երեսմ էր հայերի գերազանցութիւնը նրանցից:

Երգ, ձան աճնքան չեր լսում, մի տեղ միան հօտազը մի ինչ որ «զուռնա» էր հնչեցնում բլրակի զլիքն. մի տեղ էլ հերկող զիւզացին մի անչորք «հօրօվէլլ» էր երգում: Թէ բնութիւնն և թէ ժողովուրդը մի մեռած ապաւորութիւն էր թողնում, կենդանութեան ձան չը կար: Սկսած ընտանի կենդանիներից, թուչուններից-բոլորը կարծէք քնած էին, թէն դարտնն արդէն մտել էր, բայց զեռ ոչ մի տեղ չէին երեսմ բացւած ծառերը, ալիքիներում զեռ էլլի կոր ծառերը մերկ ու տփուր կանգնած էին, մաճաւանդ «ճանձուլները», որ ամենից շատ էին: Խոսը դեռ նոր ուր էր մկում կանաչել, և շատ քիչ էր: աղբիւրներն էլ աճնքան չէին վազում, տեղ-տեղ հազիւ մի երկու ծորում: Թէ զիւզերում և թէ զաշտում չներն անդամ քիչ էին, թէն զեռ սարը զնալու ժամանակը չէր: Արագի ձանիը, որ շատ բնական է լսել զիւզերում, նոչնպէս աճնքան չէր լսում, երիի հաւելն քիչ էին պահում: Խոկ դաշտերում հօ երգող կամ ընդհանրապէս վայրի թռչուններ չէին պատահում, մի երգ չէր լսում դաշտում: Մի խօսքով բնութեան մէջ մի կատարեալ մեռելութիւն էր աիրում:

Հաւ զիւզացիներն իրանց արտաքինով և շորերավ վիշեցնում էին մեր թիւրքահայ հայրենակիցներին: Կոչն շորերը, նոչն ֆէսը զիւզին՝ մի քանիսի մօս «լաշաքով» վայթաթած, մահուրէ կարճ բաճկոնակը վերնից. Նոն վերեը շատ լաճն և ներքել նեղ շալւարը ոտներին. խոկ և խոկ Արզըրումի հայրենական զգեստ: ոչինչ չէր փոխւած: Անփոփոխ էր մնացել և կանանց զգեստը, նրանք էլ հայրենական տարապ վ էին հագած:

Լեզուն՝ հայրենական բարբառն էր. միան վերջին ժամանակներ ընդունել էին մի քանի ոռուերին անուններ ամանեղիների, կարասիք-ների և զգեստների համար:

Արդէն վերեը զիւզերի նկարագրութեան մէջ տեղ-տեղ ակնարկեց, որ այդ բոլոր զիւզերի բնակիչները թիւրքահայ զաղթականներ են, կեած 30-ական թւերին (սկսած 1828-ից) Արզըրումի զիւզերի զանազան

կողմերից—բազուրդի, Բասէնի և ալ զաւառներից, Նրանց բոլորին փախցրիլ են հալրենի աշխարհի բռնութիւններն ու հալածանքը և ընդհան-րապէս թուրքական բէժիմը: Մի կողմից դարեւոր բռնութիւններն ու հա-լածանքը, հալրենի աշխարհի նեղութիւններն և անապահութիւնը, միւս կողմից դրացի խաչապաշտ ոռուների աջող նւաճումները, նրանց խաչա-պաշտ լինելն ու նրանց ձեռքի տակ գանւած իրանց հեռաւոր հայ եղ-րարեների լսած նպատառուոր լուրերը—շարժում են հալածաւած ժողովրդին և հեռացնում նրան իր հալրենի աւերակներից...

Առաջին անգամից ժողովուրդը ճնշող տպաւորութիւն է թողնում, անհետաքրքիր, սառն, անկենդան: Մտնում ենք գիւղը. մէկը չի մօտե-նում, թէե շատ լաւ գիտեն, որ վարժապետ ենք, Մի զարմանալի անկեն-դան սաւոնութիւն էր բուրում ալդ մարդկանցից. ոչ պատիւ, ոչ բարե և ոչ մի հարցմունք: Մեր բարեներին նոյն իսկ շատ թողլ կերպով էին պա-տախանում: Հարցնում ենք մի փոքրիկ բան, մի խօսք, մի տեղեկու-թիւն,—նոյն սառնութիւնն է պատասխանը: Գիւղումն ենք. ուղում ենք իմանալ իրանց քահանակի տունը, որ հեռու չի լինի ի հարկէ, քանի որ խիտ ու իրար մօտ են շինւած: Գիւղացին հեռուից, մատը գանդապ լարե-լով ցուց է տալիս տունը կամ ճանապարհը, առանց տեղից շարժւելու և կամ մի բան հարցնելու: Մէկը չտեսանք, որ ազնքան պատրաստակամ դժուկը, որ իր չօժար կամքավը ուղեկից լինէր մեզ դէպի մեր ուղած տեղը: Ճշմարիտ է զործի մամանակ էր. ամենքը զբարած էին վարու-ցանքով զաշտերում, բացց մենք հօ զտչաերում մարդ չէինք բանեցնում հարցնելու և զործից իետ մնացնելու. մենք գիւղերում մնացողներին էինք դիմում: Ելի տղամարդկանցից մի քիչ տեղի կանաչին էին հետաքրքրում: Հայ-լուսաւորչական գիւղերում դռների առջև անց-նելիս, կանաչք մեզ տեսնելիս՝ ակնածում, ուաքի էին կանգնում և հետա-քըրքիր նալում էին: Մի զիւղում երբ իշանք քահանակի տունը, եկաւ նրա հասակաւոր մեծ աղջիկը. մինչեւ անգամ մեր ձեռքն առաւ, անձան բարենց ու նստեց մեզանից ոչ հեռու: Խօսակցութեան ժամանակ նա լսում էր մեզ և երբեմն մի քիչ քաշւելով՝ ինքն էլ էր մասնակցում: Ազ մի բացառութիւն էր. ուրիշ ոչ մի տեղ կին կամ օրիորդ ալդպիսի հա-մարձակութիւն չբանեցրին:

Մեր բոլոր պտուղների ու զրաւցների ժամանակ մի առանձին համակրութիւն, մի կենդանի հետաքրքրութիւն չտեսանք ոչ մի տեղի թէե մեր խօսակցութիւնը նրանց սրացից հեռու չպիտի լինէր: Անտեղ լիշտում էին Արզուումը, հալրենական տեղերը, իրանց զլիսից անցած-գնացածը հիմիկւակ վիճակն ու պակասները... Տեսնելով նրանց անտարբերութիւնը մարդ քիչ էր մնում, թէ բացականչի, ալս մարդիկ ուղիղ հայ չեն. չըգի-տեմ ինչ են: Նրանց բոլոր աշխարհականողութիւնը կախանում էր կրօնի:

հաւատի, ծէսի մէջ իմ հարցին, թէ ինչն է պակաս իրանց, առում էին, որ ոչինչ պակաս չունին, մի պաս ուսող չունին իրանց մէջը: Եւ այդ բանը նրանք պարձանքով լիշեցին մի քանի տեղում, աւելացնելով որ վիրափիները (աօները) պահում են մաքուր, տիրաժուներ ունին եկեղեցու մէջ, լաւ ձախաւոր նույնպէս: Մի տեղ միան քանանալի մէկը նկատեց, որ աչժմ փոխասացներ չունին գիւղում, և բանի վրայ շեշտեց նա—իբրև գիւղի ամենագլխաւոր պակասի ու ցաւի վրայ Ամեն տեղ—կրօնական ոգի, ամեն տեղ—պատ, ծէս ու եկեղեցին Հայրենիքը, ազգը զրանց համար լսւած բաներ չեն: Նրանցից մի քանիսը այս կողմնը զաղթելուց նետու կրկին շրջել են Արգրում, ալցելել են հայրենական տեղերին, բայց նորից չետ են եկել: Հայրենիքի ու մեր ազգացն կեանքի մասին լուրեր ու տեղեկութիւններ ոչ ոքից չեն ստանում: Իրանց մէջ լրագիր ու նոր գրքեր ստացող ու կարգացող չկար: Երբեմն երբեմն միան քաղաք գալիս, կամ գիւղն եկած ժողովարաններից են իմանալիս եղել թէ ինչ կայ, ինչ չկա աշխարհում, իրանցից դուրսը: Խակ քահանաներ: Նրանք թէն կային, բայց չարժէ նրանց վրայ խօսել: Նրանցից շատ հետու է ժողովրդի վերածութեան գործը: Կթէ ընդունենք անզամ, որ նրանք միւսների չափ աղետ չեն: բայց այս էլ պէտք է ասենք, որ դժւար թէ արդարիսիների օրակ մարդ լուսաւորւի:

Մի երկու զիւղից երեխաններ կավին քաղաքի հալոց ուսումնարանում, այն էլ ամեն մի գիւղից մի-երկու հոգի միան: Դրանք էին այդ թիւած ու անտարբեր ժողովրդի միակ լուսերը:

Մի գիւղում քահանալի տանն ենք իջած: Հայի ժամանակ տանտէր քահանան մեզ առաջարկում է ուսիսւակ կերակուր, պաս օր էր Մենք ընդունեցինք: Մեզ մօտ նստած էր և մի ծեր գիւղացի: ուսիսւակ կերակուրը տեսնելու պէս, նա նկատեց, որ պասը այժմ թեթեացել է, և խոկոն շտապեց դուրս գնալ: Խորը անտարբերութեան ու անկենդանութեան հետ այսպիսի ծեսապաշտութիւն ու ձեսալաշտութիւն էր միան տեսնուում:

## ՆԱՄԱԿ Վ. ԱԳՈՒԼԻՄԻՑ

Ա. ԶԼԻՑԵԱՆԻ

Կան մեզանում հասարակութիւններ, որտեղ հասարակական կիանքը ներկայում իր ազանդակ կողմնարով միանդաման տիտուր պատկեր է ներկաչացնում իբր կոնտրաստ գեռ ոչ հետու անցեալի. Ազգափախների թւումն է վ., Ագուլիսինը, որի համար անցեալ 1894 թւականի վերջը և զույժ ներկայ թւականը ահմոռանալի կը մնան. ալդ թւականը ազուլեցոց պատմութեան ամենատախուր էջերը պիտի կազմեն և իբր նախատինք կը մնան ապագա սերունդի համար: Ալդ թւականը նոցա հումար փորձանաց թւական էր, ամբողջ հասարակութեանը առիթ էր ներկաչացել ցուց տալու իր ով վիճելը և ի մեծ զարմանք ամենացուն մերկացաւ իր տմբողջ բարուական ալանդակութեամբ: Կրողութիւնը ապացուցեց, որ ագուլեաց հասարակութիւնը այլ հասկացողութիւն ունի պատու և աղնաւութեան մասին, որ չկաչ նրա մէջ ուր, միարանութիւն, անկեղծութիւն և միաբան զործունէութիւն. Փակտերը ապացուցեցին, որ հաչ հասարակութիւնը գտնուում է զեռ ան աստիճան զարգացման վերալ, որ չդիտէ զնահատել իր համար աշխատողին, այլ ընդհակառակը դիտէ չարաչար ոտնակոխ անել նոցա ի զղուշութիւն ալրոց ևւ, ճշմարիտ, մօտիկ անցեալում կատարած զառն փորձերը, հաւանական է, որ չեա մզեն ասպարէզից գետի հասարակական դորձերը փոքր շատէ սէր ունեցողին, քանի որ հասարակութիւնը ապերախտ է դէպի ալզափիսիները: Եւ ահա ալդ հանդամանքը առաջ կը բերի անպիսի գործիչներ, որոնց միայ նպատակն է պղոտը ջրում ձուկ որսալ:

Այս անցեալ թւականի վերջում բացւեց ազուլեաց հասարակութեան մէջ թաղցրած վերքը, որից երեաց, որ նրա մարմինը աչնքան էլ առողջ չէ, ինչպիս ալդ կարծում էր: Եւ ալս ան հասարակութեան մէջ է թագցընուում, պահպանուում, որը ենթաղրուում էր, թէ զինւած պիտի վիճի բարմատեսակ փորձերով մարանչելու մի երեան եկող ամեն մի հասարակական ախտի հնառ եւ զեռ շատերը ան միամիտներից էին, որ մինչեւ վեր-

չին օրերա համոզւած էին ագուլեցոը օրինակելի լինելու մասին, աչքի առաջ ունենալով նրա արտաքին փայլը, սական ներկազումն զպա խոստավանում են, մոլորւած են եղել, և աչքն են նկատում, որ այդ արտաքին կեղեի տակ շատ անմիտիթար բաներ են թագյրած:

Ագուլեցին, ճշմարիտ է, վաճառական ժողովուրդ լինելով, գանուում է ամենուրեք, սկսած լուսաւոր կենդրուներից ինչպիսիքն են Մոսկւա, Թիֆլիս և ալլն, մինչև ամենալսուլ, մութ անկիւները, ինչպիսիք են Պարսկաստանի զիւղերը և քաղաքները: Սական, կարծես թէ այդ բոլոր տեղերում, բայց վաճառականութիւնից, ուրիշ ոչ մի բանով չեն հետաքրքրել, անքան անմշակ են վերադարձել հալրենիք: Դերկազնուն նրանց մէջ կատարւում են աջնակիսի զղւելի երեսութներ, որ պատիւ չեն բերում ոչ մի հասարակութեան, սական ագուլեցիք ալդ ամենի վերակ նալում են անտարբեր կերպով, կամ շատ շատ կ'ասի ամեն մէկը թէ պէտք է այսպէս կամ այնպէս անել, խոկ ինքը ամենաչնչին նեղութիւն անդամ չի կրի միջամտելու դործին, օգնել մի բան իրադործելու համար, ծիցդ նման ՕՅԼՈՎԵ-ին, բայց այն զանազանութեամբ, որ վերջինս աւելի բարի էր, քան թէ մերոնք, որոնց չի կարելի այդ լատկութիւնը վերադրել: Եւ չնորիւ այդ անտարբերութեան է, որ այսօր չարութիւնը թագաւորում է նրա մէջ և օր ըստ օրէ միծ ծաւալ է ստանում: Հնորհիւ հասարակութեան անտարբերութեան է, որ չարութիւնը այնքան համարձակութիւն և անպատկառ կերպարանք է ստացել, որ պատրաստ է հիմնալատակ անել ամեն մի սրբութիւն: Ալս մարդիկ իրենց զգացմունքներով և ձգտումներով այնքան մանրացել են, որ պատրաստ են իրենց չնչին շահի կամ վիրաւորանքի համար ստի տակ տալ, կործանել այնպիսի հասարակական հիմնարկութիւններ, որոնց կանգնելու վերաէ մեր նախորդները այնքան ջանք, այնքան բարուական և նիւթական ոչ են զործ զրել: Ալզպիսի մի լանդուգն և վրբքալ արւել էր դէպի մի պատկառելի հիմնարկութիւն, որպիսին ուսումնարանն է և նրա միջի գործողները: սական քննութիւնը ցուց տեց, որ դա անխիզճ, ստորաքարչ արարածների արածն է, որոնք արել են լոկ իրենց կիրքը, վրեժը առնելու այս կամ այն անձնաւորութիւնից, ունենալով ինչ ինչ հաշիւներ վերջինիս հետ: Ինչ կարծիք, որ ալդ տեսակ մութ անձնաւորութիւնը իր ով լինելն էլ խուարի մէջ է թաղցնում: Դիւղապատկան շատ զործեր էլ կան, որտեղ ամբողջ գիւղի շահն է ուսակիս լինում, զործեր են տեղի ունենում, որտեղ հասարակութեան պատիւն է ցեխի հետ հաւասարում, խոկ մենք, փոխանակ պաշտպան հանդիպանալու նոցա կամ պաշտպանելու նոցա, որոնք քաջութիւն են ունենում այդ անելու, մենք լուռ հանդիսական ենք լինում նոցա արածներին և միան փառք ենք տալիս Ասածուն, որ մեզանից խւաքանչիւրին ազատ են թողնում: Սական այդպէս չեր գիւղը մի քանի ժամանակ առաջ-

կային թէ հին և թէ նոր սերունդներից ներկազացուցիչներ, որոնք արթուն հովհանք նման հսկում էին, որ չարը այնքան էլ զլուխը չբարձրացնի, իսկ ներկապումս, երբ հներից լաւերը հրաժեշտ են տւել աշխարհին, իսկ նորերն էլ, հայրենիքից գուրս գտնելով, անկարող են նրա ցաւերին դարման անելու, ներկայ սերունդը անկարող է ինքը իրեն կառավարելու:

Ուրեմն ինչ պիտի վնի այս տիտուր իրազութեան վախճանը. թողնել, որ ազգպէս ընթանայ կեանքը. Ծայց այդ անտանելի է, և անկարելի է համբերել երկրի զրութիւնը. Ուստի զիմում եմ այն բոլոր մարդկանց, որոնց մէջ զեռ չի մարել կայծը մարդասիրութեան, ազնւութեան, սէրդ դէպի հասարակական զործունէութիւնը, զինւել չարութեան դէմ և արմատախիլ անել դրան, ապա թէ ոչ, չնորհիւ մեր անտարբերութեան, ամենայն ինչ պատրաստ է ստնակոխ լինելու:

## ՆԱՄԱԿՆԵՐ ԱՆԳԼԻԱՅԻՑ

Վ. ՓԱՓԱԶԵԱՆՑԻ

### II

Եւ իոկապէս, այնքան ամայի են լինում կիւրակի, օրերը և ոնդոնի փողոցները, որ մարդ երբէք չէ կարծում թէ այդ քաղաքը աւելի քան հ միլիոն բնակիչ ունի։ Երեկւակ կենդանութիւնն ու աչօրւակ ամակութիւնը մեծ կոնտրաստ են կազմում։ Օմնիք ռաներից հազիւ մի քանիսներն են շրջում, այն էլ մողովրդեան դեպի եկեղեցի առնելու համար, կառքեր քիչ են երեսւմ։ Մագաղինները թէև իրենց սպրանքները միշտ ի ցուց հանած ունին, սական բոլորն էլ կողաւած են։ Փակւած են լիովին բոլոր սրճառներն ու դարիջրառները, այնպէս որ, մենք, ճաշելու համար, սոխաւած եղանք մտնել մի մեծ հիւրանոցի բեստորանը և չորս հոգու մի անդամակ թեթև ճաշի համար 15 ֆր. փող դուրս տալ.

Ժամ 10-ից սկսեց զանգահարութիւններ, բայց զրանք ոչ մննուսն են և ոչ էլ ականջ քերող ու խլացնող։ Մի տեսակ մուզիկա են կազմում, որովհետև գուրս են գալիս բաղմաթիւ զանգապան մեծութեանը զանգավներից, որոնք ճարպիկ ճեռքերից հնչւելով, արտազալտում են ներդաշնակութիւն, ինձ թմբց, որ Ա. Պօղոս մայր եկեղեցւու զանգակները մի եղանակ էին ածում ժընէւի Ա. Պետրոս եկեղեցւու զանգակները—լանակ եմ լսել—նւազում էին շէլցարական լաբոնի ոկով երի վերադարձ եղանակը։

Մանում ենք Ա. Պօղոսի մայր եկեղեցին աչդպիսի մի ախործելի երաժշտութեան տակ։ Հսկաւական շէնքը, որ դրսից կլորներ է կազմում, շինւած է կատարելապէս կորճթական ոճով, Կորնթական սիրուն—նկար-շական սիւները իրենց ծաղկալից զլուխներով զարդարում են շէնքը թէ դրսից և թէ ներսից։ Ճակատը, որ մի վեհափառ լան կործնթական նախազաւիթ է կազմում, իր դիրքովն ու բարձրութեամբ պատկառանք և

աղղում մարդու։ Միջին վիթխարի դուռը փակ է, բացւում է միմիայն թագուհու համար, որի արձանը գտնւում է և կեղեցւու հանդէպն իսկ։

Ենքը կատարեալ բաղիլիք է, երեք երկար ու խոր նրբանցքներով (ոչ), ահագին տարածութեամբ ու դլուխ պատցնող բարձրութեամբ։ Մի ծալրից մինչև միւս ծալրը նա լինւել է լան կամարների վրայ որոնք կանդնել են երկու շարք հաստ սիւների զվարին, ալզ սիւները լոլորն էլ բացառապէս՝ կորընթական են։ Նքեզութիւնը կատարեալ է, և երին մասը բաժանւած է հասարակութեան նստած տեղից և տաեանն է կազմում խորքում երեսում է սեղանը խաչկալով, մի խաչելութիւն և մի քանի աշտանակներ, բայց վերին աստիճանի չքելութիւն կերտաւածքի մէջ, չորս օձածե կորընթական գրանիտեալ սիւներ կրում են իրենց մէջ խաչելութիւնը և իրենց գլխին Քրիստոսի բարձր արձանը։

Ատեանի երկու կողքի նրբանցքները (ոչ) երեխ խորաններն են, որովհեան գրսից նրանք ծածկւած են վարագուբներով և փակւած վանդակապատ դաներով։ Մէջ տեղի նրբանցքի երկու կողքին շինած են օթեակներ ալնւականութեան և թագաւորական տաճ համար, խակ քիչ առջնուած երգեցիկ խճիք և քահանաների տեղն է, երկու կողքում, բարձր դիրքով գրւած են երկու ահագին զաշնամուրներ, որոնք մեր մանելուն պէս սկսում են մի խուլ, ջրի կլկլոցի նմանող լուզիչ երածշառութիւնը։

